


ԼԻԼԻԹ ԵՐՆՋԱԿՅԱՆ

ՌՈՒԲԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ
ԱՇԽԱՐՀԸ

ԿՈՄՊՈԶԻՏՈՐԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԸ



Նվիրում եմ
Ռուբեն Սարգսյանի և Իրինա Զոլոտովայի
լուսավոր հիշատակին



НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ИСКУССТВ

ЛИЛИТ ЕРНДЖАКЯН

МИР РУБЕНА САРГСЯНА:
КОМПОЗИТОР И ВРЕМЯ

THE NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF ARTS

LILIT YERNJAKYAN

THE WORLD OF RUBEN SARGSYAN:
COMPOSER AND TIME

Ереван Yerevan
Издательство «Гитутюн» "Gitutyun" Publishing House
2025 2025

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԼԻԼԻԹ ԵՐՆՋԱԿՅԱՆ

ՌՈՒԲԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՇԽԱՐՀԸ:
ԿՈՄՊՈԶԻՏՈՐԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԸ

ԵՐԵՎԱՆ

«ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2025

Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Գիտական խմբագիր՝ արվեստագիտության դոկտոր,
պրոֆեսոր Աննա Ասատրյան

ՀՏԴ 7.071.1
ԳՄԴ 85.31
Ե 916

Երնջակյան Լիլիթ
Ե 916 Ռուբեն Սարգսյանի աշխարհը. կոմպոզիտորը և ժամանակը /
Լ. Երնջակյան. – Եր.: Գիտություն, 2025. 180 էջ:

Գիրքը նվիրված է կոմպոզիտոր Ռուբեն Սարգսյանի (1945–2013) երաժշտական
աշխարհի, նրա արվեստագիտական ինքնության լուսաբանմանը: Քննարկ-
ված են կոմպոզիտորի բազմաժանր ստեղծագործությունների ոճական-գեղա-
գիտական հիմքերը՝ ժամանակակից երաժշտարվեստի բազմազան գեղար-
վեստական ուղղությունների լույսի ներքո:

Աշխատանքը հասցեագրված է «Նոր երաժշտության» հարցերով հետաքրքր-
վող մասնագետ-երաժիշտներին և ընթերցող հանրությանը:

ՀՏԴ 7.071.1
ԳՄԴ 85.31

ISBN 978-5-8080-1576-0

DOI: 10.54503/978-5-8080-1576-0

© Երնջակյան Լիլիթ, 2025

© ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ, 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ	6
Գլուխ I ԿՈՄՊՈԶԻՏՈՐԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԸ	10
Գլուխ II ՌՈՒԲԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ «ՆՈՐ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ» ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ	20
Գլուխ III ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՄՈՆՈԴԻԱՅԻ ԵՎ ԱՎԱՆԳԱՐԴԻ ԱՌՆՁՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌՈՒԲԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ	48
Գլուխ IV ՄԻՄՖՈՆԻԱՆԵՐ	76
Գլուխ V «ԻՄ ԺԱՄԱՆԱԿԱԿՅԻՆ»	91
Գլուխ VI ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ «ՆՎԻՐՈՒՄՆԵՐ»	107
Գլուխ VII ԺԱՄԱՆԱԿԸ ԵՎ «ՍԵՎ ՊԱՐԱՀԱՆԴԵՍ»-Ը	127
ՎԵՐՋԱԲԱՆ	134
РЕЗЮМЕ	141
SUMMARY	148
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	155
ՌՈՒԲԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ	160
ՊԱՐԳԵՎՆԵՐ ԵՎ ՄՐՑԱՆԱԿՆԵՐ	163
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆԵՐ ԵՎ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ	163
ՁԱՅՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ (ԴԻՍԿՈԳՐԱՖԻԱ)	164
ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ	165

ՆԱԽԱԲԱՆ

«Ես սիրում եմ ժամանակը... այն բոլոր արարումների ելակետն է: Ժամանակը փոփոխություն է ենթադրում (հեյլաբար՝ Պապճառ), շարժում (հեյլաբար՝ Տարածություն և Կյանք): Ժամանակը մեզ հասկանալի է դարձնում Հավերժությունը՝ հակադրվելով նրան»:

Օլիվիե Մեսսիան

Ռուբեն Սարգսյանը հայ ժամանակակից բազմաձև երաժշտարվեստի ուղին յուրովի լուսավորող տաղանդավոր կոմպոզիտոր էր, ճանաչված և գնահատված արվեստագետ՝ ով իր առաջին իսկ ստեղծագործական հայտերում ձգտել է ստեղծել ազգային-վերազգային նորահուն ուղիների մեկնաբանման իր երաժշտական պատումը: Նա XX–XXI դարերի շրջադարձին նախորդած և հաջորդած մշակութային-քաղաքական իրադարձություններն ու ժամանակի մթնոլորտը խորապես վերապրող և դրանց ստեղծագործաբար արձագանքող երաժիշտ էր: Նրա ստեղծագործական մտահղացումներն իրականացել են անցյալի ու ներկայի երաժշտական աշխարհների իմացությամբ նորը ստեղծելու և անցյալի խորհուրդը հիշեցնելու նշանաբանի ներքո:

Կոմպոզիտոր և ժամանակ հարաբերությունը բոլոր դարերում բարդ ու բազմանիստ է եղել: Ռուբեն Սարգսյանն ապրեց իր ժամանակի և իրականության իրատեսությամբ: Ժամանակ, որ լի էր քաղաքական ցնցումներով, սոցիալական և մշակութային վերելքներով և անկումներով: Ստեղծագործողի խնդիրը ինքն իրեն հավատարիմ մնալն է և մեր ժամանակների աներևակայելի բազմաճյուղ և իրարամերժ գեղարվեստական ուղղությունների, էկլեկտիզմի և սինթեզի չորոշարկված սահմաններում սեփական մտածողության և ինքնության գիտակցումը: Այս հավատամքով է առաջնորդվել Սարգսյանը և դրանով ներկայացել հայ կոմպոզիտորական արվեստի երաժշտահարթակում՝ հստակ ձևակերպելով իր երաժշտական ասելիքը: Այդ ասելիքը հասկանալի է ժամանակակցին թե՛ իր լեզվամտածողությամբ, թե՛ ձևով և թե՛ ազգային երաժշտական ավանդույթի ժառանգորդությունն իմաստավորելու

եղանակով: Այն ինքնատիպ է նաև համաշխարհային երաժշտության տարբեր շրջանների ու հոսանքների հետ ունեցած առնչություններում, գեղագիտական հիմնավորումներում և ստեղծագործական մարմնավորումներում:

Ռուբեն Սարգսյանի երաժշտությանն ընդգրկուն և մասնակի անդրադարձներ են եղել: Կոմպոզիտորի վառ անհատականությունը և անսովոր մտածողությունը մշտապես գտնվել են երաժշտական հանրության ուշադրության կենտրոնում, լուսաբանվել մամուլում, գիտական հրապարակումներում և հոդվածներում: Այդ հոդվածներն ու գրախոսականները, որոնցում արժևորված է կոմպոզիտորի այս կամ այն երկը, ուրվագծված է նրա ոչ ամբողջական ստեղծագործական ուղին, ըստ հարկի վկայակոչվելու և ներհյուսվելու են նրա երաժշտական գաղափարների իմ պատկերացումներին: Այս գրքում անդրադարձներ կլինեն նաև կոմպոզիտորին նվիրված հաղորդումներին, նրա հետ ունեցած հարցազրույցներին, ինչպես նաև՝ արվեստագետ-ընկերների գրավոր ու բանավոր խոսքում՝ հնչած մտքերին և բնութագրերին: Դրանցում կենդանանում է Սարգսյանի կերպարը, շոշափելի են դառնում արվեստագիտական նախասիրություններն ու ստեղծագործական տարեգրության մեծ կամ փոքր պատառիկները: Սակայն առ այսօր չկա առանձին մենագրական աշխատանք՝ նվիրված Ռուբեն Սարգսյանի երաժշտական աշխարհին, ժամանակակից երաժշտարվեստում կայունացած բազմաձև ու բազմաշերտ մշակութային ավանդույթների հետ ունեցած ստեղծագործական կապերի լույսի ներքո:

Դիմելով Սարգսյանի երաժշտական ժառանգությանը, առանձնացնելով նրա ստեղծագործական խառնվածքը ներկայացնող մի բնութագրական ընտրանի, հնարավոր եմ համարել լսել նրա ձայնը ոչ միայն հայ, այլև միջազգային երաժշտարվեստի մերօրյա բազմահնչյուն համատեքստում՝ շեշտադրելով նաև նրա արգասավոր մերձեցումը հայ միջնադարյան հոգևոր երգարվեստին, և, հատկապես, Կոմիտասի ստեղծագործական ավանդույթներին: Կոմպոզիտորը ստեղծագործել է տարբեր ժանրերում՝ սիմֆոնիաներ, կոնցերտներ, կամերային-գործիքային բազմաթիվ ստեղծագործություններ, վոկալ, դաշնամուրային շարքեր, մանկական այլրոմ, ռոք-բալետ՝ խոսուն վերնագրերով, ավանգարդին կամ դասական մոդերնիզմին, պոստմոդերնիզմին հարող տեսական գեղագիտական դրույթների ու արտահայտչամիջոցների ինքնատիպ կիրառություններով:

Աշխատանքում ընտրված դիտակետը ենթադրում է նաև երաժշտա-
 ոճական տարբեր ուղղություններին առնչվող զանազան հարցերի թե-

կուզ և հպանցիկ արծարծումը, որը թույլ կտա հստակեցնել հայ արվեստագետի տեխնոլոգիական կոմնորոշումները՝ ստեղծագործական մտահղացումների, հոգեբանական-հուզական տրամադրությունների մարմնավորումներում:

Այստեղ էլ ծառանում է վերլուծական մոտեցումների ընտրության խնդիրը, նկատի ունենալով ժամանակակից երաժշտարվեստում գերիշխող բազմաոճության, էլեկտրոնային երաժշտության ներխուժումների ու տեխնիկական նորամուծությունների լայն համալիրը՝ մշակութային զանազան հղումներով հագեցած երկերի թեմատիկ-գաղափարական բովանդակության «վերծանման» ժամանակ: Երաժշտության ունկնդրումից ստացած տպավորությունները կոմպոզիտորի մտածողության, հոգեկերտվածքի վերաբերյալ որքանով են հարաբերելի կոմպոզիցիայի որևէ տեսությանը, հնչյունային-տեմբրային խտացումների նորարարական տեխնիկաներին, որոնք երաժշտահնչյունային ոլորտը հագեցնում են անսովոր հնարներով և ձայնանմանակման միջոցներով, ստեղծագործության գաղափարական ազդակները մարմնավորող հնչյունային աղմուկով: Երևույթներ, որոնք մեծապես պայմանավորված են նաև սոցիալ-մշակութային, քաղաքական համատեքստերի առանձնահատկություններով: Այդ երևույթների լուսաբանումը չի պարփակվում ավանդական վերլուծական սկզբունքների սահմաններում, որոնք չեն տրամադրում նորագույն երաժշտության իմացական և տեխնիկական բանալիները՝ մղելով դեպի հերմենևտիկ քննությունը:

Ռուբեն Սարգսյանի ստեղծագործությունները ճանաչում են գտել և Հայաստանի, և Ռուսաստանի, և նախկին խորհրդային տարածքի մշակութային տարբեր կենտրոններում, և թե՛ արտասահմանում՝ Գերմանիա, Ֆրանսիա, Հոլանդիա, Բելգիա, Ֆինլանդիա, Հունգարիա, Արգենտինա, ԱՄՆ, և իրենց արժանի տեղը գրավել անվանի երաժիշտների ու կատարողական խմբերի երկացանկերում: Նրա գործերը հնչել են Ռուսաստանի ամենահայտնի կվարտետներից մեկի՝ Բորոդինի անվան կվարտետի անզուգական կատարումներով (առաջին ջութակ՝ Ռուբեն Ահարոնյան), ընդգրկված են «Արամ Խաչատրյան»-տրիոյի՝ Արմինե Գրիգորյան (դաշնամուր), Կարեն Շահգալոյան (ջութակ), Կարեն Քոչարյան (թավջութակ), «Ars Longa» դուետի՝ Արամ Թալալյան (թավջութակ), Ջուլիետա Վարդանյան (դաշնամուր), հնագույն երաժշտության «Տաղարան» համույթի և նրա գեղարվեստական ղեկավար, դիրիժոր, դաշնակահար Սեդրակ Երկանյանի, ինչպես նաև այլ համույթների նվագացանկերում: Թավջութակի համար գրված «Cercio Declamando»-ն II Համահայկական մրցույթի ծրագրի պարտադիր կատարվող գործերից է եղել (2001):

Կոմպոզիտորի երկերը ոգեշնչել են ժամանակակից միջազգային հռչակ վայելող երաժիշտներին՝ Սվետլանա Նավասարդյանին, Ռուբեն Ահարոնյանին, Մեդեա Աբրահամյանին..., վարպետորեն մեկնաբանվել և հնչել են Ֆելիքս Սիմոնյանի, Վիկտոր Խաչատրյանի, Կարինե Օհանյանի, Արամ Թալալյանի, Լևոն Մուրադյանի, Գայանե Զաղացպանյանի, Սոնա Բարսեղյանի և այլոց կատարումներով: Կոմպոզիտորի ստեղծագործությունները ղեկավարել են դիրիժորներ՝ Դավիթ Խանջյանը, Վալերի Գերգիևը, Էմին Խաչատրյանը, Էդվարդ Թովիջյանը, Զավեն Վարդանյանը, Ռուբեն Ասատրյանը, Վահագն Պապյանը, Վադիմ Շուբլաձեն, Մերուժան Սիմոնյանը և այլք:

Երաժշտագետներն ու քննադատները կարևորել են նրա արվեստագիտական լայն մտահորիզոնը, պրայտուն միտքը՝ կենտրոնացած նաև աստվածաշնչյան տեքստերի, հին Արևելքի, ինչպես նաև հայ բանաստեղծների՝ Կոստան Զարյանի, Ավետիք Իսահակյանի, Միսակ Մեծարենցի, Եղիշե Չարենցի, Պարոյր Սևակի քնարերգության վրա:

Այս աշխատանքը նվիրված է կոմպոզիտորի դասական ու ռոմանտիկական, աշխարհիկ ու հոգևոր, ազգային և համամարդկային ըմբռնումներով ու դրանց ստեղծագործական մարմնավորումներով ամբողջացած նրա երաժշտական աշխարհի լուսաբանմանը: Այն չի ակնկալում նրա ստեղծագործության համապարփակ քննությունը: Շուրջ վեց տասնյակ բազմաժանր և բազմաոճ երկերի ամբողջական նկարագիրն ու արժևորումը բարդ է հատկապես տեխնիկական առումով, երբ բազմաթիվ ուշագրավ մտահղացումներ մնացել են նոտային տեքստի մակարդակում, չեն հնչել, չեն կատարվել կամ չեն հրատարակվել, իսկ ձայնագրություններն էլ երբեմն հեռու են կատարյալ լինելուց: Իմ ուշացած գրույցը կոմպոզիտորի հետ կիրթձեմ իրականացնել վիրտուալ տարածքում՝ հուսալով գտնել պատասխաններ նրա երաժշտության մեջ, պատկերացնելով նրա արձագանքներն իր գործերին տրված մեկնություններին:

Այսպիսով, իմ խոսքը ժամանակի փորձություններին ու դժվարություններին երաժշտությամբ դիմակայող, ժամանակից շուտ կյանքից հեռացած, իր երաժշտական լինելիությունն ապացուցող և դրանով ապրող Ռուբեն Սարգսյանի՝ անզուգական գրուցակից-ընկերոջ, խորհրդածող և անհանգիստ արվեստագետի մասին է:

ԳԼՈՒԽ I

ԿՈՄՊՈԶԻՏՈՐԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԸ

Ռուբեն Սարգսյանը ծնվել է 1945 թ. նոյեմբերի 22-ին՝ Երևանում, Սուրեն և Գոհար Սարգսյանների ընտանիքում: Անցյալ դարակեսի հասարակական-մշակութային առաջընթացի, կրթությանը և գիտությանը հարկացված կարևոր նշանակության գաղափարական վերելքի մթնոլորտում մայրաքաղաքի բնակչության ամենապարբեր խավերի պարկերուցումներում երաժշտությունը երեխաների բազմակողմանի զարգացման անհրաժեշտ նախապայմաններից էր: Եման համոզմունքով է Ռուբենի հայրը՝ մասնագիտությամբ գյուղատնտես, տղային առաջնորդել Սայաթ-Նովայի անվան երաժշտական դպրոց, որը վճարոչ է եղել կոմպոզիտորի մասնագիտական կողմնորոշումների հարցում: Հեղինակում կոմպոզիտորը երախարագիտությամբ է հիշարակում հոր անունը՝ ումից նա ժառանգել էր իր երաժշտական ունակությունները և ով իրեն մղել էր դեպի երաժշտությունը՝ ի վերուստ նախաաստիճանված ինքնարտահայտման աշխարհը: Ռուբենի երաժշտական օժտվածությունն անմիջապես գրավել է ուսուցիչների ուշադրությունը, ովքեր խորհուրդ են տվել անպայման շարունակել երաժշտական կրթությունը: Ինչուս պարանեկան փորձերին, երաժշտությանը զուգահեռ, Ռուբենին հետաքրքրել են ֆիզիկայի, մաթեմատիկայի, հնչյունների և թվերի խորհրդավոր միակցություններն ու փրամաքանական կապերը: Իր համար հավասարազոր այս ոլորտներից որևէ մեկին առաջնություն տալու երկմրանքներով, Ռուբեն Սարգսյանը՝ ավարտելով Ձերժինսկու անվ. հանրակրթական և Սայաթ-Նովայի անվ. երաժշտական դպրոցները, ընդունվել է Պոլիտեխնիկական ինստիտուտ: Սակայն շատ կարճ ժամանակ հեղտ գիտակցելով, որ րեխնիկական կրթությունն իր կոչումը չէ, թողել է ինստիտուտը և ընդունվել Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական ուսումնարանը՝ սովորելով կոմպոզիտոր Էդվարդ Բաղդասարյանի դասարանում, այնուհետև շարունակել իր երաժշտապրեդագոգիական կրթության ուղին Երևանի Կոմիտաս

ՌՈՒԲԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՇԽԱՐՀԸ. ԿՈՄՊՈԶԻՏՈՐԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԸ

սի անվան պետական կոնսերվատորիայում՝ Ղազարոս Սարգսյանի ղեկավարությամբ:

1972 թ. կոնսերվատորիան ավարտելուց հետո Ռուբեն Սարգսյանն անցել է մասնագիտական ստաժընթացի բնականոն փուլերով՝ դարձել է Կոմպոզիտորների միության անդամ, դասավանդել է Քրիստափոր Քոչչարյանի անվան երաժշտական դպրոցում: 1987 թվականից մինչև իր կյանքի ավարտը՝ 2013 թ., աշխատել է կոնսերվատորիայում, 2004-ից՝ պրոֆեսորի պաշտոնում:

1994 թվականից իր գործուն մասնակցությամբ նպաստել է Հայկական երաժշտական համաժողովի կայացմանը՝ դարձել նրա հիմնադիր անդամներից:

1972 թ. Լենինգրադում կոմպոզիտորը ծանոթացել և ամուսնացել է Կրեդի կոնսերվատորիայի ասպիրանտ Իրինա Ջոլտովայի հետ, ով Կրեդափոխվելով Երևան՝ աշխատանքի է անցել Կոմիտասի անվան կոնսերվատորիայում: 2009 թ. նա պաշտպանել է դոկտորական արտենսիտություն՝ նվիրված Հայաստանում պիանիզմի զարգացման ինդիքների ուսումնասիրությանը, որն ի շարքս այլ աշխատանքների և Կրեմական-մեթոդական ձեռնարկների կարևոր ներդրում է հայ կապարողական արվեստի, ինչպես նաև XX դարի դաշնամուրային մանկավարժության ասպարեզում:

Այս երաժշտական համերաշխ ընդհանրում 1981 թ. ծնվել է նրանց միակ դուստրը՝ Ալիսա Սարգսյանը: Ծարունակելով ընդհանրական ավանդույթները՝ Ալիսան հրաշալի կրթություն է ստացել. ավարտել է Կոմիտասի անվան կոնսերվատորիայի դաշնամուրի և կոմպոզիցիայի բաժինները, այնուհետև՝ ասպիրանտուրան և ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտում պաշտպանել թեկնածուական արտենսիտություն: Նա հեղինակ է դաշնամուրային, կամերային և վոկալ մի շարք սրբե-ծագործությունների: Նրա «Փոքրիկ իշխանը» մանկական բալետը 2002 թ. բեմադրվել է Վաշինգտոնում և արժանացել բարձր գնահատանքի: Հայաստանի կոմպոզիտորների միության անդամ է: Ներկայումս Ալիսան բնակվում է ԱՄՆ-ում, ամուսնացած է, ունի երեք երեխա:

Ահա այսպիսին է Ռուբեն Սարգսյանի կենսագրության արտաքին ուրվանկարը՝ լի սոցիալական-հոգեբանական խոռվքներով, սրբեծագործական նվաճումներով, երաժշտական հանրությանը պարզևած բարձրարվեստ գեղարվեստական անսկնկալներով:

Ամեն մի արվեստագետ ձգտում է իր երկերը ստեղծել ժամանակի ոգուն համապատասխան: Ռուբեն Սարգսյանին խորապես հուզում էին ժամանակի ու ոգու, ժամանակի ու երաժշտական միջավայրի խնդիրները: Նա իր երաժշտական տրամաբանության հիմնավորումները փնտրում էր նաև տիեզերական կարգավորության հավերժական տիրույթում: Նրա ստեղծագործական երևակայությունն ու արվեստագիտական էությունը լիցքավորող ոլորտները բազմազան էին: Նա փորձում էր արվեստի, իրականության և գիտության խորքային կապերի ըմբռնումով իր համար բացահայտել խորհրդավոր աստվածայինը, որը վեր է ամենից և առնչվում է արվեստին: Տիեզերքը, երաժշտությունը և գիտությունը, թերևս, այն Սուրբ երրորդությունն է, որի անիմանալի հարաբերություններում կոմպոզիտորը զգում էր իրեն ներշնչող ուժը՝ ապավինելով ներքին լսողությանը, հնչյունների զարմանալի աշխարհին, որ կարիք ունի կարգավորվելու տրամաբանական ձևերում: «... որպեսզի ձևի ափերը միշտ գրանիտից լինեն, ձևը պետք է սանձի միտքը, որ այն չփոշիանա ... այնպես որ տրամաբանությունն ու զգացմունքը պետք է փոխազդեն»¹: Կոմպոզիտորի այս համոզմունքը, որ ակնհայտ է մտքի և զգացմունքի փոխհարաբերություններում, քննելի է նրա երկերի ձևակառուցողական սկզբունքներում, կառույցի ամբողջացման կամ մոդելավորման ոչ ավանդական մոտեցումներում:

Որքան որ կոմպոզիտորն ամփոփված էր իր աշխարհում՝ ասկետիկ կենսաձևով ու բազմաբնույթ հետաքրքրություններով, նույնքան գրկաբաց էր նրա ընդունելությունը գործընկերների, երաժիշտ-կատարողների, ուսանողների և ընդհանրապես երաժշտական հանրության շրջաններում:

Ռուբեն Սարգսյանի հեղինակային համերգների առիթով, նրա հիշատակին նվիրված երեկոների ընթացքում (Երևան, 2013, 2015) ավագ և սերնդակից կոմպոզիտորները՝ Լևոն Չաուչյանը, Երվանդ Երկանյանը, Միխայիլ Կոկժանը իրենց անձնական, ընկերական և մասնագիտական կարծիքներն են հայտնել ժամանակակից արևմտյան և հայկական երաժշտության մեջ իր հստակ կողմնորոշումներն ունեցող

¹ Երաժշտության մեջ տրամաբանության և զգացմունքայնության հարաբերության խնդրին այս պատասխանն է տվել կոմպոզիտորը Նատալիա Գոմցյանի հետ ունեցած հարցազրույցում: Բնօրինակի տեքստը հետևյալն է՝ «... Чтобы берега формы всегда были гранитными, форма должна удерживать вашу мысль, чтобы она не расплывалась... так что логика и чувства должны взаимодействовать» (տե՛ս «Присутствие духа – мощный стимул». «Голос Армении», 07. II. 2002).

գործընկերոջ մասին: Տարիներ անց Ռուբենին նվիրված իր խոսքում Կոկժանը գրում է, թե որքան տխուր, միաժամանակ որքան լուսավոր են իր հիշողությունները հրաշալի հայ կոմպոզիտոր Ռուբեն Սարգսյանի մասին: Դրանք առանձնահատուկ՝ հոգևոր և ինտելեկտուալ լույսով են պարուրված: Ռուբենի ամենակարևոր և հետաքրքիր հատկությունը Կոկժանը համարում է երաժշտական ժամանակը կառավարելու ունակությունը, որ քչերին է տրված ...²

Անկեղծ և ոգեշունչ խոսքերով է հրաժեշտ տվել իր գործընկերոջը կոմպոզիտոր Երվանդ Երկանյանը. «ժամանակակից հայ երաժշտության պատմության մեջ նա կգրավի իր արժանի տեղը՝ որպես նոր երաժշտության ամենաինքնատիպ ներկայացուցիչներից մեկը... Ստեղծագործեց բազմաթիվ ժանրերում. ռոք-բալետից մինչև սիմֆոնիաներ և կոնցերտներ, նվագախմբային, անսամբլային, գործիքային բազմապիսի ստեղծագործություններ՝ չմոռանալով նաև մանուկներին: ...Նրա ստեղծագործությունները, որպես իր կյանքի և ժամանակի հավաստի վկայություններ, խորապես ապրված գեղարվեստական իրականություն և արժեք, կդառնան ապագա սերունդների համար կյանքի և ստեղծագործության թանկագին ուղեցույց՝ որպես երաժշտական արվեստի անմնացորդ նվիրումի փայլուն հուշարձան» (11 ապրիլ, 2013, Երևան):

Ակնածանքով և երախտագիտությամբ են արտահայտվում իրենց սիրելի դասախոսի՝ Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր Ռուբեն Սարգսյանի մասին նրա ուսանողները, որոնց հիշողություններում նա հառնում է որպես անսահման գիտելիքի, ինքնատիպ մտածողության և ստեղծագործական խառնվածքի տեր կոմպոզիտոր-մանկավարժ, ով իրենց հմտորեն ուղղորդել է ժամանակակից երաժշտարվեստի տեխնոլոգիաներին ծանոթանալու բարդ խնդիրներում³:

2023 թվականին Երևանի Գաֆեևեան արվեստի կենտրոնում կոնսերվատորիայի կամերային-գործիքային ամբիոնի պրոֆեսոր Իրինա Բադալյանի նախաձեռնությամբ կազմակերպվեց Ռուբեն Սարգսյանի մահվան 10-ամյակին նվիրված հիշատակ-երեկո, որի ժամանակ ու-

² Մասնագիտական բարձր բնութագրի ռուսերեն բնօրինակը Մ. Կոկժանն ինձ փոխանցել է գրքի հրատարակության նախապատրաստական աշխատանքների ժամանակ:

³ Տարիներ շարունակ պրոֆեսոր Ռուբեն Սարգսյանը «Կոմպոզիցիա» և «20-րդ դարի երաժշտության ստեղծագործության տեխնոլոգիա» դասընթացներն է վարել Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում, կազմել վերջինիս ծրագիրը բակալավրիատի համար (2010), որն առ այսօր կիրառվում է:

սանողների կատարմամբ հնչեցին կոմպոզիտորի կամերային գործերը: Ներածական խոսքով հանդես եկավ տողերիս հեղինակը՝ ներկայացնելով կոմպոզիտորի ստեղծագործական դիմանկարն ու երաժշտաոճական նախասիրությունները⁴:

Ռուբեն Սարգսյանն իր երաժշտությամբ, իր մեղեդային անկեղծ պոռթկումներով, որոնք դուրս են ավանդական հնչյունային համակարգի սահմաններից, ակադեմիական «բարձր» էլիտար ու «թեթև» մասսայական արվեստի ելևէջումների նպատակամետ զուգորդումներով ընդլզել է նաև տեխնոլոգիական նորամուծությունների ֆետիշացման՝ որպես «մշակութային ներփակ երևույթի» հիմնավորումների դեմ: XX–XXI դարերում արևմտյան գաղափարախոսությամբ և տեխնիկական կարծրատիպերով ստեղծված փայլուն պարտիտուրներից շատերը, կոմպոզիտորի համոզմամբ, ոչինչ չեն ասում ունկնդրի մտքին և սրտին, ով մշտապես կարիք ունի հաղորդակից լինելու երաժշտության գեղեցիկ աշխարհին:

Հետևել կոմպոզիտորի ստեղծագործական ուղուն նրա երաժշտական կտավների միջոցով՝ նշանակում է հետևել ժամանակի և արվեստագետի, ժամանակի և քաղաքական-մշակութային իրադարձությունների ու երաժշտագեղագիտական իրողությունների հարաբերությանը: Ռուբեն Սարգսյանին և նրա սերնդակից արվեստագետներից շատերին՝ Լևոն Չաուչյանին, Արամ Սաթյանին, Վահրամ Բաբայանին, Երվանդ Երկանյանին, Էդվարդ Հայրապետյանին, մշակութային վերելքի այս ժամանակաշրջանը թույլ է տվել յուրովի դիրքորոշվել ազգային-ռոմանտիկական և նեոկլասիկական ուղղություններում, ավանդական ու մոդեռն հասկացությունների սահմաններում, ավանգարդի, հոգևոր մոնոդիայի և քաղաքային երաժշտարվեստի հնարավոր խաչաձևումների խնդիրներում:

Տեսական-ստեղծագործական արստրակցիաների, ոճական հնարանքների, կոլաժների, ռեմինիսցենցիաների հզոր հորձանուտում բախվում, շաղկապվում և նոր ուրվագծերով են ամբողջանում հին ու նոր երաժշտական կառույցները՝ անկաշկանդ հունով առաջնորդում երաժշտաստեղծագործական տարերքը: Այս բյուրակն երաժշտական աշխարհում դժվար է բնութագրել կամ սահմանել այդ հորձանուտի

⁴ Տեղին է նշել, որ իմ հետաքրքրությունը Ռուբեն Սարգսյանի երաժշտության նկատմամբ պայմանավորված է նաև այն ջերմ ընկերական ու մասնագիտական հարաբերություններով, որ ունեցել եմ կոմպոզիտորի, ինչպես նաև նրա կնոջ՝ Կոմիտասի անվան կոնսերվատորիայի դոկտոր, պրոֆեսոր, երաժշտագետ Իրինա Զոլոտովայի հետ:

պտույտներով անցած արվեստագետների ստեղծագործական ոճը, դասել նրանց այս կամ այն գեղարվեստական ուղղությանը: 1970–80-ականների խորհուրդը կանոնավորված համակարգերի, ժանրային և տեխնոլոգիական կարծրատիպերի ու պայմանականությունների վերաարժևորումն էր՝ տոնայնականից ատոնալին անցնելու մտածողությամբ պայմանավորված ռիթմի և մետրի կազմակերպման այլ սկզբունքներով, ծայրահեղ անհատականացված տեմբրի գաղափարական ֆունկցիոնալ նոր ըմբռնումներով և, հատկապես, դրանց դրամատուրգիական նշանակությամբ: Ոճական բեկումներն արտահայտվել են նաև ցուցադրական նմանակումներից փոքր-ինչ հեռանալու և ծրագրայնությանը հակվելու մեջ (առնվազն վերնագրերի մակարդակում): Արդյունքում կոմպոզիցիայի հնչյունային բովանդակությունն էլ ավելի է հարստանում արտաերաժշտական գաղափարների, գրական գործերի էլեկտրոնային մեկնաբանություններով, միջավայրային հնչյունների (soundscape) կիրառություններով:

Արդյո՞ք ժխտվում էին էլիտար երաժշտության, ակադեմիական դասականության սկզբունքները, արդյո՞ք խախտվում էին տեսականացված գաղափարների հիմքերն ու փշրվում դրանց անվերջ փորձարկումների շղթաները՝ ուղիներ հարթելով նոր գեղագիտական ընկալումների, ժամանակակից օտարի և ազգայինի, հնի ու նորի, ինտելեկտուալի և էմոցիոնալի շփումների ասպարեզում: Կարևոր և ակնհայտ արդյունքը ձերբազատումն էր ավանգարդի կաշկանդող կապանքներից, տեսական դրույթների բացարձակացումից, որ XX դարավերջին և XXI դարասկզբին բնականոն, թե արհեստածին, «Նոր պարզության» կամ պոստմոդեռնի պայմաններում շոշափելի դարձրեց «նոր ազգային» ռոմանտիզմի դրսևորումները:

Հայ նշանավոր կոմպոզիտորների՝ Գրիգոր Եղիազարյանի, Էդվարդ Միրզոյանի, Ղազարոս Սարյանի, Էդգար Հովհաննիսյանի և մյուսների ստեղծագործական դասարաններում են իրենց մասնագիտական մկրտությունը ստացել ավանգարդի և մոդեռնիզմի գաղափարական-տեխնոլոգիական բովով անցած նոր ժամանակակից երաժշտության մեր օրերի առաջատար-արվեստագետները: Հետխաչատրյանական կոմպոզիտորական աստղաբոյլի ամեն մի ներկայացուցչի՝ Միրզոյան, Հարությունյան, Սարյան, Բաբաջանյան, Խուդոյան, Սարգսյանն իր գնահատանքի ու երախտիքի խոսքերն է հնչեցրել՝ ընդգծելով նրանց կարևոր ներդրումը հայ կոմպոզիտորական արվեստի բարձր չափանիշների պահպանման, ստեղծագործական մթնոլորտ ապահովելու և անհատականությունը խրախուսելու խնդիրներում:

Ռուբեն Սարգսյանին նվիրված հոդվածներում, մասնավորապես, Սարգարիտա Ռուխկյանի առավել ամբողջական ակնարկում, իրավա-
ցիորեն կարևորվում են նրա ուսուցիչներն ու երաժշտամշակութային
այն միջավայրը, որտեղ բյուրեղացել են նրա գեղագիտական ըմբռ-
նումներն ու գեղարվեստական նախասիրությունները⁵:

Ռուբեն Սարգսյանի երաժշտական մտածողությունը ձևավորվել է Եր-
ևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում սովորելու
տարիներին՝ անվանի կոմպոզիտոր Ղազարոս Սարյանի ստեղծագոր-
ծական և մարդկային ջերմ հարաբերությունների վրա հիմնված կոմ-
պոզիցիայի դասարանում: Իր կրթությունը ստանալով գեղագետ կոմ-
պոզիտորի ղեկավարությամբ, որի ուսուցիչների շարքում էր նաև Շոս-
տակովիչը⁶, Ռուբենը գիտակցել և կարևորել է ազգային ավանդույթի
դերն ու կենսունակությունը ժամանակակից երաժշտարվեստում: Այդ
ավանդույթը ճանաչելու, դրանում ներդաշնակ ակունքներ գտնելու
ծգոտումը մշտապես զբաղեցրել է կոմպոզիտորի միտքը: Իր ստեղծա-
գործական հայտերում նա փորձել է գտնել ազգային երաժշտական
ոգու և պատկերացումների իր բանալին ու դրանով ընթերցել հայոց
միջնադարի երաժշտաբանաստեղծական էջերը:

Երաժշտական արվեստի էթոսի խնդիրներում Սարգսյանի ուղենիշը
գերմանացի անվանի բժիշկ, փիլիսոփա, երաժշտագետ Ալբերտ Շվեյ-
ցերի փիլիսոփայական, բարոյաէթիկական սկզբունքներն են: Թերևս
բարոյահոգեբանական ներքին ներդաշնակության զգացողություննե-
րը՝ ներշնչված երաժիշտ-պացիֆիստի կենսական փորձով, օգնել են
կոմպոզիտորին իր երաժշտական աշխարհում լինել անկեղծ և ան-
մնացորդ նվիրյալ:

⁵ Տե՛ս Մ. Рухкян. Портреты армянских композиторов. Очерки. Ереван, 2009, с. 154–162. Հայ կոմպոզիտորներին նվիրված այս գրքի ամեն մի ակնարկում Սարգարիտ Ռուխկյանը ժամանակի մշակութային իրականության համա-
տեքստում լուսաբանում և արժևորում է 70-ականների նորարարական ոգով
համակված հինգ կոմպոզիտորների՝ Լևոն Չաուշյանի, Վահրամ Բաբայանի,
Երվանդ Երկանյանի, Ռուբեն Սարգսյանի և Դավիթ Սաքոյանի ստեղծագոր-
ծությունը, կենսագրական տեղեկություններով, ժանրային-գեղարվեստական
հակումների և ոճական սկզբունքների դիտարկումներով:

⁶ Շոստակովիչի և հայ կոմպոզիտորների անձնական, ստեղծագործական կա-
պերի ու մտերմության, ինչպես նաև նրա երաժշտության հզոր պոտենցիալի
ազդեցության ու գեղարվեստական-գեղագիտական նոր հորիզոնների բացա-
հայտման խնդիրներին մանրամասն անդրադարձ կա երաժշտագետ Սվետ-
լանա Սարգսյանի հետազոտության մեջ: Հեղինակը կարևորել է Շոստակովի-
չի ոճական սկզբունքների և նրա ստեղծագործական մտածողության կազ-
մավորման արտաերաժշտական ազդակների կոնցեպտուալ նշանակությունն
ու դրանց արձագանքները տարբեր անհատականություն ունեցող կոմպոզի-
տորների երկերում (տե՛ս Ս. Саркисян. Армянская музыка в контексте XX века.
Исследование. М., 2002, с. 49–55):

Ռուբեն Սարգսյանի մասին խոսելիս հնարավոր չէ շրջանցել նաև նրա փոքր-ինչ արտաոռոց հետաքրքրությունները՝ հեռադիտակով աստղերն ուսումնասիրելու ներքին պահանջը, հեծանիվ քշելու սովորությունը: Այս ամենը հատուկ էր միայն Ռուբենին, նրա անսովոր նկարագրին ու կենսաձևին: Սակայն այս թվացյալ էքսցենտրիզմն ու հրապուրանքները կոմպոզիտորի առօրյայի անբաժանելի մասն էին, թերևս, իրականությանը յուրովի հարմարվելու, դիմակայելու, միևնույն ժամանակ դրանից խուսանավելու, առանձնանալու և մտորելու մի հնարավորություն: Հաճախ էր Սարգսյանը հիշում Նարեկացուն, շեշտում նրան ըմբռնելու ու մեկնելու խորհուրդը, որ բոլորին հասու չէ: Շատ արվեստագետներ են փորձել հասկանալ Նարեկացու աշխարհիմացության ակունքներն ու հիմքերը, վերծանել նրա այլաբանական մտածողությունը, մեկնել միջնադարի լեզուն: Կոմպոզիտոր Լևոն Չաուշյանը՝ Նարեկացու «Մատյան ողբերգության» տեքստերի իր երաժշտամեկնաբանական փորձառությունների առիթով ասել է, որ Նարեկացու տաղերը վերևից իջած, երկնքից գրված տողեր են...⁷

Անցյալի ժառանգությանը դիմելու պահանջն ինքնանպատակ չէ որևէ արվեստագետի համար, եթե այն ծառայում է ստեղծագործական գաղափարի իրականացմանը: Ազգային, թե համաշխարհային գրականության և քնարերգության հարուստ էջերում Ռուբեն Սարգսյանը գտնում է իրեն հուզող թեմաներ, ժամանակի ոգուն համահունչ խնդիրներ, ազգային երաժշտական ավանդույթին հարաբերվելու նոր մոտեցումներ: Կոմպոզիտորի ամեն մի ստեղծագործություն, ասես, մի նոր վերապրում է, ինքնագիտակցման նոր վիճակ՝ արտացոլված ամենատարբեր ժանրերում՝ ավանդական ու ոչ ավանդական գործիքային կազմերի համար գրված սիմֆոնիկ և կամերային երկերում, գործիքային կոնցերտների և սոնատների օպերաներում, հոգևոր ժանրերի մարմնավորումներում, նվիրումներում, կամերային նվագախմբի համար գրված «Իմ ժամանակակցին» շարքում:

Կոմպոզիտորի հետաքրքրությունների ոլորտում էր նաև գիտաֆանտաստիկ ժանրը՝ ապագային ուղղված մտքերով, ապագան կանխատեսող երևակայության թռիչքներով: Միանգամայն օրինաչափ է, որ նրան հրապուրել և ստեղծագործական միտքը բորբոքել են անգլիացի նշանավոր գրող, «ժամանակ» տարրղունակ գաղափարի անկրկնելի մեկնաբան-մարգարե Հերբերտ Ջորջ Ուելսի (1866–1946)՝ իր ժամա-

⁷ «Հայ կոմպոզիտորներ և կատարողներ» հաղորդաշարում Լևոն Չաուշյանի հետ գրույցը վարել է երաժշտագետ Օլյա Նուրիջանյանը («Վէմ» ռադիոկայան, 17. 11. 2022):

նակի համար ցնորական պատմությունների՝ «Մարդը Լուսնի վրա», «Ժամանակի մեքենա», «Աշխարհների պատերազմ» և այլ վեպերի բովանդակությունը: Ուելսի ամենահայտնի գործերից մեկի՝ «Անտեսանելի մարդը» («The Invisible Man») տեքստի հիման վրա Սարգսյանն իր կազմած լիբրետոյով ողբ-բալետ է գրել (2000), որ, ըստ ամենայնի, ժանրի առաջին հայտն է հայ ժամանակակից երաժշտարվեստում: Ցավոք, ստեղծագործության պարտիտուրն ու ձայնագրությունը չեն պահպանվել ամբողջական տեսքով, որպեսզի հնարավոր լիներ լիարժեք պատկերացում կազմել այս հետաքրքիր մտահղացման մասին:

Ընդհանուր առմամբ, կոմպոզիտորը ռետրոսպեկտիվ հայացքով ընդգրկելով XX դարակեսին ԱՄՆ-ում ձևավորված pop art-ի միջազգային ոճը՝ ողբի, ջազի, բլյուզի, ֆոլքի ու դասական երաժշտության սինթեզված տարրերով, ստեղծել է իր տեսակի մեջ պարզ, ոճավորված ռիթմերի, տոնայնական հարմոնիաների վրա հիմնված, ժամանակների ու գաղափարների համադրման երգիծական երանգներով մարմնավորված մի երկ: Այն կարելի է համարել նրա ոչ ակադեմիական գրելաճի ընդլայնման մի ինքնատիպ փորձառություն՝ համապատասխան գործիքակազմի կիրառությամբ՝ դաշնամուր, սաքսաֆոն, կիթառ, հարվածայիններ ու լարայինների խմբեր:

Ռուբեն Սարգսյանն արձագանքել է միջազգային տարահույզ իրադարձություններին, հայ ժողովրդի պատմության ողբերգական էջերին, արվեստագետների առջև ծառայած բարդ խնդիրներին: Կոմպոզիտոր-երաժշտագետ հարաբերության ընկալումներում նա իր պատկերացումներն ուներ երաժշտաքննադատական մտքի ոլորտում տեղ գտած փոքր-ինչ վերացական դատողությունների, չհիմնավորված բնութագրերի վերաբերյալ:

Կոմպոզիտոր-երաժշտաքննադատ փոխհարաբերությունը երաժշտության զարգացման ընթացքի կարևոր ազդակներից և մշտապես խոցելի գործոններից է եղել: Անհատական-անձնական նախասիրություններով պայմանավորված բնութագրերն ու կարծիքները հաճախ ապակողմնորոշող դեր են խաղացել: Չափազանցված գնահատականներն ու մեծարման ցույցերը երևութական մեծություններ են թագադրել կամ ընդհակառակը՝ անտարբերության մատնել իրական արժեքները: Տարբեր հարցազրույցներում շոշափելով այս հարցերը՝ Սարգսյանն իր մտահոգությունն է արտահայտում երաժշտական կյանք մտած կամ երաժիշտի կենսաձև որդեգրած կոմպոզիտորի ստեղծագործության նկատմամբ դրսևորված անտարբեր վերաբեր-

մունքի, կամ էլ անհարկի, ոչինչ չասող երաժշտական որևէ հոսանքի պատկանելու «պիտակավորման» առիթով⁸:

Խոսել ազդեցությունների և դրանց նշանակության մասին՝ նշանակում է խոսել նաև արվեստագետների գաղափարական, գեղագիտական ըմբռնումների ու հոգեբանական խնդիրների, աշխարհընկալման, ինչպես նաև համապատասխան ոճական-ստեղծագործական սկզբունքների ընտրության մասին: Մեծ արվեստագետների՝ Մալերի, Ստրավինսկու, Շոստակովիչի բնութագրական արտահայտչամիջոցների ազդեցության, մասնավորապես, նրանց երաժշտական գրոտեսկի, երգիծանքի դրսևորումների (օրինակ, վալսը, քայլերգը՝ որպես պարոդիա, որպես միջավայրին խորթ սոցիալական ակնարկ, կարոտախտի թեմա և այլն) արտարկումներն առկա են տարբեր կոմպոզիտորների ստեղծագործություններում, և, բնականաբար, ազդեցությունների խնդիրն իմաստավորվում է ամեն մի համատեքստում ունեցած գործառական-խորհրդանշական կարևորությամբ:

8 Տե՛ս Ռ.Սարգսյան. Խնդիրը երաժշտական կյանք մտնելն է. — «Սովետական արվեստ» (Երևան), 1985, №9:

ԳԼՈՒԽ II

ՌՈՒԲԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ «ՆՈՐ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ» ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ

1970-ականներին ասպարեզ իջած տաղանդավոր կոմպոզիտորների լեզվամտածողության, ոճական հատկանիշների քննությունը՝ Արևմուտքի ակադեմիական ավանդույթում XX դարասկզբին ձևավորված նոր երաժշտության գեղագիտական դրույթների, տեխնիկական նորամուծությունների կիրառության տեսանկյունից, թույլ է տալիս կարևորել նաև ազգային ավանդույթի առանձնահատկությունները ժամանակի երաժշտական համատեքստում: Տեխնոլոգիական աննախադեպ առաջընթացի պայմաններում արվեստագետի մտածողությունն էլ է ձեռք բերում տեխնիկական ուղղվածություն՝ պահպանելով մշակութային ժառանգության դասական զինանոցն ու գիտելիքը: Ո՞ր դարաշրջանին կամ գեղարվեստական ուղղությանն են առնչվում հոգևոր և հուզական ազդակները՝ որ կոմպոզիտորը վերաիմաստավորելով նոր ձևերում, մեկնում է որպես խորհրդանիշ՝ կոնկրետ գաղափարի, հոգեվիճակի արտահայտության համար կամ ինչպես է համադրում անցյալի ու ներկայի իրողությունները՝ ժամանակի ոգին արտահայտելու համար: Երաժշտամշակութային համատեքստն օգնում է ըմբռնել արվեստագետի մտածողության տեսական-գաղափարական կռվաններն ու հնարավորություն տալիս հարաբերել երևույթները նաև տարբեր ժամանակների համատեքստերում:

1950–60-ականներին «Վարչավյան աշուն» փառատոները տասնամյակներ անց գնահատվեցին որպես «ազատ երաժշտական տարածք» սովետական գոտու սահմաններում՝ ժամանակակից նորը լսելու, փորձարարական տեխնիկային ծանոթանալու հնարավորություն: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո երաժշտության զարգացման ուղին տարբեր հեռանկարներով է քննարկվել արևմտյան ու

խորհրդային գրականության էջերում⁹, որոնց մասամբ արձագանքել են նաև հայ երաժշտագետները: Ըստ էության, հայ երաժշտագիտության մեջ սուր բանավեճ չի ծավալվել ավանգարդի շուրջը, պաշտոնական արգելքներ չեն դրվել հայ կոմպոզիտորների ավանգարդիստական երկերի կատարումների վրա, թեև նրանք յուրացրել ու փորձարկել են տարբեր գրելաոճեր և ինքնատիպ արդյունքներ ստացել այդ ասպարեզում¹⁰: Հայ կոմպոզիտորները հիմնականում որդեգրել են ավանգարդի ծայրահեղ տեխնիկական դրսևորումների՝ դողեկաֆոն, սերիային գրելաձևերի բնութագրական սկզբունքները դասական ձևերում մասնակիորեն կիրառելու փորձը՝ առանց ավանդույթի ռադիկալ ժխտման, ինչը ավանգարդի ելակետային դրույթն էր¹¹: «Լուկալ» ավանգարդ հասկացությունը պատմականորեն ավելի ուշ է ձևավորվել և իր չափավոր դրսևորումներով գեղագիտական ու փիլիսոփայական մինչ այդ անտեսանելի հորիզոններ է բացահայտել ոչ եվրոպական օլյուսմենին պատկանող երաժշտական մշակույթներում: Եվ այս առումով, ժամանակաշրջանին բնորոշ նոր լեզվամտածողության նշանակությունը կարևոր է ըմբռնել ոչ միայն գեղարվեստական արդյունքի, այլև սոցիալ-քաղաքական և մշակութային մասնահատուկ միջավայրի առանձնահատկությունների տեսանկյունից: Ավանդույթի ժխտումն

⁹ Տե՛ս Современное буржуазное искусство. Критика и Размышления (М., 1975) ժողովածուն, որի տարաբնույթ հոդվածներում քննադատական վերլուծության են ենթարկվում «նեոավանգարդի» արվեստում տեղ գտած ճգնաժամային երևույթները, փորձարարական-տեխնոլոգիական հարցերը, որոնք խորհրդային արվեստի գաղափարական-գեղագիտական պատկերացումների տեսանկյունից մերժելի են համարվել՝ հատկապես որպես գեղարվեստական արժեք ներկայացնող ստեղծագործություն: Ծավալուն գրականություն է ստեղծվել սովետական սիմֆոնիզմի, սոցիալիստական ռեալիզմից չափավոր մոդեռնիզմին անցնելու ելակետերի, քաղաքական և գեղագիտական դրույթների, Շոստակովիչի, նրա երաժշտության շուրջը ձևավորված հակասական կարծիքների ու ընկալումների, ինչպես նաև նրա երաժշտության ազդեցության ուղեծրում գտնվող կոմպոզիտորների վերաբերյալ: Այդ քննարկումներում փաստարկվում են և՛ ժամանակի երաժշտական լեզվի տիրապետման անհրաժեշտության, և՛ դրա բացարձակացման ու չհասկացված, քննադատված լինելու խնդիրները: Հումանիստական և հերոսական գաղափարներով հագեցած սիմֆոնիկ ժանրը չէր կարող խզել իր կապը ավանդույթի հետ, որը մերժվում էր ավանգարդի կողմից որպես սկզբունքային դրույթ. երևույթն ակնառու է նաև ազգային կոմպոզիտորական դպրոցներում, որոնք XIX դարավերջից հետամուտ էին ազգային լեզվամտածողության և համաշխարհային արևմտյան դասական երաժշտարվեստի ներդաշնակ փոխհարաբերության խնդիրների լուծմանը: (տե՛ս М. Арановский. Симфонические искания. – Проблема жанра симфонии в советской музыке 1960–1975 годов. Л., 1977, с. 27: Նաև՝ Frolova-Walker, Marina. National in Form, Socialist in Content: Musical Nation-Building in Soviet Republics. – «Journal of the American Musicological Society» 51: 391–71, 1998):

¹⁰ Տե՛ս С. Саркисян. Ելվ. աշխ., էջ 131-154:

¹¹ Այս մասին տե՛ս D.Allbright. Modernism and Music. Chicago, 2004:

անհրաժեշտ էր այն մշակույթներում, որոնցում XIX դարի վերջից սկսած ձևավորվում էին ազգային երաժշտարվեստի պրոֆեսիոնալ հիմքերն ու կոմպոզիտորական ստեղծագործության ուղենշային հեռանկարները: Հետաքրքիր է նշել, որ ավանգարդի ռադիկալ սկզբունքների ու պահանջների նկատմամբ՝ «սկսել «zero»-ից (tabula rasa)», բացասական դիրքորոշումներ են ունեցել Խորհրդային Միության և դրա արևելաեվրոպական թևի ազգային տարբեր դպրոցների ավագ սերնդի ներկայացուցիչները¹²:

Երաժշտական հնչողությանն ու կառուցվածքին ուղղված նոր գաղափարների արդյունքներն ու հետևանքները դրսևորվել են երաժշտական արվեստի տարբեր ոլորտներում՝ ստեղծագործական, կատարողական-արտահայտչական, ձևավորելով մի մշակույթ, որը, իր դրույթներով ու խնդիրներով հանդերձ, այժմ բնութագրվում է որպես «պատմական ավանգարդ»: Ավանգարդին հարելու ստեղծագործական հուզավառության գրգիռները տարածվել են աներևակայելի արագությամբ: Այս առանձնահատուկ երաժշտական «գրագիտությանը» տուրք են տվել և հետագայում այն վերաարժևորել նաև հայ կոմպոզիտորներից շատերը, այդ թվում՝ Ռուբեն Սարգսյանը:

Դա հայ ժամանակակից կոմպոզիտորական արվեստի բուռն ժամանակաշրջան էր. երաժշտական նոր մթնոլորտի ու չափանիշների ձևավորման և վերափմաստավորման մի նոր փուլ՝ իր բազմաձայն ընթացքով, որտեղ բարդ էր լսելի դարձնել սեփական խոսքը:

Սարգսյանի երաժշտական խոսքը լսվել է առաջին իսկ ստեղծագործական փորձերից: Նրա երկերն առիթ են տալիս մտորելու, մղում արտատեքստային իրողությունների մակարդակում ձևակերպել հեղինակի երաժշտական լեզվից ու հնչյունային մթնոլորտից ստացած տպավորությունները: Որքանով են իրավացի այդ խոսքերը՝ դժվար է դատել, սակայն զարմանալի օրինաչափությամբ կոմպոզիտորի երաժշտությունն ինտելեկտուալ խոսույթ է ձևավորում: Եվ այս առումով իմ վիրտուալ զրույցը Ռուբենի հետ՝ նրա մտքերի և դատողությունների, նրան տրված երաժշտագիտական բնութագրերի նկատառումով, միտված է նրա երաժշտական ժառանգության մեկնաբանմանը՝ ժամանակի հոգևոր-մշակութային միջավայրի առանձնահատկություններին ու երաժշտատեխնոլոգիական նվաճումներին ուղղված

¹² I. Medic. The Ideology of Moderated Modernism in Serbian Music and Musicology. – Muzikologija, 2007, p. 283–284; J. Kudinš. Fragmentary and Moderate Modernism. – in Latvian Music History, Culture Crossroads. Latvian Academy of Culture, 2018, p. 119.

մասնակի անդրադարձներով: Վերլուծական-մեկնաբանական նման մոտեցումն օգնում է ըմբռնել կոմպոզիտորի գեղագիտական-գեղարվեստական պատկերացումներն ու լեզվաոճական սերտ առնչությունները ժամանակակից երաժշտարվեստին՝ առանց խստորեն հետևելու նրա երկերի ժամանակագրությանն ու ստեղծագործական կենսագրության հետևողական ընթացքին:

* * *

Ռուբեն Սարգսյանի ստեղծագործական ժառանգության մեջ առանձնանում են մի շարք երկեր, որոնք պայմանականորեն կարելի է անվանել ինքնարտահայտումներ՝ անակնկալ դրսևորումներով, և դրանց քննությունը, անխուսափելիորեն, սուբյեկտիվ և օբյեկտիվ զգացողությունների ու տպավորությունների միասնություն է ենթադրում: Ստորև ներկայացվող ստեղծագործությունները, անկախ իրենց ստեղծման տարեթվերից, ընտրված են որպես կոմպոզիտորի երաժշտական խառնվածքին ներհատուկ արտահայտչական երեսակներ, որոնք ամենատարբեր ժանրերում ի հայտ են գալիս, ազդարարում իրենց ներկայությունը՝ չնույնանալով ստեղծագործական գիտակցության շերտերում:

Դրանցից մեկն է դաշնամուրի և լարայինների համար գրված Ռապսոդիան (2011), որը ժանրի հանկարծաբանական բնույթի ու կառուցի դասական օրինակներից է¹³: Իր մեղեդային-ինտոնացիոն վառ կերտվածքով, ռոմանտիկական ոգու պոռթկումներն ընդհատող հեղինակային խոհուն ռեպլիկներով, սահուն և դիսկրետ ընթացքների մեջընդմիջումներով այն կոմպոզիտորի ներաշխարհի վառ արտացոլումներից է՝ հագեցած նաև վիրտուոզ հատվածներով:

Թվում է, թե մտածող արվեստագետն ավելի շատ պետք է տարվեր տեսական-գեղագիտական դրույթներով և դրանց տեխնիկական իրացումներով: Սակայն Սարգսյանի մոտ հիմնականում ներդաշնակ միտքն ու հույզը տարբեր կշիռներով են հարաբերվում՝ դառնալով տվյալ երկի ներքին տոնայնական ցուցիչը: Տրամադրությունների և մտքերի կտրուկ փոփոխությունների հաջորդական հոսքը մշտաբարուն բանականություն ունեցող կոմպոզիտորի նախընտրելի կառուցողական սկզբունքներից է: Ընդհանուր քնարական-դրամատիկ հարաբերության ֆոնին հնչում են ազգային քաղաքային ելևէջներ և ակնարկներ: Հաճախ դաշնամուրը հարվածային ռիթմիկ օստինատո է դառ-

¹³ Ռապսոդիան նվիրված է առաջին կատարող՝ դաշնակահարուհի Սոնա Բարսեղյանին:

ՌԱՊՍՈՐԻԱ

Դաշնամուրի և լարային նվագախմբի համար

J = 50

Piano
f

Violini I
pp div.

Violini II
pp div.

Viole
pp div.

Violoncelli
pp

Contrabassi
pp

Detailed description: This system of musical notation includes six staves. The Piano part is at the top, marked with a tempo of *J = 50* and a dynamic of *f*. It features complex rhythmic patterns with triplets and slurs. Below it are the Violini I and II staves, both marked *pp* and *div.* (divisi). The Viola, Violoncello, and Contrabasso staves are also marked *pp*. The Viola part includes a *div.* marking. The Violoncello and Contrabasso parts have a *b_e* (flat) marking. The system concludes with a hairpin symbol indicating a dynamic change.

Pno.

Vln. I

Vln. II

Vle.

Vc.

C-bassi

Detailed description: This system of musical notation includes six staves. The Piano part is at the top, featuring complex rhythmic patterns with triplets and slurs. Below it are the Violini I and II staves. The Viola, Violoncello, and Contrabasso staves are also present. The system concludes with a hairpin symbol indicating a dynamic change.

նում նվազախմբի համար և, ինչպես բազմաթիվ կամերային ստեղծագործություններում, օժտված է խիստ անհատականացված գործառույթով: Որպես սկզբունք, Սարգսյանի բոլոր գործերը ինքնատիպ ձևակառուցվածքային լուծումներ են ստանում՝ իմաստային գեղագիտական շեշտադրումներով, տվյալ դեպքում՝ մեղեդային շերտի նոստալգիկ զգացողությունների հեռանկարային վերընծյուղումով:

Ռեպրոդիան հեղինակի երաժշտական մտածողության երևակայական ընթացքը դաշնամուրի հնչողությամբ վերարտադրող երկ է:

Իր երազների ու մտորումների աշխարհում հեղինակն անկեղծ է և գերապատվություն տալով կամերային-անսամբլային և գործիքային կոնցերտի ժանրերին՝ չի խուսափում նաև մեղեդային նյութի տոնայնական զարգացման դասական սկզբունքներից:

Ռոմանտիզմի հախուռն արտահայտչականությունն ու էքսպրեսիոնիզմի սուր հոգեկան խռովքի դրսևորումները ասես մասամբ հավասարակշռում է նեոկլասիցիզմը՝ մասնակի վերադարձով դեպի դասական ձևերն ու դիսոնանսներով հագեցած տոնայնական հարմոնիաները, դիատոնիկ հնչյունաշարերը, բարդ և հատու ռիթմական դարձվածքները:

Հաճախ է նշվում, Ստրավինսկու նեոկլասիկական գեղագիտության ազդեցությունը տարբեր ազգերի կոմպոզիտորների կամերային, սիմֆոնիկ գործերում: Անկասկած, հստակ դասական երաժշտամտածողության և ազգային էլեմենտի տարաբնույթ աղբյուրներից բխող թեմատիկ կիրառություններն ու դասական ձևերի անսովոր և միմյանց չկրկնող լուծումներն իրենց տեսական գեղագիտական հիմքերն ունեն նեոկլասիցիզմի դրույթներում:

Այդ ընդգրկուն տեխնիկական ներկայանակը՝ գեղարվեստական վարպետության հզոր ցուցիչներով կիրառված Բարտոկի, Ստրավինսկու և նորարար այլ կոմպոզիտորների ստեղծագործություններում, խոր հետք է թողել նաև հայ կոմպոզիտորների ինքնատիպ մտահղացումների վրա, որոնցում համատեղված են տարբեր՝ դիսոնանսներով և հարմոնիկ պրոգրեսիվներով հագեցած տոնայնական և սերիային մտածողության սկզբունքները, ալեատորիկ և նեոարխայիկ տարրերը և այլն: Այն է՝ կոմպոզիտորի ստեղծագործական ոճը ենթադրում է նաև հիշատակված ոճական գեղարվեստական ուղղություններին հատուկ հատկանիշների, խորհրդանշական բաղադրիչների հարաբերության ձևերի, ընդհանուր առմամբ մշակութային ասոցիացիաների և փոխառությունների ողջ ցանցի իմաստավորումը: Նորօրյա երաժշտական կոմպոզիցիայում, որտեղ խախտված կամ անտեսված են

երաժշտության հիմքերը՝ տոնայնության, ձայնակարգի, ձևի, ֆունկցիոնալ հարմոնիայի, ռիթմի և մեղեդու դասական պատկերացումների առումով, փոխվում են նաև ընկալման ու արժևորման չափանիշները, առաջնային գործոն է դառնում կոմպոզիտորների մասնագիտական փորձառությունն ու գիտելիքի պաշարը ունկնդրին տեխնիկապես և գեղագիտորեն ազդեցիկ ու համոզիչ հաղորդելու շնորհը՝ անհատական ընկալումների ու վերապրումի, ժամանակի և երաժշտական անցյալի բազմաշերտ միակցություններում:

Ինչպես գրականության, այնպես էլ երաժշտության մեջ ազդեցության տեսությունը, որ բողոք է առաջացնում ստեղծագործողների մոտ և ընկալվում որպես «քննադատական մեղադրանք», մերժվել ու տեղը զիջել է միջտեքստային երևույթների, կապերի և փոխառնչությունների դրույթին: Այդ փոխհարաբերությունների երևակումը թույլ է տալիս բացահայտելու տվյալ տեքստի կապակցվածությունն անցյալի կամ ներկայի մշակութային հսկայածավալ ժառանգության տարբեր աղբյուրներին: Կոմպոզիտորը լայն հնարավորություններ ունի ընտրելու մշակութային շրջապատից այն գաղափարական դրույթներն ու սկզբունքները, որոնք նպաստում են նրա ինքնարտահայտմանը՝ որպես անհատ ստեղծագործողի: Ավետ Տերտերյանը, խոսելով մարդկային փորձի արդյունքում կուտակված որոշակի երաժշտաարտահայտչական միջոցների մասին, նշում է, որ դրանք ամրագրվելով հասարակության հիշողության մեջ դառնում են համընդհանուրի սեփականությունը և անհրաժեշտաբար կիրառվում՝ արտահայտելով կոմպոզիտորի գաղափարը, նրա հոգեվիճակն ու հոգևոր աշխարհը: Եվ եթե հեղինակն իրեն սահմանափակում է երաժշտական նյութի կազմակերպման մի որոշակի համակարգով, ապա դա հանգեցնում է ինքնարտահայտման պարփակմանը նեղ տիրույթում¹⁴: Եվ այս առումով ակնարկները, հարասացություններն ու մեջբերումներն այն էական տարրերն ու միջոցներն են, որոնցով կարելի է լուսաբանել և ըմբռնել տվյալ երկը¹⁵: Ընդ որում, փոխառնված ոճական սկզբունքների կիրառությունների առկայությունը տարիմաստ է՝ գեղարվեստական չափանիշի հավաստում, հիշե-

14 А. Тертерян. К вопросу о музыкальном творчестве. Армянское искусство на современном этапе. Ереван, 1987, с. 124.

15 Շոշափված խնդիրն արդիական է ամենատարբեր մշակույթներին առնչվող հրապարակումներում, հատկապես, երբ քննության առարկա են դառնում տվյալ երաժշտական ավանդույթում մոդեռնիզմի ձևավորման հանգամանքներն ու Ստրավինսկու նեոռոմանտիզմի ազդեցության դրսևորումները (տես Emilio Casco Centro. Music in 1930s Mexico: Cultural, Modernism, and Identity, PhD, University of London, 2019, Chapter 5, Musical Modernism in Mexico: An Intertextual and Categorical Approach, p. 238–240):

ցում, նոստալգիկ, լավատեսական կամ հոռետեսական տրամադրության դրսևորում՝ անորոշ իրականության մթնոլորտում: Ահա այս հերմենևտիկ դիրքերից ևս կարելի է մոտենալ Ռուբեն Սարգսյանի երկերին: Չափազանց բնութագրական օրինակ է «Սև պարահանդես» (2010) կամերային-գործիքային ստեղծագործության ներտեքստային հարացույցը, որին կանդրադառնամ կոմպոզիտորի երաժշտական աշխարհի ներկայացման համապատասխան տեղում:

Այս հպանցիկ դատողությունները սոսկ ուրվագծում են այն մոտեցումները, որոնք առկա են ժամանակակից կոմպոզիտորական ստեղծագործությանը նվիրված ուսումնասիրություններում: Եվ իմ հղումներն արդի երաժշտարվեստում կայացած երևույթներին նպատակ ունեն հնարավորինս հիմնավորել գրքի նախաբանում նշված ցանկությունը՝ դիտարկել, վերլուծել և ներկայացնել Սարգսյանի ստեղծագործություններն առավել լայն մշակութային համատեքստում՝ ակնհայտ և ընդհանուր իրողությունների, երաժշտական մտազուգորդումների և փոխառությունների շրջանակներում: Մինևույն ժամանակ հարկ է նշել, որ ամեն մի առանձին ավանդույթում այլ է միջավայրը, քաղաքական մշակութային շփման պայմաններն ու հարաբերությունները համաշխարհային երաժշտարվեստին: 70-ականների հայ կոմպոզիտորները կրել և արտացոլել են պոստմոդեռնի ազդեցությունները միջնորդավորված և առանձնահատուկ մթնոլորտում, որը նրանց ոճական-գեղագիտական կողմնորոշումներն ուղղորդել է դեպի ազգային ավանդույթի տարբեր շերտերը՝ շրջանառելով միջնադարյան հոգևոր և աշխարհիկ մոնոդիայի կենսունակ ակունքները: Նրանց ստեղծագործությունները հագեցած են երաժշտական անցյալը ոգեկոչող ժանրային բացահայտ ակնարկներով, մեջբերումներով, ռեմինիսցենցիաներով: Այն է՝ միտված են ներկայի իմաստավորմանը պատմական, բայց ոչ «միաձայն» հնչողությամբ և լսողությամբ, այլ՝ ժամանակների, կառուցվածքների և ոճերի «բազմաձայն» ու ընդհատ ցուցադրումներով:

Ցայտուն օրինակներից է Ռուբեն Սարգսյանի Դաշնամուրային տրիոն (1984)՝ հատու ինտոնացիոն հայտով սկսվող դրամատիկ ստեղծագործություն, որի հնչյունային հուզական մթնոլորտի փոփոխականությունը պայմանավորված է տարբեր երաժշտաոճական՝ դասական, ազգային, ժողովրդական-քաղաքային տարրերի ընդմիջարկումներով: Արտահայտչական-իմաստային նման ազդեցիկ ուժով են բնութագրվում նաև այլ գործերում առկա սկզբնական, դրամատիկ մեծ ներուժ պարունակող դարձվածքները, օրինակ՝ թավջութակի և սիմֆոնիկ

նվագախմբի համար գրված կոնցերտում, որը 1977 թ. արժանացել է «Տարվա լավագույն ստեղծագործություն» մրցանակին:

Տրիոյի կամային-ռեպետիտիվ ելևէջային մոտիվն իր փուլած տարածական հնչողությամբ, որ, ասես, հեղինակի մուտքն է նախապատրաստում երաժշտական տարածք, և որից բյուրեղանում է հիմնական ինտոնացիոն գաղափարական լիցք կրող թեմատիկ միջուկը, համառորեն հնչում, փոխակերպվում և ուղիներ է հարթում հակադիր ոլորտների բախումների համար:

Այդ փոխակերպումների շղթայի ընթացքին պարբերաբար հնչում է հեղինակային բանաձևված խոսքը՝ ազգային երանգների քողարկված ու բացահայտ շարադրումով, կոմիտասյան երգերի ելևէջների (օրինակ, «Ալ այլուխս»), դաշնամուրային հյուսվածքների, ռեգիստրային ընդգրկումների սկզբունքներով, դիսոնանս համահնչյունների ազդեցիկ կիրառություններով: Ստեղծագործությունն ուշագրավ է ասելիքի բազմապլանայնությամբ, դինամիկ ընթացքով, որ ընդհատվում և պարբերական-հատվածական լարում է հաղորդում կառույցի աներևակայելի մոտիվային սինկրետիզմին:

Միևնույն ելևէջի սեկվենցիոն տարբերակային կրկնություններն ընդհանուր գիտակցական դաշտում բեմական պատկերաշար են ստեղծում՝ դերերի հստակ բաշխումով և ավարտվում տարածայնությունների հաղթահարումով: Մեկմասանի այս դրամատիկ ստեղծագործությունը շատ է կատարվել և իր արժանի տեղն է գրավել կատարողական պրակտիկայում: Այն, ասես, բուռն գրույց-քննարկում է՝ քնարական շեղումներով, որի հուզական-գաղափարական հագեցվածությունը դուրս է ժամանակային սահմանափակումներից, մի իմացական խորհրդանիշ է, որի տարողունակ շերտերն անվերջ բացահայտվում են: Իրավամբ, Ռուբեն Սարգսյանի բազմաթիվ գործեր տեսողական-բեմական մտազուգորդումներ են առաջացնում: Սա, թերևս, ինքնօրինակ մտածողություն է՝ խոր դրամատիկ զգացումները վառ կերպավորումներով, տպավորիչ մեղեդային դարձվածքային բնութագրերով ներկայացնել դիսոնանս կլաստերների համառ հնչողության իմաստային ընդգծումներով: Երեք գործիքով ձեռք բերված դրամատիզմն ու փոփոխական լարումը՝ առանց նյութի հետևողական զարգացման, գործիքների անհատականացված դերերն ու մուտքերը, ինչպես նաև անսամբլային հզոր հնչողությունը, անշուշտ, առավել մեծ կառույցներում կարող էին մարմնավորվել: Սակայն ընտրված ժանրը բնավ չի նվազեցնում կոմպոզիտորի հույզերի և ասելիքի ներգործության ուժը՝

ՏՐԻՈ

Ջութակի, թավջութակի և դաշնամուրի համար

Vivo $\text{♩} = 140$

Violino *mf*

Violoncello *mf*

Piano *mf*

mp

mp

simile

Vivo ♩ = 140

71

Violino

Violoncello

Piano

72

ամփոփված սեղմ ձևում: Տարողունակ խոսքը ձևակերպված է հստակ, հատու հարվածներով, զգացմունքների ընդհատ հերթագայումով, ազգային հնչերանգների վարպետ ներմուծումով ժամանակակից լեզվամտածողական դաշտ:

Բոլորովին այլ ինքնաբացահայտում է «Լեգենդի Մահը» դաշնամուրային պիեսը, որ կոմպոզիտորի վերջին ստեղծագործություններից է (2012 թ.):

Ինչ լեգենդ է՝ իր երաժշտական աշխարհի, իրականության, թե ազգային երաժշտական ավանդույթի օտարման կամ կորստի կանխազգացումն է և դրա մերժումը՝ ժողովրդական-քաղաքային պարի ռիթմի և ձայնակարգային-ելևէջային դարձվածքների գիտակցված ցուցադրումով: Ռոնդոյի ազատ-հանկարծաբան սխեման հնարավորություն է տվել մեկնարկել և Շալախո պարի թեմատիկ տարբերակումներով ու կոնտրաստային հատվածների միակցություններով ընդգծել արտաերաժշտական իմաստ կրող ակնարկները: Իրողությունների հակադրական մթնոլորտում ազգային ընդգծվում է ընդհուպ քառորդ տոնային, ոչ տեմպերացված հնչողության նմանակումով, խրոմատիկ սեկվենցիոն դասույթներով: Սպառվել է կոմպոզիտորի երաժշտական աշխարհի ժամանակը, փլուզվել են նրա պատկերացումները: Դիմումը ազգայինին՝ Շալախոյի մարմնավորումով, չափազանց պարզ, բայց խոսուն լուծում է՝ բուն ապրումների և կենսունակ պարի հակադրական սկզբունքով: Հեգնանք է, թե իրողության ընկալում և այդ իրողության անհատական երևակումը, որ կոմպոզիտորն իրականացրել է այս, ինչպես նաև մի շարք այլ ժանրային ձևերում:

Հակասական և իրարամերժ մեկնաբանություններ կարելի է տալ: Արդյո՞ք դրանց մասին է մտածել հեղինակը, թե այս երկում հիմնարար դրամատուրգիական ու հոգեբանական կշիռ ունեցող Շալախո պարի ռիթմաինտոնացիան է նրան հրապուրել, որքան էլ այն առաջին հայացքից հոգեհարազատ չթվա կոմպոզիտորի մտածողությանն ու երաժշտական խառնվածքին: Եվ արդյո՞ք սոսկ ազգային երաժշտամտածողության ու ազգային նյութի բազմիմաստ լուսաբանումով է պայմանավորված ստեղծագործության պաթոսը: Խելամիտ հաշվարկված և գեղարվեստորեն տպավորիչ հեգնանքի միջոցով է ներկայացնում հեղինակն իր լեգենդը, ինչպես նաև՝ արտահայտում իր ընդվզումը վերջինիս վախճանին: Կարելի է խորհրդածել և սուբյեկտիվ զգացողություններ շարադրել անվերջ: Գուցե պարզապես ձայնակարգային հիմքի դրամատիզմն է տրամադրել կոմպոզիտորին: Տվյալ ձայնակարգը, ինչպես էլ որ անվանենք՝ հարմոնիկ մինոր, կրկնակի երկակի,

ԼԵԳԵՆԴԻ ՄԱԿԸ
Դաշնամուրի համար

Vivo ♩ = 140

գարտուրի ձայնեղանակ, ԳՁ, թե մերձավորարևելյան ավանդական երաժշտության մոդալ համակարգի Չարգահ ձայնակարգը՝ մեծացված սեկունդայի հաստատուն ներկայությամբ, չափազանց ինքնատիպ երանգավորում ունի: Դաշնամուրային այս երկի պարզությունն ու հյուսվածքը մտազուգորդվում են նաև հայ կոմպոզիտորական դպրոցի ակունքներում կանգնած Նիկողայոս Տիգրանյանի գրառած և դաշնամուրի համար մշակված Չարգահի՝ իր բնութագրմամբ «պատերազմական պոեմի» հետ, որի ավանդական, գործիքային կատարում-

ներում կոնտրաստային պարային էպիզոդը՝ գյաֆը Շալախուն է¹⁶: Ընդհանուր առմամբ, այս ստեղծագործությունը կարող է բնութագրվել որպես Շալախոյի թեմայով ռոնդո-վարիացիա, որտեղ տարբեր ելևէջային շերտերի համադրումներով կոմպոզիտորն ինքնատիպ ձևով ստիպում է մտորել ազգային պարի, ազգային ոգու արտահայտչական ուժի մեկնաբանության վերաբերյալ:

Այս և տարբեր տարիներին գրված մի շարք այլ գործերում ակնառու ստեղծագործական սկզբունքների և արտահայտչաձևերի ետևում կոմպոզիտորի գեղարվեստական մտածողության, գիտելիքի, էթիկական և էսթետիկական արժեքների ու կողմնորոշումների համակարգն է, որ, անկախ ոճական զանազան հոսանքներին հետևելու ներքին մղումին և գիտակցությանը, պահպանում է իր կայուն հատկանիշները: Իր հարցազրույցներից մեկում Ռուբեն Սարգսյանն ասել է, որ թեև ինքը որևէ ուղղություն չի ընտրել իր համար, սակայն որոշակի կապ է տեսնում նեոկլասիցիզմի և էքսպրեսիոնիզմի հետ. «Իմ ստեղծագործության մեջ մերթ մեկն է բռնկվում, մերթ՝ մյուսը»¹⁷: Այդ տարած բռնկումներով հանդերձ, մեծատաղանդ կոմպոզիտոր Էդգար Հովհաննիսյանը Ռուբեն Սարգսյանի մտածողությանն ավելի բնորոշ է համարել ձգտումը դեպի դասականություն, որն առավել շահեկան է լուսավորում նրա երաժշտության բարոյաէթիկական նկարագիրը¹⁸:

Ամեն մի կոմպոզիտոր իր ազգային ինքնության հիմնավորումներում ֆոլկլորին կամ հոգևոր երգարվեստին դիմելու բնական և օրինաչափ մղումներում ձգտում է ինքնօրինակ լուծումների: Անշուշտ, բոլորին տրված չէ առնվազն ազգային երաժշտության պատմության մեջ նորարար լինելու աստվածային շնորհը: Ժամանակակից երաժշտության զանազան խնդիրներին առնչվող խորհրդածություններում Ռուբեն Սարգսյանը մշտապես ընդգծում էր ժամանակի ոգու զգացողությունը և գտնում, որ իրական նորարարությունը միայն հանճարեղ կոմպոզիտորներին է հասու, քանի որ ամեն ինչ փորձված է: Որպես ժամանակի նորարար՝ նշում է ռուսական Արծաթե դարի փայլուն ներկայացուցիչ Ալեքսանդր Սկրյաբինի անունը, չվարանելով հավելել, որ նման վիթխարի և մեծագույն խնդիրների ինքը հետամուտ չէ, որովհետև

¹⁶ Տես Լ. Երնջալյան. Հայ-իրանական երաժշտական կապերի պատմությունից, Երևան, 1991, էջ 60–64:

¹⁷ Տես Բ. Սարգսյան. Присутствие духа – мощный стимул. Беседа вела Наталия Гомцяна. – «Музыкальная академия», М., 2005, №1, с. 205–207.

¹⁸ Այս մասին տես Թ. Գումանյան. Разнообразная программа. – Коммунист, Ереван, 11.IV.1987.

դրանք ձեռք չեն բերվում արհեստականորեն: «Պետք չէ օրիգինալ ձևանալ, ավելի լավ է հստակ ձևակերպել գաղափարներն ու նպատակները, իսկ թե ինչ դուրս կգա՝ միայն Ամենակարողին է հայտնի»¹⁹: Կոմպոզիտորի երաժշտությունը՝ անկեղծ և գրավիչ, ասվածի վկայությունն է:

Ռուբեն Սարգսյանի մտքերը՝ ժամանակակից երաժշտարվեստում սեփական դեմքը պահպանելու և երաժշտագեղագիտական ըմբռնումներին հավատարիմ մնալու, ինչպես նաև անցյալի ավանդույթների վերաարժևորման ու նորովի մեկնաբանման հարցերում, նրա սերնդակից, կրտսեր ու ավագ շատ կոմպոզիտորների են հուզել: Դեռևս 1979 թ. հայ ժամանակակից երաժշտության հայտնի դեմքերից՝ Մարտուն Իսրայելյանն իր հարցազրույցում նշել է. «Իմ կարծիքով նոր ձևեր ստեղծում են միայն մեծերը: Հնարավոր է, որ ժամանակակից կոմպոզիտորը ինչ-որ չափով նորովի մեկնաբանի այս կամ այն ձևը, բայց այն արմատապես փոխելը, նորը ստեղծելը՝ ... միայն մեծերին է վիճակված»²⁰:

Հայ կոմպոզիտորներից քչերն են շարադրել իրենց մտքերը, արտահայտել իրենց վերաբերմունքը ժամանակակից բազմաձև երաժշտարվեստին հատուկ գեղագիտական և տեխնոլոգիական երևույթներին, վերլուծել կամ մեկնաբանել սեփական գործերը՝ ժամանակին բնորոշ մշակութային-գաղափարախոսական միջավայրում: Նշանակալի բացառությունների շարքում են Ավետ Տերտերյանը, Լևոն Աստվածատրյանը, Գագիկ Հովունցը, Տիգրան Մանսուրյանը, որոնց դատողությունները, գրույցներն ու հրատարակած հոդվածներն ընդգրկված են հայ երաժշտագետների աշխատանքերում: Դրանք արժեքավոր նյութեր են և հեղինակների աշխարհընկալման, ազգային ինքնության պատկերացումների, և թե ժամանակի ստեղծագործական մթնոլորտն ու արվեստագիտական միտքը ճանաչելու տեսանկյունից²¹: Այս առումով Ռուբեն Սարգսյանի սակավաթիվ հոդվածները, հարցազրույցներն ու հեռուստատեսային կամ ռադիոհաղորդումներն առանձնակի կարևորություն ունեն՝ արվեստագետի հոգու և մտքի բանալին փնտրելիս: Կոմպոզիտորի բանավոր խոսքում հնչած մտքերը որոշակիորեն ուղղորդիչ են դառնում նրա երաժշտական խոսքի մեկնություններում:

¹⁹ Տե՛ս «Присутствие духа – мощный стимул». – «Голос Армении», 7. II. 2002.

²⁰ «Եթե արվեստագետը քաղաքացի է», Հարցազրույց կոմպոզիտոր Մարտուն Իսրայելյանի հետ. – «Սովետական արվեստ» (Երևան), 1979, № 5, էջ 32:

²¹ P. Тертерян. Авет Тертерян. Диалоги. Ереван; 2010; С. Саркисян. Նշվ. աշխ., էջ 215–231; Ա. Արևշատյան. Տիգրան Մանսուրյան, Երևան, 2025, էջ 179–187:

թի հետ, որի քննությունն ի հայտ է բերում կոմպոզիտորի մտածողությանն առավել բնորոշ ոճական տարրերն ու միջոցները, որոնք հետևողականորեն կիրառվում են նրա կամերային-գործիքային երկերում՝ նպաստելով հեղինակային գրչի և ինքնության ճանաչելիությանը: Դրանցից են նաև տպավորիչ թեմատիկ սաղմերը, որ տարածական փոխակերպումներով բացահայտում են իրենց ներքին իմաստային լիցքերը՝ փոխատեղված մասնիկների համադրություններով: Կանոնական տարբեր մոտիվների տրանսպոզիցիոն հնչողությամբ և բազմապիսի զուգորդումներով ընդլայնվում է դիապազոնը և որոշակի լարում ստեղծում: Այսպես կոչված տոնայնական ձևերում (սոնատ, կվարտետ, սիմֆոնիա) ստեղծված ոչ-տոնայնական գործեր, ֆունկցիոնալ հարմոնիայի տրամաբանությամբ հղկված ավանդական ձևերում՝ բազմաշերտ հատվածներ և տարածական ակնարկներ, որոնց միջոցով էլ ապահովվում է կառույցի հարաբերական միասնականությունը՝ բազմակի և ընդհատ գազաթնակետերի ձեռքբերման դրամատուրգիական սկզբունքով: Այս ինքնատիպության ցուցիչները, որ առկա են Ռուբեն Սարգսյանի երաժշտության մեջ և պայմանավորված են ժամանակակից արվեստի ընդգրկուն համայնապատկերում գոյակցող բազմաոճ գեղարվեստական հոսանքներին և ուղղություններին հատուկ տեխնիկական միջոցների խոր իմացությամբ և անհատական ըմբռնումներով, նրա երաժշտությունը, անկասկած, հարաբերելի են դարձնում նեոկլասիցիզմի, էքսպրեսիոնիզմի և նեոռոմանտիզմի բնորոշ հատկանիշներին:

Օտարաոճ տարրերի ընտրության և համատեղման սկզբունքները Նոր երաժշտության մեջ (Թեոդոր Ադորնոյի տերմինն է)²² ընթացել են ժանրերի կազմալուծումների, առանձին տարրերի տրոհման և այլ երևույթներին զուգահեռ: Երաժշտական կառույցների և պարտիտուրի անհատականացման և անկրկնելիության չափազանցված միտումները նպաստել են ժանրերի դասական պատկերացումների փլուզմանը²³:

²² Գերմանացի փիլիսոփա, երաժշտագետ, Ֆրանկֆուրտի դպրոցի ազդեցիկ անդամ Թեոդոր Ադորնոն (1903–1969) ավանգարդի կոմպոզիտորների՝ Շյոնբերգի, Բերգի և Վեբերնի մոդեռն երաժշտության պաշտպանն ու տեսաբանն էր, ով նրանց առոնալ և 12-տոնային ստեղծագործությունները՝ ավանդական հարմոնիկ կառույցների աներկբա ժխտումով, համարում էր ժամանակակից կյանքի անհաճո իրողություններին հակադրվելու միջոց:

²³ Այս ծայրահեղ անկրկնելիության երևույթին հետամուտ էր հատկապես Վեբերնը (տես J. Covach. Dahlhaus, Schoenberg, and the New Music. – In Theory Only, vol. 12, nos. 1–2, p. 19–42): Հեղինակը հանգամանալից քննարկման է ենթարկում Դալիաուսի իրապարակված 28 հոդվածներում արտացոլված դատողությունները Նոր երաժշտության մեջ կիրառվող սկզբունքների, կառույցների, ժանրային ընկալումների և մեկնաբանումների, գլուխգործոցների ու

ստեղծագործական էությունը լիցքավորող ոլորտներ ու մեծություններ: Նրան հուզել են Մալերն ու Շյոնբերգը, Ստրավինսկին ու Շոստակովիչը, Խաչատրյանն ու Բարտոկը, որոնց երաժշտությամբ ըմբռնել է խորհրդավոր այն ուժը, որը ստեղծագործողին դուրս է բերում սովորական փորձառության սահմաններից՝ տանելով դեպի «վերին ոլորտները»:

Հայտնի է, որ շյոնբերգյան «երաժշտական իդեայի» ակունքները բազմաթիվ են և հարում են գերմանական իդեալիստական փիլիսոփայությանը: Հետաքրքիր է, որ որոշ հեղինակներ հետամուտ են այն մտքին, որ Մալերի «հոգևոր ժառանգորդ» Շյոնբերգի նորարարական գրելաճի՝ 12-տոնային շարքի նախադրյալներն անբավարար չափով են լուսաբանված և կարիք ունեն հստակեցվելու հոգևոր ու կրոնական տիրույթներում: Այդ համակարգի ծագումնաբանական ակունքների մեկնություններն առնչվում են Աստվածային արարման գաղափարին՝ արտացոլված հրեական լիտուրգիական ավանդույթի խորհրդարանության մեջ: Նշվում է, մասնավորապես, որ իր փիլիսոփայական-գեղագիտական ըմբռումներում և ստեղծագործական սկզբունքներում Շյոնբերգը հետևում էր Հին Կտակարանի (կամ եբրայական Աստվածաշնչի) կանոնական տեքստերին, գիտակցելով իր՝ որպես ընտրյալի բարձր առաքելությունը երաժշտության (հատկապես՝ գերմանական) ապագայի և առաջընթացի գործում²⁶:

Բնականաբար, սերիային կամ այլ մեթոդներով ստեղծագործող արվեստագետներից շատերը մասնակի ընդգրկումներով և ինքնուրույն մոտեցումներով են կիրառել Շյոնբերգի մեթոդը, հետևել նրա երաժշտական լեզվի փոփոխություններին՝ «Սերիային Ողիսականին»²⁷, որն իր դրոշմն է թողել նաև հայ կոմպոզիտորների ստեղծագործական մտահորիզոնի ձևավորման վրա:

Ժամանակակից երաժշտությանն առնչող գիտական դրույթների և դրանց տեսական հիմքերի տեղաշարժերը լայնորեն քննարկվել և ներկայացվել են XX դարի 50-ականներին Դարմշտադտում կազմակերպված «Նոր երաժշտության» միջազգային ամառային կուրսերի ժամանակ, որտեղ սեմինարներով և դասախոսություններով հանդես

²⁶ A. Ringer. Arnold Schoenberg. The Composer as Jew. Oxford, 1990, p. 75–82.

²⁷ Տե՛ս E. Haimo. Schoenberg's Serial Odyssey: The Evolution of his Twelve-Tone Method, 1914–1928, Oxford University Press (January 28, 1993): Այս խնդրի հանգամանակից քննության մասին տե՛ս նաև J. Covach. Schoenberg's "Poetics of Music", The Twelve Tone Method, and the Musical Idea, in Schoenberg and Words, ed. R. Berman and C. Cross (Garland Publishing), 2001, p. 309–346.

են եկել նշանավոր սերիալիստները՝ Շոտկհաուզենը, Մեսսիանը, Բուլեզը, Մադերնան: Մեսսիանը կոմպոզիցիայի դասեր է տվել, վերլուծել Վեբեռնի գործերը, ներկայացրել իր «Չորս ռիթմական էտյուդները», որոնց ազդեցությունը հսկայական է եղել սերիային տեխնիկայի ձևավորման հարցում: Երաժշտական-քննադատական, ինտելեկտուալ-ստեղծագործական այս լարված մթնոլորտում են ձևավորվել ապագայի երաժշտության «դիրքերն ու հնարավորությունները», երիտասարդ սերնդի կոմպոզիտորների ստատիկ, պուանտիլիստական, պատահական և այլ անվանումներ ստացած գործերը: Հակասական արձագանքներ է առաջացրել 1952 թ. Պիեռ Բուլեզի հրապարակած «Schoenberg est mort» («Շյոնբերգը մահացել է») մանիֆեստի հավակնություններով և կատեգորիկ ոճով գրված հոդվածը, որտեղ նա պարզաբանում է Դարմշտադտի դպրոցի քաղաքական մշակութային նպատակները: Կոմպոզիտորը նաև իր գաղափարներն է շարադրում Շյոնբերգի շարքերի կարևոր նշանակության և դրանց սխալ մեկնաբանումների վերաբերյալ, մինևույն ժամանակ մեղադրելով մեծ նորարարին այդ շարքերի հնարավորությունները մինչև վերջ չբացահայտելու և ռիթմի ու տեմպոի խնդիրների վրա չտարածելու համար: Հետագայում նա ընդունում է նաև, որ սերիային տեխնիկան և գեղագիտությունը իրենց ավարտին են մոտեցել՝ վերածվելով տոտալիտար նոր ակադեմիզմի, նոր ստեղծագործական դպրոցի, որն իր ողջ բազմազանությամբ հանդերձ տարածվել է ամբողջ աշխարհում²⁸: «Վիեննական հայտնագործություններից հետո ցանկացած երաժիշտ, ով իրապես չի փորձել և ըմբռնել դողեկաֆոն լեզվի անհրաժեշտությունը, անընդունակ է... իր նախորդ աշխատանքով նա բախվում է ժամանակի անակնկալ պահանջներին»²⁹:

Այսպես, երաժշտագիտական բառապաշարում հաստատված բանալի բառերով՝ իդեա, զարգացող տարբերակում, տրամաբանական պրոգրեսիա և այլն, ժամանակակից երաժշտության ուսումնասիրությունը, ասես, հեռանում է նախկին նկարագրողական նարատիվից՝ կենտրոնանալով Դալիաուսի կիրառած Նոր պարզություն հասկացություն-եզրի վրա, որով բնութագրվում են տարբեր մշակույթներում արտացոլ-

²⁸ Այս մասին մանրամասն տես F. Monteiro. *New Music, Darmstadt and Avant-garde*, in "The Portuguese Darmstadt Generation – the piano music of the Portuguese avant-garde", PhD. Thesis, University of Sheffield, 2003, p.1519. Աշխատանքում քննարկված են պորտուգալացի ավանգարդ կոմպոզիտորների դաշնամուրային գործերը, այսպես կոչված, «պատմական ավանգարդի» պարադիգմատիկ ասպեկտների համատեքստում:

²⁹ J. Goldman. *Boulez and the Spectralists Between Descartes and Rameau: Who Said What About Whom*, in *Perspectives of New Music*, vol. 48, no. 2, 2010, p. 214.

ված նմանատիպ միտումներն ու հոսանքները: Ոճական այս հոսանքի կամ շարժման տարբեր ներկայացուցիչների երաժշտության նկատմամբ կիրառելով իմաստային որոշակի սահմանափակումներով օժտված «New simplicity» տերմինը, հանրաճանաչ երաժշտագետը չի առաջարկում որևէ ավտերնատիվ տարբերակ: Նշելով պոստ-սերիալ ժամանակափուլում ի հայտ եկած շեշտված անհատական արտահայտչականության, խրոմատիկ տեխնիկայի և մի շարք այլ տեխնիկական խնդիրների սկզբունքային դրսևորումները, ի վերջո, վերադարձը դեպի ռոմանտիզմ և հին դասական ձևերի բազմաբնույթ մեկնությունները՝ անմիջականորեն կապված «պոստմոդեռնիզմին», նա, այսուհանդերձ, չի ընդունում այդ ամենակույ և ընդգրկուն բառը. նորարարության փոխարեն մշտապես կիրառում է «նոր պարզություն» և «նոր սուբյեկտիվություն» բնութագրերը³⁰: Ըստ էության, «նոր պարզություն» հասկացությունը, որ 70-ականներից հետո էլ շարունակական արտացոլումներ է ստացել և տարբեր դիտակետերից կիրառվել արևմտաեվրոպական ու արևելաեվրոպական կոմպոզիտորների գործերում, ներդաշնակ է նաև հայ կոմպոզիտորներից շատերի ստեղծագործական համակրանքներին: Որպես գեղարվեստական երևույթ՝ իր փիլիսոփայական և գեղագիտական դրույթներով, ամեն մի նոր ժամանակի համատեքստում այն անվերջ դրսևորվելու հնարավորություններ ունի՝ անցյալը նոր իրողություններին համադրելու և դրանք համատեղելու առումով:

Այդ ստեղծագործական-երաժշտաքննական նոր մթնոլորտում կորուսյալ գեղեցիկի, ձևի ու բովանդակության հակիրճ հայտերով ներկայացվող երաժշտագաղափարական կառույցներում խիստ սերիալիզմը հետին պլան է մղվում և դառնում ստեղծագործական մեթոդներից ընդամենը մեկը՝ ճանապարհի հարթելով այլ մոտեցումների համար: Այս ամենը գեղագիտական-փիլիսոփայական սկզբունքային նոր դիրքեր են առաջադրել կոմպոզիցիայի արվեստում՝ անձանոթ ուղիներ մատնանշել ակադեմիական երաժշտարվեստում, մասնավորապես «հոգևոր մինիմալիզմի» ուղղության ներկայացուցիչների՝ Հենրիկ Գորեցկու, Արվո Պյարտի, Ֆիլիպ Գլասսի և այլոց ստեղծագործություններում:

³⁰ Այս հարցի քննությունը տես *Isabel da Rocha. A Perspective of New Simplicity in Contemporary Composition: Song of Songs as a Case Study*, 2017. Հեղինակը հետազոտությանը կից ներկայացրել է նաև իր օպերային ռեչիտացիաները հիմնված Հին Կտակարանի տեքստերից «Երգ երգոց»-ի վրա, իրականացրած Նոր պարզության գեղագիտական և ոճական դրույթներով ու հերմենևտիկ մեկնաբանություններով:

Վերջապես, հիշենք նաև բազմաթիվ արվեստագիտական հղումները շոնբերգյան «սիրտն ու միտքը» համադրությանը, որտեղ նորարարը փաստարկում է երկուսի անհրաժեշտությունը երաժշտական կոմպոզիցիայում՝ քննելով իր վաղ շրջանի «Verklärte Nacht» («Փոխակերպվող գիշեր») գործիքային սեքստետը: Հոգու և մտքի, ռացիոնալի և իռացիոնալի դիստոմիկ կապի կամ ֆենոմեններից որևէ մեկի առաջնության երևակումը դարձել է կոմպոզիտորական արվեստի մեկնաբանման հիմնական առանցքներից մեկը: Ռուբեն Սարգսյանը յուրովի հաստատում է մեծ նորարարի դիրքորոշումը՝ «... տրամաբանությունն ու զգացմունքը պետք է փոխազդեն»: Ամեն մի անհատի պարագայում այդ հարաբերության տարրերը տարբեր կշիռներ ունեն և օգնում են որոշարկելու այն գեղագիտական չափանիշը, որը ըստ ամերիկացի երաժշտագետ Ռիչարդ Տարուսկինի, ազդեցություն-նորարարություն-կառույց սխեմայում է արտացոլվում, որով և գնահատվում է երաժշտությունը³¹: Անշուշտ, այդ եռանդամ մոդելի նշանակությունը հնարավոր չէ բացարձակացնել՝ աբստրահվելով ինքնին գեղագիտական արդյունքից: Հետազոտողի առանձնացրած չափանիշները՝ ա. արվեստագետի ներգործության ուժը մյուսների վրա, բ. տեխնիկական նորարարությունների ցուցանիշները և գ. կառուցվածքային հարցերին ուղղված քննադատության սահմանները³², առավելապես երաժշտության պատմական ընթացքի առանձնահատկությունները պարզաբանող ելակետային դրույթներ են, որոնք կարիք ունեն հավելյալ՝ խորքային ճանաչումների և բացահայտումների:

Ազգային երաժշտության ներմուծումը Արևմուտքի երաժշտական համատեքստ՝ միջազգային կոմպոզիտորական պրակտիկայում հաստատված երևույթներից է: Սակայն ազգային ինքնության գիտակցումն այդ օվկիանոսում, որպես ժամանակակից արվեստագետի և, ով ընկալվում և ընդունվում է որպես այդպիսին միջազգային ասպարեզում՝ չափազանց խրթին հարց է: Քաղաքական, գաղափարական զանազան համակարգերի պայմաններում ձևավորված արևմտյան ու խորհրդային մշակույթների արժևորման ելակետային դրույթներում ստերեոտիպեր են մշակվել, որոնցով տարբերվում են եվրոպական և ոչ եվրոպական մշակույթների ներկայացուցիչները համաշխարհային երաժշտարվեստում: Բնականաբար, «ունիվերսալ ժամանակակից վարպետի» գնահատական հազվադեպ է տրվում վերջիններին. որոշ

³¹ R. Taruskin, The Poietic Fallacy. – «Musical Times» 145, № 1886 (Spring, 2004, p.7–8).
³² Նույն տեղում, էջ 10:

վերապահումով այն հատկացված է Բարտոկին: Այդ չափանիշներով են բնութագրվում խորհրդային շրջանի կոմպոզիտորները ամերիկացի անվանի երաժշտագետ Ռիչարդ Տարուսկինի «Oxford History of Western Music» բազմահատոր հրատարակությունում³³: Հիշատակված բաժանումներով ու հակադրություններով գնահատվող խորհրդային շրջանի կոմպոզիտորական ստեղծագործությունը՝ այդ աշխատության «Դատապարտում և Ապաշխարում» («Denunciation and Contrition») բաժնում, իր բոլոր հիմնավորումներով, փոքր-ինչ միակողմանի երանգներ է պարունակում: Ստալինյան ժամանակափուլի բարդ և հակասական ստեղծագործական մթնոլորտին, գեղարվեստական արժևորման չափանիշներին առնչվող հարցերը քննարկվել և շարունակվում են քննարկվել և մեր օրերում³⁴: Ի դեպ, Արամ Խաչատրյանի անունը շոշափվում է «Սովետական երաժշտական մեծ քառյակի»՝ Պրոկոֆև, Շոստակովիչ, Մյասկովսկի, Խաչատրյան, և Կենտկոմի 1948 թ. հանրահայտ որոշման, ժդանովյան դիրեկտիվների քննարկումների՝ ֆորմալիզմի մեղադրանքների և արվեստը սոցիալիստական ռեալիզմի ուղիով զարգացնելու դրույթների համատեքստում: Մասնավորապես նշվում է, որ Խաչատրյանը Վրաստանում ծնված հայազգի կոմպոզիտոր է, Արևմուտքին հայտնի իր գունագեղ կոնցերտներով և «Սուներով պարը» ներառող բալետային սյուիտով³⁵:

Ժամանակակից հայ կոմպոզիտորի ստեղծագործության լուսաբանումներում նույնպես առնչվում ենք ազգային մշակույթում հաստատված ակադեմիական երաժշտության արդի պատկերացումների և արևմտյան ընկալումների ու չափանիշների հետ: Այսուհանդերձ, իր մշակութային հիմքերով և Արևելք-Արևմուտք դիխտոմիկ կապի օրգանական դրսևորումներով առանձնացող հայ կոմպոզիտորական ստեղծագործությունը միջազգային երաժշտարվեստի բնութագրական միտումների ինքնատիպ հայտերից է՝ մշակույթի ժառանգորդության ցայտուն դրսևորումներով:

Ինչպես ազգային տարբեր դպրոցների ներկայացուցիչները, այնպես էլ հայ կոմպոզիտորները յուրովի արձագանքել են Բուլեզի մանիֆեստում շարադրված մտքերին: Երաժշտագետ Սվետլանա Սարգսյանը,

³³ R. Taruskin. Oxford History of Western Music, six-volume work. Oxford University Press, 2005.

³⁴ Стів С. Матушак. Истерзанная Муза? Сочинение музыки при Сталине (1932–1953). – Сб. Творить идеологии вопреки, 2022:

³⁵ R. Taruskin. Music in the Late Twentieth Century, Chapter 1, Starting from Scratch.

Կարելի է քննության առնել Ռուբեն Սարգսյանի ժառանգությունն ըստ ժանրային դասդասումների՝ սիմֆոնիկ, կամերային-գործիքային, վոկալ, դաշնամուրային, և այստեղ պարզորոշ ուրվագծվում է նրա հակումը դեպի կամերային-գործիքային, սիմֆոնիկ և կոնցերտային ժանրերը: Սակայն կարելի է նաև շեղվել ավանդական ժանրային վերլուծական շրջանակներից և փորձել կոմպոզիտորին ներկայացնել նրա երաժշտությունից ստացած տպավորությունների և վերը հիշատակված ժամանակակից ոճական փոխառությունների, ինչպես նաև ազգային ավանդույթի նպատակամիտված վերաիմաստավորումների տեսանկյունից, որոնց էլ հիմնականում հետամուտ եմ այս գրքում:

Ավելին՝ չխորանալով երաժշտության իմաստի և դրա մեկնաբանության տեսական-գեղագիտական դիսկուրսի չափազանց հետաքրքիր մանրամասների՝ պարտիտուրի պոտենցիալ նշանակությունների ու կատարողական բազմազան մոտեցումների ոլորտում, նշեմ, որ լիովին կիրառելի եմ համարում Նիկոլաս Քուբի դրույթը, համաձայն որի՝ երաժշտության հերմենևտիկ քննությունը՝ իմաստային վերլուծությունն ինքնին ինտերպրետացիա է, որ ենթադրում է և՛ մշակութաբանական, և՛ ձևակառուցողական մեկնակերպ: Պարտիտուրը հասկացվում է որպես բազմակի և ներունակ իմաստներ ունեցող տեքստ, որոնցից միայն մեկն է իրականանում կատարողական տվյալ մեկնաբանության ժամանակ³⁷: Հետևաբար, և՛ մեկնաբանությունը, և՛ կատարումը որոշակիորեն սուբյեկտիվ մոտեցումներ են ու չեն կարող հավակնել միակ ճշմարտության երևակմանը: Խնդիրն արդիական է նաև հայ ժամանակակից երաժշտության պարագայում:

Հիշենք նաև, որ Ռուբեն Սարգսյանը երաժշտագետներին հորդորում էր անաչառ, բայց խորաթափանց լինել ժամանակակից երաժշտության քննադատություններում և «ստեղծագործաբար վերաբերվել կոմպոզիտորների ստեղծագործությանը», քանի որ տարիներ կամ տասնամյակներ անց չինչաձ կամ քննադատված գործերը կարող են բոլորովին այլ գնահատականների արժանանալ: Կոմպոզիտոր, դաշնակահար Սերգեյ Սլոնիմսկին ցավով նշում է, թե ինչ բացասական դեր են կատարել իր կյանքում հատկապես այն քննադատները, որոնք էլիտար դիրքերից և անհիմն չափանիշներով արհամարհական հայտարարություններ են արել իր օպերային, սիմֆոնիկ, կամերային տարբեր

³⁷ N. Cook. *Theorising Musical Meaning*. Music Theory Spectrum, vol. 23, 2001, p. 170–195.

գործերի առիթով՝ խոչընդոտելով դրանց կատարումները: Այդ պատճառով էլ նա իր №28 Սիմֆոնիան նվիրել է «թշնամիներին», որոնք համառորեն վիրավորելով... խանգարում են դիրիժորներին, կատարողներին իրականացնել տվյալ ստեղծագործության կատարումը³⁸:

Այս հատվածական, թե ընդհատ դատողություններով հաստատվող ստեղծագործական համակրանքները և ազդեցությունները, ինչպես նաև արվեստագիտական համերաշխության զուգահեռները թույլ են տալիս ասել, որ Ռուբեն Սարգսյանը և նրա սերնդակիցներից շատերը նոր ուղիներ են հարթել ազգային և արևմտյան մշակութային արժեքների միջև ստեղծագործական երկխոսություն ձևավորելու ասպարեզում: Նրանց երկերում լսելի են և մալերյան ռոմանտիզմի էքսպրեսիվ տարրերը, և Բարտոկի ֆոլկլորիզմն ու գործիքավորումը, և Ստրավինսկու, Պրոկոֆևի նեոկլասիկական և նեոռոմանտիկական լեզվամտածողության տարրերն ու ռիթմի հատու անհատականացված կիրառության սկզբունքները: Միևնույն ժամանակ ազգային ավանդույթի տարբեր շերտերի վերաիմաստավորումը որպես գաղափարական-ոճական մոդելի և ստեղծագործական ներշնչանքի աղբյուրի, անցյալի ներկայությունը ժամանակակից արվեստում վերահաստատելու անհրաժեշտության՝ դարձել է հայ կոմպոզիտորների ինքնության կարևոր ցուցիչներից մեկը: Հայկական ֆոլկլորի մեղեդային արտահայտչականությունն ու միջնադարյան մոնոդիայի հոգևոր լիցքերը, ազգային պարեղանակների արևելյան ելևէջումներն ու ռիթմական տեմպերամենտը հայ կոմպոզիտորների երաժշտադարձվածաբանության օրգանական բաղադրիչներն են՝ համատեղված ավանգարդի արտահայտչամիջոցների ու մոդեռնի տարբեր միտումների հետ: Անկասկած, հայկականության չափանիշներն անպայմանորեն չեն սահմանափակվում ազգային երաժշտարվեստի տարրերի, ֆոլկլորային մեղեդային դարձվածքների կիրառությամբ՝ որպես պարտադիր երևույթի, որ XIX դարավերջից հաստատվել էր տարբեր՝ ռուսական, հունական, հունգարական, նորվեգական և ազգային այլ դպրոցներում³⁹: Պատմաշրջանի գաղափարական մթնոլորտի թելադրանքով

³⁸ Stn Saint Petersburg Center of Contemporary Music reMusic.org, Monday, February 21, 2021, Sergei Slonimsky, The Age of the Symphony in the XXI Century, p.3.

³⁹ Օրինակ, հունական երաժշտության ազգային բնույթը՝ «հունականությունը», սահմանելիս, նշելով վերջինիս շեշտված արևելյան ուղղվածությունն առանձնացվել է 13 չափորոշիչ, այդ թվում՝ անդրադարձ ազգային մեղեդային շերտերին, ավանդական ռիթմական դարձվածքներին, հնչողության համարժեքությունը հունարեն լեզվին, մեղեդայնություն, ստեղծագործությունների հունական վերնագրեր ու թեմաներ և այլն (տես A. Trikoupis. Nationalism and Modernism as Parallel and Interactive Mainstream in the Works of Greek

այս չափանիշներով են առաջնորդվել բազմաթիվ դպրոցների ներկայացուցիչները մինչ 60–70-ականների նոր զարթոնքը, որ ազգային ընկալումների նոր ժամանակափուլ նշանավորեց:

XX դարավերջի հայ կոմպոզիտորների ստեղծագործության մեջ ազգային խառնվածքի և մտածելակերպի դրսևորումները՝ սերտաճած արևմտաեվրոպական ավանգարդի, էքսպրեսիոնիզմի, նեոկլասիցիզմի և այլ հոսանքների ու գրեյաձևերի բնորոշ և վաղուց կիրառվող սկզբունքներին, հայկական ոգու կամ հայկականության այլ որակ բերեցին ազգային կոմպոզիտորական արվեստ՝ գեղարվեստական մտածողության նոր դրսևորումներով: Հայ կոմպոզիտորական արվեստի գեղագիտական հարացույցի հարստացումը այս նոր բաղադրիչներով այն իրողությունն է, որն անհրաժեշտաբար առաջադրում է դրա լուսաբանման և արժևորման խնդիրը համաշխարհային երաժշտարվեստում կայունացած գրեյաձևերի և միտումների հարթության վրա:

Նորարար արվեստագետների ստեղծագործությանն ուղղված հղումները ի ցույց են դնում նեոռոմանտիզմի ոճաբանության և զուսպ մոդեռնիզմի համակցության մասնավոր առանձնահատկությունները հայ երաժշտարվեստում և թույլ տալիս անհրաժեշտ տրամաբանությամբ դիտարկել զուգորդումների ընդգրկուն երանգապնակը նեոկլասիկական կառուցվածքային սկզբունքներով և ավանդական ազգային երաժշտության ելևէջային տարրերով հագեցած երկերում:

* * *

Թեև Ռ.Սարգսյանի ստեղծագործական սկզբունքներն ու գրեյաձևը ամբողջական և հանգամանալից վերլուծության չեն ենթարկվել ոչ սիմֆոնիկ, ոչ կամերային-անսամբլային, ոչ էլ կոնցերտային ժանրերում դրսևորված հատկանիշների ընդհանրացման նպատակով, այսուհանդերձ, կոմպոզիտորի ստեղծագործությանը նվիրված հոդվածներում, մասնավորապես Մ. Ռուխյանի աշխատանքում, նրա երաժշտական դիմանկարը մեզ է հառնում որպես նոր ռոմանտիկ, նոր դասական հակումներ ունեցող անհատականություն՝ ինտելեկտուալ մտածողության շեշտադրումներով⁴⁰: Տրամաբանության ու հուզական արտահայտչականության փոխհարաբերությունները Սարգսյանն իրականացնում է դասական ժանրերի ինքնատիպ ճկումների և «ժամա-

Composers of the 20th century, Second Biennial Euro-Mediterranean Music Conference, 8–10 September 2011, University of Cyprus, p. 4):

⁴⁰ М. Рухян. Նշվ. աշխ., էջ 154-198; նույնի՝ Մեր ժամանակների ռոմանտիկը. – «Երաժիշտ» (Երևան), 2013, ապրիլ:

նակ» տարողունակ հասկացության հիմնավորումներով: «Ես սիրում եմ ժամանակը... այն բոլոր արարումների ելակետն է, – ասել է Օլիվիե Մեսսիանը: – Ժամանակը փոփոխություն է ենթադրում (հետևաբար՝ Պատճառ), շարժում (հետևաբար՝ Տարածություն և Կյանք): Ժամանակը մեզ հասկանալի է դարձնում Հավերժությունը՝ հակադրվելով նրան»⁴¹: Այդ հակադիր հասկացությունների համամասնական հարաբերությունը՝ պայմանավորված տվյալ ստեղծագործության գաղափարական ազդակներով, կոմպոզիտորի երևակայության մեջ մարմնավորվում է հնչյունային կառույցներում, անհատական շեշտադրումներով և իմացական շերտերով երևակում ստեղծագործության գաղափարական հենքը:

⁴¹ O. Messian. The Technique of my Musical Language. Paris, 1944, p.58; Տե՛ս A. Stimson. Musical Time in the Avant Garde: The Japanese Connection, University of California, 1996, p. 9–10.

ԳԼՈՒԽ III

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՄՈՆՈԴԻԱՅԻ ԵՎ ԱՎԱՆԳԱՐԴԻ ԱՌՆՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌՈՒԲԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

XX դարավերջին, ավանգարդի տեսական-գաղափարական դրույթներին և տեխնոլոգիական բազմահնար փորձարկումներին հաջորդող շրջանում, դոգմատիկ միջոցներին փոխարինելու եկած բազմառոճության պայմաններում, առաջնային դարձավ կոմպոզիտորի ինտեգրումը նոր երաժշտահնչյունային տարածք՝ պատմական ժամանակների միջև եղած սահմանների ազատ և ինքնօրինակ մերձեցումներով ու հարաբերումներով: Հայ կոմպոզիտորներից շատերը սկսեցին իրենց երաժշտական բառապաշարը հարստացնել և նորոգել ազգային երաժշտության տրամադրած արտահայտչաձևերով, մոնոդիկ ժանրերում բյուրեղացած հետերոֆոն, մոդալ մտածողությունից բխող օրինաչափություններով, մեղեդային ու ռիթմական տարրերով՝ գեղարվեստական նոր ըմբռնումներով նպաստելով ազգայինի վերաիմաստավորման երևույթին: Բնութագրական միտումներից դարձան միջնադարյան հոգևոր մոնոդիայի անդրադարձները ժամանակակից տեխնիկական տարրերով հագեցած գրելաձևերի պայմաններում:

Մոնոդիկ-պոլիֆոնիկ, տոնալ-մոդալ, ավանդական և մոդեռն հարաբերության փորձերում ազգային ավանդույթը դարձավ այն հուսալի հանգրվանը, որ բեղմնավորեց ու արգասավորեց հայ կոմպոզիտորական միտքը և որոշարկեց վերջինիս գեղագիտական տարածքը: Այդ միտքը մի կողմից ուղղված էր դեպի ազգային ավանդույթի կենարար ակունքները, մյուս կողմից՝ համաշխարհային ու համամարդկային երաժշտության զարկերակի ընթացքին:

Անդրադառնալով 1970–80-ականներին հայ երաժշտության մեջ ձևավորված նոր շերտի՝ կամերային-նվագախմբային տարատեսակ կազմերի համար երիտասարդ ու միջին սերնդի կոմպոզիտորների գրած

ՌՈՒԲԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՇԽԱՐՀԸ: ԿՈՄՊՈԶԻՏՈՐԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԸ

ստեղծագործությանը, երաժշտագետ Աննա Արևշատյանն ուշագրավ ընդհանրացումներով է դիտարկում երևույթն իր ընդհանրական ու ազգային դրսևորումներով, ինչպես նաև հայ երաժշտարվեստում ունեցած իր նշանակությամբ: Հեղինակը խոսում է նաև Ռուբեն Սարգսյանի ստեղծագործական-ոճական որոնումների մասին, որոնցում գերիշխող է դառնում հայ հոգևոր ու ժողովրդական մոնոդիայի մեղեդային շերտերի և ժամանակակից արտահայտչաձևերի՝ կոլաժի, ալեատորիկայի սինթեզումը, կոնցերտային ժանրի ազատ մեկնաբանությունը, քնարականությունը, ինչպես նաև՝ Մարինա Բերկոյի նկատած «թատերական տարրերի», «մոնոդրամայի» կամ դրամատիկ թատրոնին առնչվող երևույթները⁴²:

Այս առանձնահատուկ միությունը հայ հոգևոր երաժշտարվեստի հետ Սարգսյանի մտածողության ու գրելաոճի, նրա երաժշտական աշխարհի հիմնասյուներից մեկը դարձավ: Հետաքրքրությունը հոգևոր արժեքների նկատմամբ, դրանց իմաստավորումը Նոր երաժշտության փորձարարական տեխնոլոգիական հարուստ արտահայտչամիջոցներով հագեցած երաժշտական տեքստերում, ինչպես քանիցս նշվել է նախորդ շարադրանքում, 1970-ականներին ասպարեզ եկած հայ կոմպոզիտորներից շատերի համար Նոր երաժշտության գեղագիտական-ստեղծագործական սկզբունքները ազգայինին միահյուսելու և նոր ազգայինը հոչակելու հուսալի կովաններ դարձան: Ուսումնասիրելով միջնադարյան մանազգիտացված մոնոդիաների և ժողովրդական երգային ու պարային նմուշների մեջբերումների ընդգրկուն խնդիրը հայ կոմպոզիտորական արվեստում, երաժշտագետ Ժաննա Զուրաբյանը նշում է, որ Սարգսյանն այդ սերնդի առաջիններից էր, որ իր գործիքային երկերում արժարժեց նման թեմաներ, գրելով՝ «Հայկական գրաֆիկա» դաշնամուրային շարքը, «Նվիրում Կոմիտասին» սյուիտը դաշնամուրի համար, «Ներսես Շնորհալի» պոեմը՝ ֆլեյտայի, դաշնամուրի և ասմունքողի համար, որոնցում ազգայինն արտահայտվում է հատկապես մոնոդիկ ակունքների հետ ունեցած կապի դրսևորումներով⁴³:

Ռուբեն Սարգսյանի կամերային, վոկալ-գործիքային մի շարք երկերը ներշնչված են միջնադարյան հեղինակների տեքստերով: Առավել հետաքրքիր մտահղացումների հիմք են դարձել XII դարի Կաթողիկոս, բանաստեղծ, երաժիշտ-երգահան Ներսես Շնորհալու հեղինակածնե-

⁴² **Ա. Արևշատյան.** Музыка для камерно-оркестровых составов. 70–80-ые гг. – Армянское советское искусство на современном этапе. Ереван, 1987, с.144–160.

⁴³ **Ժ. Զուրաբյան.** Մոնոդիան հայ կոմպոզիտորների գործիքային ստեղծագործություններում, Երևան, 2014, էջ 115:

րը: Իր իսկ վկայությամբ՝ նա Շնորհալուն հայտնաբերել է վաստակաշատ երաժշտագետ Նիկողոս Թահմիզյանի գրքի շնորհիվ⁴⁴: Կոմպոզիտորը փորձում է հասկանալ միջնադարի լեզուն, մոնոֆոնիկ մտածողության սկզբունքները, մեղեդի հասկացության ընկալումը միջնադարյան երաժշտարվեստում և այդ ճանաչողության արդյունքում ձևավորված տեսական-գեղագիտական պատկերացումները կիրառում է տարբեր ստեղծագործություններում: Ազգային մելոսի, միջնադարյան մոնոդիայի մեկնաբանման հարցերում նրա տեխնիկական զինանոցի տարրերը բազմաոճ են. հեղինակը հոգևոր կամ ժողովրդական երգերը լուսաբանում է ժամանակակից արտահայտչաձևերի՝ դողեկաֆոնիայի, սերիալ տեխնիկայի, պուանտիլիստական և ալեատորիկ սկզբունքների կիրառություններով: Այս առումով բնութագրական է «Ներսես Շնորհալի» պոեմը (1975)⁴⁵:

ՊՈԵՄ «ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ»

The musical score is for the poem "Nerses Shnorhali". It is written in G major and 4/4 time. The first system features a vocal line with a long melisma and a piano accompaniment. The piano part includes a section marked "Cord. pizz" with a "Red" asterisk. The second system continues the piano accompaniment, marked "ordinaire".

⁴⁴ Ն. Թահմիզյան. Ներսես Շնորհալին երգահան և երաժիշտ, Երևան, 1973:

⁴⁵ Պոեմը կատարվել է «Москва-Париж» փառատոնի շրջանակներում և ընդգրկվել Շառլ Դենոնժեի թողարկած «Սովետական երաժշտության անթոլոգիա» ձայնասկանչների հավաքածուում (1978 թ.): Այս նույն բեղմնավոր տարում էր գրվել կոմպոզիտորի «Հայկական գրաֆիկան» դաշնամուրի համար:

♩ = 40

Flauto

Maestoso

The pianist rises and read the text.

Piano

*Aravot luso
Արաւօւ լոսոյ*

*aregakn ardar
արեգակն արդար*

*ar is luis zagen.
ար իս լոս ծագեալ:*

Più mosso

*bchumn i hore
բլղիւմանն ի հօրէ:*

*bchea i hogvuis
բլղիւեա ի հօգոյս*

*bun cez i hajuis.
բուն շէզ ի հաճոյս:*

Cord. pizz.

f

Cord.

Cord. pizz.

f

Այս երկը միջնադար-ավանգարդ փոխհարաբերության առաջին լուրջ հայտն է՝ ներշնչված Շնորհալու շարականների ոգեղեն շերտերով, մասնավորապես «Առաւօտ լուսոյ» և «Տարածեալ» նմուշների ձայն-եղանակի ու ելևէջի (գձ., գկ., դկ. ստեղի), գրական խոսքի գեղարվեստական կատարելությամբ⁴⁶:

Ըստ էության, կոմպոզիտորն ընկղմվելով Շնորհալու երաժշտաբանաստեղծական խոսքի արտահայտչական ոլորտում, ձգտում է ժամանակակից հնչյունային միջավայրում վեր հանել միջնադարյան շարականների գույքի մեջ բյուրեղացած դարձվածաբանության խորհուրդն ու ներունակ ուժը: Այդ իսկ պատճառով պոեմում Շնորհալու տեքստի և մեղեդու ներմուծման տրամաբանությունն օժտված է գաղափարական-գեղագիտական որոշակի գործառույթով: Մեջբերված մոնոդիկ նմուշի ստույգությունը, որ առնչվում է թե՛ «Կանոն Սրբոց Պետրոսի և Պողոսի» Օրինության և թե՛ «Կանոն Հովնանու Մարգարէին» Համբար-

⁴⁶ Այս հոգևոր նմուշների ձայնեղանակային և կառուցվածքային հիմքերի քննությունը տես Ն. Թահմիզյան, նշվ. աշխ., էջ 82-89:

նելով Կոմիտասի նորարարական սկզբունքները, մասնավորապես, կետային մտածողությանն առնչվող իր հետաքրքիր դիտարկումները երաժշտագետ Միեր Նավոյանը նշում է, որ դրանք «... հաճախ կանխում են XX դարի եվրոպական երաժշտության ինչ-ինչ երևույթներ»⁴⁷:

Ընդհանուր առմամբ, ժամանակների խորքային տարբերություններն ու երաժշտական մտածողության անջրպետը հաղթահարող այս ինքնատիպ երկում կոմպոզիտորի նպատակը ոչ այնքան տարբեր լեզվաոճական շերտերի սինթեզումն է, այլ դրանց առանձնահատուկ կերտվածքի ընդգծումը. թեև դիտոնանս կլաստերների աստիճանական փլուզումը և անէանալը՝ միջնադարյան մոնոդիայի ելևէջային շերտերի մոտեցումով, որոշակի գաղափարական–արտահայտչական սինթեզ ենթադրող ստեղծագործական ակնարկ է, որ նա հաջողությամբ իրականացնում է այլ գործերում:

«Ներսես Շնորհալի» պոեմը միջնադարյան և ժամանակակից լեզվամտածողությունը տարբեր գործիքային, տեմբրային երանգներով և միջոցներով ներկայացնելու համարձակ մտահղացում է, որտեղ քրիստոնեական հոգևոր տեքստի հնչյունային միջավայրը կանոնական չէ: Այն հագեցած չէ միջնադարյան հոգևոր, թե աշխարհիկ երաժշտարվեստի տարբեր ժանրերում կայունացած տիպային դարձվածքներով, ձայնեղանակային առանձնահատկություններով պայմանավորված ելևէջային հաստատուն տարրերով: Թերևս, այս հակադրությամբ նա հետևում է ռեֆորմատոր-կաթողիկոսի երաժշտաբանաստեղծական արվեստում արտացոլված նորաշունչ հովերի՝ «դարաշրջանի ընդհանուր Վերածնության շարժումին արձագանքելու միտումներին»⁴⁸: Հոգևոր տեքստերից ստացած երաժշտագեղագիտական և փիլիսոփայական ներշնչանքներն իրականացնելով գաղափարախոսական առումով ոչ այնքան բարեհաճ պայմաններում (հիշենք, որ այն ստեղծվել է 1975 թ.⁴⁹)՝ կոմպոզիտորը, ասես, հետևել է նաև ինքն իրեն հավատարիմ մնալու սկզբունքին՝ արժևորելով «հոգևոր լույսի» գաղափարը: Մոնոդիկ նմուշների իմաստային հենքը՝ կյանքի ու մահվան, Արարչի լույսի ու փրկության, դառնահամ ծառի և Խաչի փայտի խորիմաստ համեմատություններով ու խորհրդանշական փոխակերպումներ-

⁴⁷ Մ. Նավոյան. Ազգային կոմպոզիտորական դպրոցի հայեցակարգն ըստ Կոմիտասի, Երևան, 2020, էջ 132:

⁴⁸ Ն. Թահմիզյան. նշվ. աշխ., էջ 90:

⁴⁹ Պոեմը թողարկել է «Мелодия» ֆիրման՝ ֆելետահար Կարեն Շահինյանի և հեղինակի կատարմամբ, այն տեղ է գտել նաև Փարիզում հրատարակված խորհրդային շրջանի ավանգարդ երաժշտության ձայնակավառակների անթոլոգիայում:

գիայի և դեկլամացիայի թատերականացված մեկնաբանումով: Այս կերպարային թատերական վառ մտածողությունն իր բազմազան արտացոլումներն ունի Սարգսյանի ստեղծագործական ժառանգության տարբեր կտավներում:

Խնդրո առարկա ստեղծագործական սկզբունքի՝ կոլաժի ինքնատիպ և գեղարվեստականորեն ազդեցիկ օրինակներից է Թավջութակի և դաշնամուրի համար գրված Սոնատը (1977):

Այս Սոնատը կոմպոզիտորի վաղ շրջանի լավագույն գործերից է և իր վրա է բևեռել թե՛ կատարողների, թե՛ երաժշտագետների ուշադրությունը: Լեռ երաժշտագետ Կշիշտոֆ Մեյերը գրել է, որ Սոնատը հեղինակի հսկայական տաղանդի վառ ապացույցն է... որին վիճակված է համերգային երկարատև կյանք⁵¹: Երաժշտագետ Մ. Բերկոն, որը Սարգսյանին նվիրված մի շարք հոդվածներում էական դիտարկումներ է կատարել նրա ստեղծագործությունների վերաբերյալ, հատկապես ընդգծում է դրանց իմաստային հագեցվածությունն ու Շոստակովիչի երաժշտության խորը ազդեցությունը մարդկային հոգու խորքերը ներթափանցելու ունակության տեսակետից⁵²: Ըստ էության, Սարգսյանի ստեղծագործական էությունը բնութագրելով որպես «ինտելեկտուալ ոգեշնչվածություն»⁵³ Մ. Բերկոն յուրովի ամրագրել է այն կոլանները, որոնք հնարավոր չէ անտեսել կոմպոզիտորի արվեստագիտական ինքնության մեկնություններում:

Հնարավոր չէ նաև չնկատել Սարգսյանի մեղեդիական կառուցվածքային մտածողությանը բնորոշ միաժամանակ ընթացող գծերի փոխկապակցվածության սկզբունքները, որոնցում համադրվում են «հին» և «նոր» հյուսվածքները, մոտիվային բջիջների հետևողական զարգացումով ձեռքբերվող դրամատուրգիական գազաթնակետերը, որոնք Շոստակովիչի գրելաոճի կարևոր հատկանիշներից են:

⁵¹ Կ. Մեյեր. Հայաստանի ժամանակակից երաժշտության շուրջ. – «Սովետական արվեստ» (Երևան), 1980, № 8, էջ 41:

⁵² Հենց մարդկային ոգու արարչագործության, ոգեղենության դիրքերից և ժամանակին բնորոշ «հոգևոր իրավիճակի» բարդ ու հակասական մթնոլորտի համատեքստում է Լ. Հակոբյանը մեկնաբանում Շոստակովիչի ֆենոմենն ու երկատված ինքնությունը, այն ոգեղենությունը, որով ներշնչվում և նրան էին հատորդակցվում նաև Շոստակովիչի աշակերտներն ու բազմաթիվ հետևորդները՝ բարդ և տարամիտված գաղափարախոսական-մշակութային արժեհամակարգի պայմաններում (տես Լ. Акопян. Феномен Дмитрия Шостаковича. СПб., 2018).

⁵³ Մ. Берко. Трудный и радостный путь познания. – «Советская музыка» (М.), 1978, № 9, с. 14–17; նաև նույնի՝ На рубежах творческой зрелости. – «Литературная Армения», 1982, № 8, с. 75–77.

ՍՈՆԱՏ
Թավջութակի և դաշնամուրի համար

The first system of the score consists of three staves. The top staff is for the violin, the middle for the piano, and the bottom for the bass. The key signature has one flat (B-flat), and the time signature is 3/8. The music begins with a melodic line in the violin and a rhythmic accompaniment in the piano.

The second system continues the piece. It features a long melodic line in the violin with a dynamic marking of *p* (piano) and a slur. The piano accompaniment consists of a steady eighth-note pattern in the bass.

The third system shows further development of the melodic and accompanimental themes. The violin part includes some grace notes and a dynamic marking of *p*. The piano accompaniment remains consistent with the eighth-note pattern.

The fourth system is marked *sul pont.* (sul ponticello) and *pp Senza metrum* (pianissimo without a steady beat). The violin part features a wavy, tremolo-like texture. The piano accompaniment is also marked *pp mobile* and features a wavy, tremolo-like texture. A dynamic marking of *pp* is present.

The fifth system concludes the piece. It features a return of the eighth-note accompaniment in the piano and a melodic line in the violin. The dynamic marking is *pp*.

Արդեն այս շրջանի գործերում Սարգսյանի ստեղծագործական միտքը կենտրոնացած է ավանգարդի տեխնոլոգիական միջավայրում հայկական մոնոդիայի ներունակ հնարավորությունները բացահայտելու, հնչյունային նոր համատեքստում հոգևոր լիցքերը տարրալուծելու հարցերի վրա: Թավջութակի և դաշնամուրի համար գրված առաջին Սոնատում այդ սինթեզն իրապես օրգանական է և գեղարվեստական առումով տպավորիչ, թեև այս երկմասանի կառույցի հատվածականությունն ու ժանրային նկարագիրը դուրս են ավանդական պատկերացումներից: Սոնատի երաժշտագեղագիտական հիմքն ու գաղափարի մարմնավորման ամբողջականությունը մեծապես պայմանավորված են Ներսես Շնորհալու «Գրիգոր Աստվածաբան» շարականի մեղեդու կերպարային-թեմատիկ փոխակերպումներով, որոնք «ներդաշնակ փոխազդում են սերիային տեխնիկայի, ավետորիկ դրվագների հետ»⁵⁴: Սոնատի մեղեդային-մոտիվային բազմաոճության շրջանակներում կարելի է լսել նաև բաբաջանյանական դաշնամուրային պատկերների դիժմական արծագանքները՝ հակադրական հարասացությամբ համադրված Ռութեն Սարգսյանի ինտոնացիոն բառարանին բնորոշ մի հաստատուն դարձվածքին, որ հնչում է կոմպոզիտորի բազմաթիվ գործերում:



Այս բազմաշերտ կտավում կոմպոզիտորը երկխոսում է Ա ներկայի, Ա անցյալի հետ: Տեխնիկական ողջ արսենալն ուղղված է միջնադարյան լեզվամտածողության երանգների լուսաբանմանն ու հոգևոր մոնոդիան որպես մշակույթը վերակենդանացնող հենարան դիտելուն:

⁵⁴ Ա. Արևշատյանն այս տոնատը բնութագրելիս հատկապես ընդգծում է կոլաժի տեխնիկայի վարպետ կիրառությունն ու գեղարվեստական արդյունքը. տես **А. Аревшатын. Монодия и поэзия средневековья в творчестве современных армянских композиторов.** – «Вестник общественных наук» АН Арм. ССР, 1978, № 12, с. 68–69.

The musical score consists of five systems of staves. The first system includes a treble clef staff with the instruction "sul pont." and a bass clef staff with "mobile". The second system features a treble clef staff with "pizz." and "sul corde", and a bass clef staff with "ord." and "p". The third system has a treble clef staff with "mf" and "Senza metrum", and a bass clef staff with "mf". The fourth system shows a treble clef staff with "ord." and a bass clef staff with "mp" and "p". The fifth system continues the bass clef staff with "p".

Թավջութակի հնարավորությունների լիարժեք բացահայտումով, գլխասանդոնների տարածական ընդգրկումներով, դաշնամուրային օստիննատ մոտիվի լարված արտահայտչականությամբ ձեռք բերված դրամատիզմը պարբերաբար սրվում է ֆակտուրային նոր թանձրացումներով հարստացած մոտիվներով: Ավանգարդին բնորոշ արտահայտչամիջոցներով հագեցած սոնատում հեղինակը դիմել է ամենատարբեր ձայնարտաբերման հնարների՝ թավջութակի և դաշնամուրի լարերի ու ստեղների հարվածային, կամիթային գործողություններով: Գեղագիտական-իմաստային առանձնահատուկ նշանակություն ունեն գլխ-

ՍՈՆԱՏ

Ջութակի և դաշնամուրի համար

The musical score is written for violin and piano. It consists of three systems of music. The first system shows the violin part with a melody of eighth and sixteenth notes, and the piano accompaniment with chords and moving lines. Dynamics include *mf* and *mp*. The second system continues the melody and accompaniment, with a *rit.* (ritardando) marking. The third system features a *pizz.* (pizzicato) section followed by an *arco* (arco) section, with *morendo* (morendo) markings indicating a gradual decrease in volume.

սանդուղները, վիբրատոները, մեխիզմները, բուրդոնային համախմբերը, որոնց ֆոնին առանձնապես հանդիսավոր է հնչում շարականի մեղեդու վանկաչափական ընթացքը՝ խորալային հյուսվածքով:

Ժամանակային-տարածական տարանջատում և միավորում՝ իմաստային նոր լիցքերով ու երաժշտալեզվական դասույթներով: Այս Սոնատը՝ միջնադարի և ավանգարդի հարաբերության դիտակետից, հիմնված է «Ներսես Շնորհալի» պոեմին հակամետ լեզվաարտահայտչական սկզբունքների վրա: Գաղափարական նման հենք և երաժշտաոճական տարբեր լուծումներ, որպես կոմպոզիտորի մտածողության բնորոշ հայտեր, հանդիպում են նաև կամերային-գործիքային այլ երկերում: Դրանք հիմնականում մեկմասանի խտացված և

պատկերավոր խորհրդածություններ են, որտեղ կոմպոզիտորն ինքնաբացահայտվում է տարբեր խառնվածքներով:

Գործիքային գրեթե բոլոր սոնատներում դաշնամուրն անհատականացված և վառ արտահայտված գործառույթ ունի՝ հարուստ հյուսվածքով, օկտավային օստինատոներով, սերիային գրելաճի փոփոխված տարածական կիրառություններով:

Ֆլեյտայի և դաշնամուրի համար գրված սոնատում (2001) տեղ են գտել ազգային մելոսի փոքր-ինչ արտահայտված հայեցողական արտահայտություններ: Այն սկսվում է ֆլեյտայի մենախոսական մուտքով,

ՍՈՆԱՏ

Ֆլեյտայի և դաշնամուրի համար

որի քնարական հնչերանգների ծավալումը՝ տխրության և միայնության զգացողություններով, ընդհատվում է սկերցոզային բնույթի կոնտրաստային դրվագով՝ հիմնված ռիթմական ստակկատոների ֆոնին հնչող պարային ռեպետիտիվ դարձվածքների վրա: Հեղինակը հետամուտ է ամեն մի ելևէջի ներքին հնարավորությունների հայտնաբերմանն ու իմաստավորմանը, հատկապես ֆլեյտայի տեխնիկապես բարդ հյուսվածք ունեցող նվագամասում, որտեղ կոմպոզիտորն ինքնահայտնվում է ազգային մշակույթի հնչյունային ոլորտում: Այս մեկնասանի ստեղծա-

գործությունը, ասես, դասական սոնատի սեղմ վերապատկերումն է հարաբերականորեն առանձնացող բաժիններով: Ներքին խռովումներով լի այս երկը նոր ազգային ռոմանտիկականի ներկայությունն է խորհրդանշում: Այդ ոգեղենությունն ամբողջանում է ազգային մելոսի և հեղինակային ռոմանտիկական լեզվաոճի միաձուլվածքներով ու ավարտվում անորոշ, հիմնականում չհանգուցալուծվող՝ ժամանակի մեջ վերջավոր զգացմունքների մարումով:

Վերադառնալով հոգևոր երաժշտության մեկնություններին, անհրաժեշտ է նշել, որ համանման երևույթներ առկա են նաև ազգային այլ մշակույթներում, որտեղ կոմպոզիտորները հետամուտ են ժամանակակից երաժշտության արտահայտչաձևերի ու միջնադարյան ավանդույթի օրգանական համակցմանը՝ որպես միջազգային ավանգարդի ազգային արտացոլում, միջնադարի գեղագիտությանն ու էթոսին ուղղված հատկանշական հղումներով: Օրինակ, հույն կոմպոզիտոր Միխայիս Ադամիսն իր «Kalophonikon»-ում (1988) արևելյան օրթոդոքս լիտուրգիական ավանդույթին բնորոշ միկրոտոնալ և մելիզմատիկ դարձվածքներով հոգևոր մոնոֆոնիկ աղբյուրն ընդգրկում է պոլիֆոնիկ բարդ հյուսվածքում՝ ստեղծելով նոր կառույց և նոր հեռանկար ուրվագծում բյուզանդական երաժշտական ավանդույթի զարգացման համար⁵⁵:

Արևմուտքից հեռու ազգային կոմպոզիտորական դպրոցներում էկզոտիկ Արևելքին՝ Հնդկաստան, Չինաստան, Աֆրիկա, Ճապոնիա, դիմելու անհրաժեշտությունը, թերևս, այնքան էլ առաջնային չի եղել, թեև կան այդօրինակ ստեղծագործություններ՝ առավելապես ներշնչված արևելյան քնարերգությամբ, Ձեն-բուդդիզմի ծիսաարարողական, հոգևոր լիցքերով ու փիլիսոփայական դրույթներով: Ձեն-ը XX դարի մշակույթի ինտեգրալ և խորհրդանշական բաղադրիչներից է՝ պատահականի ու իռացիոնալի գեղագիտության նորարարական ծայրահեղ մեկնաբանումներով: Իր բազմադեմ արևելյան հետաքրքրություններով՝ ճապոնական, չինական, կորեական, ճավայական, հնդկական և այլն, մշակութային իրողությունների փիլիսոփայական հիմքերի հավատամքային ըմբռնումներով և դրանց երաժշտական վերաարարումով, ժամանակափոփի բացառիկ բեղմնավոր ու ինքնօրինակ արվեստագետներից է ամերիկահայ կոմպոզիտոր Ալան Հովհաննեսը, որի հոգևոր էությունը չի պարփակվում մեկ կրոնի սահմաններում: Օրինակ, «Վառվող տունը» օպերա-դրամայում (1962) նա

⁵⁵ Mi. Andronikou and Friedmann Sallis. Centring the Periphery: Local Identity in the Music of Theodore Antoniou and Other Twentieth-Century Greek Composers, Erudit (Canadian University Music Society), Vol. 33, №1, Fall 2012, p. 23.

ներմուծել է ճապոնական գազակուի տեխնիկայով գրված 11-ձայնանի կանտոն՝ հայկական և ճապոնական ելեկտրոններով, ասես, ընդգծելով տիեզերաստեղծ մտածողության խորքային շերտերում ձևավորված երևույթների մեկնաբանման ունիվերսալ լեզվամտածողությունը՝ հնչյունային յուրօրինակ ամալգամներում⁵⁶:

Կոմպոզիտոր-երաժշտագետ Արթուր Ավանեսովի աշխատանքում հանգամանորեն լուսաբանված են Ձեն-բուդդիզմի փիլիսոփայական և գեղագիտական դրսևորումները ժամանակակից, այդ թվում՝ հայ կոմպոզիտորների ստեղծագործություններում⁵⁷: Այդ գեղագիտական, խոհափիլիսոփայական աշխարհըմբռնումով տարված հայ ստեղծագործողների երկերում շփումը Ձենի դրույթներին առավելապես արտահայտված է պոետական տեքստերից ստացած տպավորությունների հատույթով՝ հնչյունի իմաստավորմամբ, հնչյունի և դադարի խորհրդանշական կիրառությամբ, ինչպես նաև մեդիտատիվ խոկումներով տեքստային գաղափարների յուրատիպ ձևակառուցողական մարմնավորումներով, առանց թափանցելու Ավանեսովի առանձնացրած կարևոր շերտի՝ «ներքին բովանդակության, հոգևոր ազդակների խորքերը»⁵⁸:

Ռուբեն Սարգսյանի քրիստոնեական աշխարհընկալումով և հոգևոր արժեքներով կողմնորոշված միտքը, ասես, ենթագիտակցաբար նրան հետ է պահել այս ուղղությանն անմիջականորեն արձագանքելու ցանկությունից: Սակայն անտիկ աշխարհի, Հին Արևելքի բանաստեղծական տեքստերում նա տեսել է իր ստեղծագործական մղումներին ներդաշնակ երևույթներ, թեմաներ: Ինչպես արդեն նշվել է, պասսիվ հայեցողությունը և տևական հանկարծաբանությունը բնորոշ չեն նրա խառնվածքին, սակայն վերը նշված երևույթների՝ մեդիտացիայի, հայեցումի լակոնիկ պահերի, հնչյունի և դադարի հարաբերության, գլխասանդղների բազմիմաստ կիրառությունների, ինչպես նաև գործիքային թատերական վիզուալ մտազուգորդումների առումով, կոմպոզի-

⁵⁶ Նեոփիենտալ երկի այս ասերգային ոճը՝ «sprechstimme»-ը, ամերիկացի որոշ հեղինակներ համեմատել են Շյոնբերգի «Լուսնային Պյերո»-ում կիրառված տեխնիկայի հետ: Նշելի է, որ Հովհաննեսն առաջինն է նոտագրել գազակուի երաժշտության կոնտրապունկտային 13 պիեսները, և 1960-ականներին ստեղծված նրա գործերի գերակշիռ մասը կրում է ճապոնական գազակուի և Նո դրամայի ազդեցությունը: Այս մասին մանրամասն տես **Լ. Երնջալյան**, Այն Հովհաննեսի երաժշտությունը Արևելք-Արևմուտք մշակութային խաչուղիներում, Երևան, 2015, էջ 64-65:

⁵⁷ **А. Аванесов**. Некоторые аспекты философии и эстетики дзэн-буддизма в музыке XX века. – Диссертация на соискание ученой степени кандидата искусствоведения. Ереван, 2005.

⁵⁸ Նույն տեղում, էջ 133:

տորի երկերում կարելի է շփման եզրեր տեսնել համընդհանուր ճանաչված արևելյան ֆենոմենի հոգևոր վերացական տիրույթների հետ՝ որպես XX դարի մշակութային խորհրդանիշի:

Գիտակցական, թե ենթագիտակցական շերտերում նստվածք ունեցող նման սկզբունքներով են իրականացված Սարգսյանի փոքրաթիվ վոկալ-գործիքային երկերը. «Մայակովսկու սերը» երգաշարը, որը, ինչպես արդեն նշվել է, ըստ հեղինակի մտահղացման, «գործիքային թատրոնի» նվագակցություն է ենթադրում՝ առանձին գործիքների անհատականացված դերերով, «Վեց պատմվածքներ անցյալից» (1980) սոպրանոյի և դաշնամուրի համար, «Սիրո մասին» (1982) ռոմանսները՝ գրված չինական, եգիպտական, բիբլիական անանուն բանաստեղծական տեքստերով: Կոմպոզիտորն այստեղ միևնույն թեման՝ սիրո և կնոջ հոգեբանական ապրումները, ներկայացրել է ատոնալ միջավայրում, մեղեդային ասերգի ելևէջային շեշտադրումներով և դրանց հակադրվող դաշնամուրի փոփոխված հնչյունային շարքերն ընդհատող դիստանս կլաստերներով՝ այսպիսով հաղորդելով այլաբանական պատկերներով համեմված տեքստերի արտահայտչական երանգները: Իր իսկ խոսքերով՝ նրան հրապուրում է ոչ այնքան արխայիկ, դարձապես զգայական մթնոլորտը, որքան հին արևելյան տեքստերում առկա և ժամանակային սահմաններ չճանաչող հավերժ երիտասարդ ոգին, որ ստեղծագործողի համար ամենակենսատու աղբյուրն է⁵⁹: Ավելի չխորանալով սուբյեկտիվ ասոցիացիաների և երևույթների հարաբերելիության հեղինեղով հիմնավորումներում՝ ընդգծեմ, որ չինական, հայկական, եգիպտական և բիբլիական տեքստերի սոնորիստական հնարանքները, առանձին հնչյունների խորհրդանշական ցուցադրումները, արևելյան մշակույթներին բնորոշ ստատիկ վիճակների և ավետատորիկայի հարաբերումները, ընդհանուր առմամբ խորթ չեն Սարգսյանի երաժշտական մտածողությանը:

Տարամետ մեկնողական դիրքերից և մշակութաբանական տարբեր հիմնավորումներով ազգային մշակույթներում ձևավորված հոգևորի ու ոգեղենի ստեղծագործական հայտերը համեմատության մեջ են երևակում իրենց խորքային շերտերի բուն ազդակներն ու ինքնատիպության չափանիշները՝ որպես դարաշրջանին բնորոշ ունիվերսալ տեխնոլոգիական միջոցներով ստեղծված, միևնույն ժամանակ՝ ազգային ծագումնաբանական հիմքերին խարսխված գեղարվեստական ֆենոմեններ:

⁵⁹ P. Егиазарян. Домашний концерт. – «Комсомолец» (Ереван), 24.VI.1978.

Բնականաբար, զուտ ազգային ելևէջի ու ոգու դրսևորումների երևակամամբ հնարավոր չէ բավարարվել և զուգահեռվել մշակութային բազմազանության կնիքը կրող, հարափոփոխ ու բարդ ժամանակակից երաժշտական աշխարհին:

Նման հարցադրումները պարբերաբար հնչում են նաև հունգարացի, լատվիացի, հույն, ռուս, սերբ և բազմաթիվ այլ հետազոտողների աշխատանքներում՝ նվիրված նեոռոմանտիզմի, էքսպրեսիոնիզմի ու այլևայլ հոսանքների գեղագիտական, տեխնոլոգիական դրույթների արտացոլումների և ազգային երաժշտական շտեմարանի օրգանական ու բազմաձև խաչաձևումների քննությանը՝ զարգացնելով և հարստացնելով «Նոր երաժշտության» դիսկուրսը⁶⁰: Մասնավորապես, նեոռոմանտիզմի գեղագիտությունն ու լեզվաոճական հատկանիշները՝ տպավորիչ և հուզական տարրերով, առավել լայն արձագանք գտնելով ունկնդիրների շրջանում, որտեղ լսելի են նաև ազգային ինտոնացիաները, նպաստել են այդ հոսանքի առանձնահատուկ կայունացմանը և դրան հարող արվեստագետների միջազգային ճանաչմանը: Ցավոք, հայ կոմպոզիտորների ինքնատիպ ստեղծագործությունները ներառված չեն այդ լայնածավալ գրականության էջերում, թեպետ հաճախ կատարվում են միջազգային բեմահարթակներում, արժանանում բարձր գնահատականների: Այս իրողությունը մտահոգում է ազգային բազմաթիվ դպրոցների կոմպոզիտորներին և երաժշտագետներին՝ առաջադրելով «կենտրոնի» և «պերիֆերիայի» փոխհարաբերության արդիականացած խնդիրը: Օրինաչափ է, որ շոշափված հարցերը, մասնավորապես, ազգային և մոդեռնիստական գեղագիտության փոխհարաբերության ոլորտում, ծառանում են հատկապես ազգային կոմպոզիտորական տարբեր դպրոցների ներկայացուցիչների երաժշտական կտավների ուսումնասիրության ժամանակ:

Ֆոլկլորի կամ ազգային երաժշտարվեստի ժանրային այլ ցուցիչները ինչ գործառույթ ունեն. լեզվամտածողությունն է ազգային, թե՛ այդ տարրերն ընդամենը ազգային խորհրդանիշներ են: Ի վերջո, ֆոլկլորը ժողովրդի երաժշտական լեզուն է, և ամեն մի ստեղծագործող կարող է իրենը համարել ու կիրառել այդ երաժշտամտածողությանը բնորոշ տարրերը:

Բարտոկը ֆոլկլորային նյութի կիրառության և ճանաչման սկզբունքները դասակարգելիս սահմանազատել է 3 կատեգորիա՝ 1. ֆոլկլորից անմիջականորեն փոխառած տարրեր, 2. հորինված ֆոլկլոր, 3. թաքնված ֆոլկլոր, որտեղ բացակայում են մեջբերումներն ու ընդօրինա-

⁶⁰ Տե՛ս The National Element in Music, International Musicological Conference. Proceedings. Athens, 2014.

կումները, սակայն երաժշտությունն ամբողջապես ներծծված է գեղեկական երգի դարձվածաբանությամբ և այնպես վարպետորեն է արված, ասես, իր մայրենի լեզուն լինի⁶¹: Առանձնացված կետերն անկասկած ուղղորդիչ են վերլուծական որոշակի աշխատանքներում, սակայն միշտ չէ, որ բավարարում են ժամանակակից կոմպոզիտորական ստեղծագործության մեջ ֆոլկլորային նյութերի կամ տարրերի կիրառության ձևերին, և կոմպոզիտորներն իրենք էլ գեղագիտական բոլորովին այլ դիրքերից են մոտենում ֆոլկլորի բնական, անաղարտ ու մաքուր լինելու և որպես այդպիսին մեկնաբանելու գաղափարին:

Մեկ այլ հունգարացի կոմպոզիտոր՝ Դյորդի Լիգետին, որ հայտնի է ֆոլկլորային երգի աղավաղված, աղճատված մեջբերումներով և «սինթետիկ ֆոլկլորի» հիմնավորումներով, գրում է. «Ես կարծում եմ, որ արվեստը պետք է տարբերվի բնությունից, ես ատում եմ այն, ինչ բնական է և առողջարար, հրաշալի է, երբ արվեստն արհեստական է»⁶²: Լիգետիի նման խոստովանությունը չի վերաբերում նրա բոլոր գործերին. կոմպոզիտորին նվիրված հարուստ գրականության մեջ հետազոտողները նշում են ֆոլկլորի և նրա երաժշտության միջև եղած ուղղակի ու միջնորդավորված առնչակցությունները մինչև և հետ էմիգրանտական շրջաններում, երբ նա, օտարվելով իր «ազգային հունգարական անցյալից», ինտեգրվում էր արևմտաեվրոպական ավանգարդին⁶³: Ուշագրավն ազգային ինքնությունը համաշխարհային երաժշտության կանոնում գիտակցելու և գեղարվեստորեն արտահայտելու դիրքորոշումն է, որ, թերևս, ամեն մի ստեղծագործողի ինքնահայեցումներում է դրսևորվում «ես»-ի հաստատուն կամ երկատված, նոստալգիկ կամ զավեշտալի հիշեցումներով ու հայտերի ողջ բազմազանությամբ:

Խնդիրն այն է, թե ինչպես ենք ըմբռնում այդ հիշեցումները որոշակի համատեքստում՝ որպես մեջբերումներ, թե հեղինակային խոսք, և որն է դրա գեղագիտական ներգործության ուժն ու այն սահմանը, որով որոշարկվում է տվյալ ստեղծագործության երաժշտաոճական ինքնատիպությունը: Նորարարությունն ավանդույթին կամրջելու նպատակամետ որոնումներն իրենց տրամաբանությունն ունեն և նույնիսկ ավանգարդի արվեստագետների տեսանկյունից հակասություն չեն

⁶¹ B. Bartók. The Influence of Peasant Music on Modern Music, Esseys, ed. Benjamin Suchoff. New York, 1976, p. 340–347.

⁶² Stiu Beckles Rachel Willson. Ligeti, Kurtág, and Hungarian Music during the Cold War. Cambridge, 2007, p. 116–122.

⁶³ Այս հարցերի քննարկումը տես M. Kerékfy. Folkloristic Inspirations in the Music of György Ligeti: Problems of Identification and Interpretation, Yearbook of the Department of Musicology, Faculty of Arts of the Comenius University, Bratislava, 2016, p. 249.

ստեղծում, թեև դիտվում են որպես երկրորդական, օժանդակ գործոն: Ստրավինսկու «Սրբազան գարուն»-ը իր ծայրահեղ նորարարական լեզվամտածողությամբ գնահատվում է որպես հեղափոխական գործ, որ բազմաթիվ կոմպոզիտորների համար նոր արտահայտչականության և լեզվամտածողության ուղիներ է բացել՝ դառնալով XX դարի երաժշտական մշակույթի խորհրդանիշներից: Հետաքրքիր է, որ, մեկնելով իր ստեղծագործության գաղափարական հիմքը և ձգտելով բացարձակացնել դրա ինքնատիպության հատկանիշներն ու նորարարության աստիճանը, կոմպոզիտորը նշել է, որ ընդամենը մեկ ֆոլկլորային մեջբերում է կատարել, մինչդեռ՝ դրանք ինն են, թեև բնավ չեն նվազեցնում երաժշտական լեզվի գրեթե բոլոր, այդ թվում՝ նորաստեղծ բաղադրիչների աներևակայելի մոդեռն հնչողությունը⁶⁴:

Նորարարությունը XX դարի երաժշտության գեղագիտական արժևորման հիմնական չափանիշն էր, որի ռադիկալ տեսականացված դրույթների ջատագովը Կառլիայնց Շտոկհաուզենն էր, ով ժխտում էր ոչ միայն դասական, ավանդական երաժշտարտահայտչական միջոցներն ու դարձվածաբանությունը, այլև ֆոլկլորային–քաղաքային երաժշտական որևէ ձևի առկայությունն ու կիրառությունն իր նորարարական դրույթներում⁶⁵: Ուշագրավ է նաև, որ XX դարակզբի փորձարարական-նորարարական ժամանակափուլում նմանատիպ մոտեցումներ են ձևավորվել նաև կատարողական արվեստի բնագավառում՝ որպես ընդունված կանոնը կամ հեղինակավոր մեկնաբանությունը չբացարձակացնող, ավելին՝ մերժող սկզբունքային տրամաբանություն⁶⁶:

Ազգային երաժշտության տարրերի, ժողովրդական ու հոգևոր երգարվեստներում կայունացած ձայնակարգային, ռիթմական դարձվածքների, մեղեդային ու ելևէջային մոտիվների բազմաձև կիրառությունները բացառապես ազգային ոգու ներկայությունը չեն հավաստում: Դրանց դերն ու նշանակությունը նաև խորհրդանշական է՝ անցյալի ու ներկայի նորիմաստ կապերի առումով, ինչպես համամարդկային, այնպես էլ ազգային ըմբռնումների հարթության վրա:

Մեջբերումները, նմանակումները, ակնարկ-ռեպլիկները, խորհրդանիշ-դարձվածքները՝ պարային դրվագների կամ պարայնության տա-

⁶⁴ R. Taruskin. The Danger of Music and other Anti-Utopian Essays, University of California Press, Los Angeles, California, 2009, p. 421–422.
⁶⁵ Այս մասին տես K. Stockhausen, E. Barkin. The Concept of Unity in Electronic Music, Perspectives of New Music, Autumn, 1962, vol. 1, № 1, p. 39–48:
⁶⁶ A. Nikolsky. Performance Canon in Western Music: Conventional, Avant-garde, and “Authentic” Ideologies, 2012, p. 9.

րերքի հակասական հարասացություններով, բազմակի գործառույթ ունեն պոստմոդերնի շրջանում:

Ազգային ավանդույթի անընդմեջ շարունակականության, ինչպես նաև դրանց հակադրվող տեսակետների բախումները՝ ազգային ինքնության և «պսևդո-արտիստիկ մոդեռնի» փաստարկումներով, մասամբ մեղմացել են պոստմոդերնի շրջանում, երբ մշակութային երկխոսության խնդիրների անհրաժեշտության գիտակցությամբ հաղթահարվել են ազգային ըմբռնումների քարացած սահմանները:

Անդրադառնալով 1970-ականների հայկական գործիքային երաժշտության միտումներին՝ երաժշտագետ Կարինե Զաղացյանյանը շեշտում է քննադատական խոսքն արգելակող ծանր մթնոլորտը, որի պայմաններում յուրացվում էր արտահայտչամիջոցների նոր զինանոցը՝ խախտելով ավանդույթի և նորարարության հավասարակշռությունը, վերջինիս կիրառությունները դարձնելով ինքնանպատակ⁶⁷:

Շրջադարձային այս փուլում հայ երաժշտագետները, իրավամբ, առանձնացրել են Ավետ Տերտերյանի ֆենոմենը՝ որպես սիմֆոնիզմի նոր ուղիներ հայտնաբերողի, որի երաժշտության հուզական-արտահայտչական ու գաղափարական-իմաստային ալիքները ժանրի նոր կառուցվածքային և դրամատուրգիական սկզբունքներ կոեցին՝ վերաիմաստավորելով ռիթմի, մետրի, հնչյունի, օստիննատոյի, տեմբրի, ֆակտուրայի և երաժշտաարտահայտչական այլ տարրերի գործառույթներն ու ներգործությունը⁶⁸:

Ուշագրավ է նաև, որ, խոսելով տոնայնական մտածողության և սերիային տեխնիկայով երաժշտությունն արհեստականորեն արդիականացնելու անհաջող ջանքերի մասին, որ խախտում և անտրամաբանական են դարձնում կառույցը, Ա. Տերտերյանը, իրեն բնորոշ հեզնանքով, «դոդեկաֆոնիայի հարմոնիզացիան» արսուրդ է անվանել⁶⁹: Սակայն արդի երաժշտագիտական խոսույթում դոդեկաֆոն հարմոնիայի և «դասական» դոդեկաֆոնիայի միջև եղած տարբերության հնարավորությունը հակադիր հյուսվածքների ներկայացման և զարգացման հզոր միջոցներից մեկն է համարվում⁷⁰:

⁶⁷ К. Джагацпаян. Из жизни и творчества армянских композиторов. Ереван, 2012, с. 47.

⁶⁸ М. Рухян. Авет Тертерян. Творчество и жизнь. Ереван, 2002.

⁶⁹ А. Тертерян. К вопросу о музыкальном творчестве. – «Армянское искусство на современном этапе». Ереван, 1987, с. 122.

⁷⁰ Sifn E. Mantzouarani. Hans Keller, Nikos Skalkottas and The Notion of Symphonic Genius, Tempo 67, 2013, Cambridge University Press, p. 38.

Նոր ժամանակներում փոխվում են արվեստագիտական պատկերացումներն ու ըմբռնումները, փոխվում են տեխնոլոգիական սկզբունքների կիրառության նպատակներն ու ակնկալիքները: Ստեղծագործական այս բարդ խառնարանից երբեմն դուրս են գալիս նաև հոմանտիկական անսքող քնարականության կնիքը կրող, գրավիչ մելոսով հագեցած երկեր, որպիսին է, օրինակ, Սարգսյանի №1 Կոնցերտը ջութակի և կամերային նվագախմբի համար (1980)՝ նվիրված տաղանդավոր ջութակահար Ռուբեն Ահարոնյանին: Այս ստեղծագործությունը 1987 թ. ժամանակակից երաժշտության XI Միջազգային Բիենալեում բուռն ընդունելություն է գտել և բնորոշվել՝ «երեկոյի փոթորկալի երաժշտական կուլմինացիա»⁷¹:

Ջութակի Կոնցերտը թույլ է տալիս ևս մեկ անգամ հիշեցնել Սարգսյանի ակնածանքն ու ստեղծագործական համերաշխությունը Շոստակովիչին և նրա դրամատուրգիական առանձնահատուկ մտածողությանը՝ արտահայտված անսպասելի ու տարաբնույթ մեկնությունների տեղիք տվող երաժշտական մեջբերումների, ակնարկների, մշակութային տարբեր շերտերից քաղված խորհրդանիշ դարձվածքների, ինչպես նաև ինքնահղումների կիրառություններում⁷²: Ջութակի 1-ին Կոնցերտում դրանք Բիզեի «Կարմեն» օպերայի դրամատիկ հանգուցալուծման տեսարանի մեղեդային մոտիվի և «Ծիրանի ծառ»-ի ելևէջային նմանակումներն են: Կոնցերտին նախորդած՝ 1977-ին գրված «Ինտերմեցցո»-ի համատեքստում կոլաժի սեմանտիկ մեկնաբանությունը կապվում է Կոմիտասի «Հաբրբանի» և Պատարագի «Սուրբ, Սուրբ» հատվածի միաձուլյ, ընդհատ, տարբերակված և համեմատաբար ամբողջական անցկացումների հյուսվածքին: Այս տպավորիչ կոլաժում, ռիթմական հստակ նկարագրով «Հաբրբան» գեղջկական երգին շաղկապվում են «Սուրբ, Սուրբ»-ի երկնային, հրեշտակային երգասացության մեղեդիական ելևէջները՝ «ohne takt» (առանց ռիթմի) նշումով,

⁷¹ Տե՛ս Подлинное музыкальное событие. – «Коммунист» (Ереван), 9.IV.1987. Հոդվածում Ռուբեն Ահարոնյանը թերթի թղթակցին պատմել է իր տպավորությունները Լայպցիգի հանրաճանաչ Gewandhaus դահլիճում կայացած Հայաստանի կամերային նվագախմբի համերգների, մասնավորապես, իր կատարմամբ հնչած Ռուբեն Սարգսյանի կոնցերտի մասին՝ հղելով գերմանական մամուլի արձագանքներին:

⁷² P. Faircough. The Old Shostakovich: Perception in the British Press, in: Music and Letters, 2007, vol. 88, № 2, p. 266-296. Դ. Շոստակովիչի ստեղծագործություններում, մասնավորապես, 15-րդ սիմֆոնիայում առկա խորհրդանիշներ, մոտիվների, հղումների խորքային շերտերի, եվրոպական երաժշտության «հակադիր արխետիպերի՝ Ռոսինիի և Վագների» երաժշտությունից քաղված մեջբերումների մանրամասն «ինվենտարիզացիայի» մասին տե՛ս Ն. АКОпян. Նշվ. աշխ., էջ 619-632:

ՋՈՒԹԱԿԻ ԿՈՆՅԵՐՏ N°1

Patetico ♩ = 63-66

Violino solo

Flauto

Oboi

Corni in F

Violini I

II

Viole

Violoncelli

Contrabasso

ff *mp* *pp*

mp *pp*

The image shows a musical score for a string quartet. It consists of five staves: Violin I, Violin II, Viola, and Cello/Double Bass. The score is divided into three measures. The first measure shows a melodic line in Violin I with a *mp* dynamic, and a sustained note in Violin II with a *mf* dynamic. The second measure features a *mf* dynamic in Violin I and a *p* dynamic in Violin II. The third measure includes a sixteenth-note figure in Violin I with a *mp* dynamic, and a *div. V* marking in the Cello/Double Bass. Other markings include *unis.* (unison) and *vibr.* (vibrato).

յութովի տարանջատելով և միևնույն ժամանակ հետևելով երկնայինը երկրայինում արտահայտելու մարգարեական խորհրդաբանությանը: Մոտիվ, որ մշտապես առկա է Ռ. Սարգսյանի ստեղծագործական խոհերում: Ասվածի ապացույցն են կոմպոզիտորի խոսքերն իր ինքնարտահայտումների վերաբերյալ՝ «հրեշտակային երկիր այցելելուց հետո (այն է՝ երաժշտական աշխարհ-Լ. Ե.), որտեղ Գեղեցիկն է հաղթանակում, ես ցանկանում եմ, որ իրական աշխարհը նույնպես հարաբերվի հրեշտակայինին»⁷³:

«Ետևելով Ռուբեն Սարգսյանի ստեղծագործական ուղուն՝ լեզվաոճական առանձնահատկությունների և գեղարվեստական ընկալումների

⁷³ Н. Гомцяң. Месса для призрака. – «Голос Армении». 29. VI. 2007.

ԻՆՏԵՐՄԵՑՅՈՒ

First system of the musical score. It includes staves for Flute (Fl.), Oboe (Ob.), Clarinet (Cl.), Bassoon (Fg.), Concertina (Con.), Piano (P-no), Timpani (Timp.), Triangle (Tri-lo), Cymbal (Piatto), and Strings (Archi). The Flute part features a melodic line with a slur and a fermata. The Piano part has a chordal accompaniment. The strings play a sustained harmonic. Dynamics include *mf* and *mp*. A key signature change to two flats is indicated.

Second system of the musical score. It continues the instrumentation from the first system. The Flute and Oboe parts have melodic lines with slurs. The Piano part continues with chords. The strings play a sustained harmonic. Dynamics include *mp* and *p*. The key signature remains two flats.

Ob. *rit.* 7 *al tempo*

P-no *mf*

Archi *p*

P-no 8 *ohno tiki!*

Archi *poco f*

Archi *vibratis*

դիտանկյունից, ակնհայտ է դառնում, որ նրա ռոմանտիկական ներշնչվածության հայտերը՝ ներկայացված նրա առաջին իսկ գործերում՝ «Կոնցերտ նվագախմբի համար» (1972), «Կոնցերտինո դաշնամուրի և կամերային նվագախմբի համար» (1973), «Կոնցերտ-սիմֆոնիա թավջութակի և սիմֆոնիկ նվագախմբի համար» (1977), ինչպես նաև № 3 թավջութակի Կոնցերտը (1989)՝ ընդգծված հուզականությամբ, կոմպոզիտորի Ես-ի, նրա ստեղծագործական էության ակնառու արտահայտություններից են, որ ուղեկցել են նրան ոճական, տեխնոլոգիական տարբեր համակարգերում գրված երկերում՝ որպես խառնվածքին ներհատուկ հոգևոր կռվաններ: Հուզական և դրամատիկ այդ տեմպերամենտն ինքնատիպ լուծումներ է գտել, օրինակ, Պասսակալիայի ոճով գրված կամերային սիմֆոնիայում (1984), որ կաշառում է իր մոնումենտալությամբ և խոհափիլիսոփայական հագեցվածությամբ: «...Մեկմասանի այս սիմֆոնիան, թե իր մտահղացմամբ, թե իր մարմնավորմամբ տաղանդավոր ստեղծագործություն է՝ գրված հասուն վարպետի գրչով, — ասել է Լենինգրադի կոնսերվատորիայի պրոֆեսոր Նատալիա Կոռիխալովան: — ...Նյութի զարգացման ստնա-

տային-վարիացիոն սկզբունքներով հեղինակը հարստացրել է Պասսակալիայի ձևը»⁷⁴:

Խոր արտահայտչականությամբ է առանձնանում հատկապես թավջութակի և սիմֆոնիկ նվագախմբի համար գրված Կոնցերտը, որ 1977 թ. ճանաչվել է որպես լավագույն ստեղծագործություն: Կոլաժի տեխնիկայով, սոնորային համալիրներով և խառնաշփոթ ապրումներով լի այս գործի առաջին ու երրորդ մասերի գազաթնակետային հատվածներում կոմպոզիտորը ներմուծում է Բախի սի-միոնոր Մեսսայի խորալը՝ որպես գեղեցկության և հանդարտության խորհրդանիշ: Այստեղ թեմատիկ կերպարային զարգացման սկզբունքներով հաղթահարված են կոնցերտայնության սահմանները, և ստեղծագործությունն ընկալվում է որպես Կոնցերտ-սիմֆոնիա՝ համաձայն նախնական մտահղացման:

Ընդհանուր առմամբ, Ռուբեն Սարգսյանի գործիքային կոնցերտներն ու դրանց հարող ժանրային տարատեսակները հետաքրքիր են դրամատուրգիական սկզբունքների ուրույն կիրառություններով, իմաստային հագեցվածությամբ, ժողովրդական մեղեդիների խորհրդանշական ներմուծումներով և բազմահնար տեխնիկական լուծումներով: Խոսելով իր գործիքային կոնցերտների մասին՝ կոմպոզիտորն ասել է, որ հատկապես ջութակի կոնցերտի ժանրը առանձնահատուկ խոստովանանքի, ինքնարտահայտման խորհուրդ ունի⁷⁵:

Քննարկված ստեղծագործություններում բյուրեղացած արտահայտչաձևերն ու ոճական հնարանքները՝ ըստ կոմպոզիտորի գաղափարական ծրագրերի, յուրօրինակ մարմնավորումներ են ստացել նրա սիմֆոնիաներում, ստեղծագործական ուղերձներում, նվիրումներում և կամերային-գործիքային այլևայլ երկերում:

⁷⁴ Н. Корыхалова. В гостях у Ленинградцев. – «Голос Армении», 04.1.1991.
⁷⁵ Տե՛ս Լ. Մաթեոսյան. Путь к слушателю: Скрипичные концерты Рубена Саркисяна. – «Երաժշտական Հայաստան», 2004, №3–4, էջ 66–68:

ԳԼՈՒԽ IV ՍԻՄՖՈՆԻԱՆԵՐ

Ռուբեն Սարգսյանի սիմֆոնիաները նրա ստեղծագործական խառնվածքի տիպական արտահայտություններն են: Եվրոպական դասական ժանրերում կոմպոզիտորի գրած բազմաթիվ երկերի, այդ թվում՝ սիմֆոնիաների հիմքում ընկած գաղափարներն ավանդական ձևերում չեն ամփոփվում: Նրա երեք սիմֆոնիաները մեկնասանի, ոչ ծավալուն կառույցներ ունեն, որոնցում, ըստ էության, գերիշխում է հակադրությունների դինամիկ փոխհարաբերության սկզբունքը՝ արտահայտված տարաբնույթ հնչյունային շերտերի համադրումներով, սակայն ներքին գեղագիտական առանցքով:

Տարբերակումների և նմանակումների զարգացող հոսքը կառուցվածքային տարբեր մակարդակներում առավելապես դրամատիզմն ընդգծող գործառույթ ունի, առանց հանգուցալուծման՝ որպես դինամիկ մշակման արդյունք, որ ինքնին հակառակ է դասական սիմֆոնիզմի դրամատուրգիական սկզբունքներին և տոնայնական մտածողությանը: Կոմպոզիտորի մեղեդային գծերը՝ հիշվող և տպավորիչ, ոչ միայն տարբեր միակցություններով են հարաբերվում, այլև դրանց առանձին հատվածները միաժամանակ հնչում են երաժշտության ընթացքի տարբեր փուլերում՝ ստեղծելով բազմաշերտ հյուսվածք:

Տոնայնական և սերիային փոխհարաբերությունները լարվածության ու հանգստի պահեր են ստեղծում, սակայն հակադրություններն առավելապես նոր հյուսվածքային, նոր տեմբրային-գունային մուտքերով են պայմանավորված՝ ի տարբերություն թեմատիկ տոնայնականի:

Ըստ ճապոնացի կոմպոզիտոր Տորու Տակեմիցուի, ով հայտնի է գործիքային-նվագախմբային տեմբրերի ինքնատիպ կիրառություններով և ուսումնասիրությամբ, տեմբրի զգացողությունը ոչ այլ ինչ է, քան հնչյունի ներքին շարժման ընկալում, որն իր բնույթով լինելով տարածական, նաև ժամանակային է⁷⁶:

⁷⁶ Տե՛ս E. Christensen. The Musical Timespace, a Theory of Music Listening, Aalborg University Press, 1996, p. 19.

Ռուբեն Սարգսյանը հնչյունային-տեմբրային զանազան շերտերի ներմուծումով և անսպասելի ընդհատումով դրամատուրգիական խնդիրներ է լուծում՝ չտրվելով հնչյունային ինքնահայումների երկարատև հրապուրանքներին: Այն է՝ նրա սիմֆոնիաների ամբողջականությունը պայմանավորված է ոչ թե ժանրային կառուցվածքային հատկանիշներով, այլ իմաստային բազմապլանայնությամբ, որը չի ենթադրում վերջնական ամփոփում գաղափարական-կառուցվածքային մակարդակում:

Գաղափարական կառույցի հենարաններն իր պատկերացումներում ապագայամետ են՝ մեղեդային գործիքային մտածողության վառ դրսևորումներով և չկրկնվող դրամատուրգիական լուծումներով: Լեզվաոճի առումով դրանցում կիրառված է XX դարավերջի եվրոպական արտահայտչական գինանոցը՝ ազգային-հայկականի ելևէջային ներհյուսումներով: Այսպիսով, կոմպոզիտորի ընտրած ժանրը, ինչպես նաև ոճական զուգորդումները դառնում են գաղափարական հայեցակարգի ճկուն ու ինքնատիպ համատեքստ:

Անկասկած, տարբեր ստեղծագործությունների մեկնաբանումն ընդհանուր հատկանիշների դիտակետից ընդունված մոտեցում է, որ թույլ է տալիս դրանք քննարկել որոշակի ժանրային սահմաններում: Սակայն ժամանակակից երաժշտարվեստում ամեն մի երկի անհատականացման միտումը, հատկապես մտահղացման, խորագրի և կառույցի առումով, այնքան է սրվել, որ խախտում է ժանրի ավանդական գեներտիկ նկարագիրը, նվազեցնում ու թուլացնում կայուն և բնութագրական հատկանիշների գործառույթը: Ժանրը մեկնաբանվում է որպես դինամիկ երաժշտական օրգանիզմ, կազմավորված ձևաոճական առանձին բաղադրատարրերի տրամաբանական կամ անկախ միակցություններով, որոնք մտազուգորդվում են դասական ինվարիանտին: Ռուբեն Սարգսյանի սիմֆոնիկ երկերը նշված միտումի արտահայտություններից են և դրանց քննության առանցքը, բնականաբար, սոսկ ժանրային առանձնահատկությունների ու դրանց փոխակերպումների խնդիրները չեն, այլ նաև ամեն մի երկի ոճական նկարագիրն ու գաղափարական հենքը: Ասվածը մի կողմից առնչվում է մետա-ժանր հասկացությանը, երբ տվյալ գործի կառուցվածքային-ոճական շեղումներն ու խախտումները, մոտիվային մոդելները բացատրելի և ընկալելի են կոմպոզիտորի նշած ժանրային նշանակյալի համատեքստում, մյուս կողմից՝ «ժանր» հասկացության վերացական դրույթին, երբ ձևական մոդելի և պարտիտուրի տեքստի միջև եղած հարաբերությունը ձգտում է նվազագույնի⁷⁷:

⁷⁷ Ժամանակակից երաժշտության տեսական-գեղագիտական քննարկումներում «ժանրի» անկման, հեղիեղուկ սահմանների, ավանդական կիրառու-

«Ավելի հին, ֆունկցիոնալ երաժշտության մեջ, — գրում է Դալիաուաը, — ստեղծագործությունը ժանրը տիպականորեն մարմնավորող օրինակ է ... XX դարում անհատական կառուցվածքները դժվարությամբ են տեղավորվում որևէ ժանրում»⁷⁸:

Ժամանակակից երաժշտության մեջ գերիշխող դասական ժանրերի կառույցի խախտումները մեծապես պայմանավորված են դրանց հիմքում ընկած սիմվոլիկ և ֆունկցիոնալ արտահայտչատարրերի ազատ համադրումներով, «հիբրիդային», անցյալին հարող կամ անցյալով միջնորդավորված մտածողությամբ: Ռուբեն Սարգսյանի ոչ ավանդական կառուցվածք ունեցող ստեղծագործություններում շրջանառված բազմաոճ մոտիվների ու բաղկացուցիչների իմաստային շերտերի մեկնաբանությունը մասնակիորեն առնչվում է հիշատակված սկզբունքին:

Սիմֆոնիկ նվագախմբի և դաշնամուրի համար գրված №1 Սիմֆոնիան (1986) սկսվում է առանց նախաբանի, հիմնական թեմատիկ գաղափարական մոտիվի դրամատիկ մուտքով՝ նվագախմբային բազմաշերտ տեմբրային ծավալումներով, էքսպրեսիվ տրամադրությամբ, լիցքակիր մոտիվի հատուկ կրկնություններով և առանձին գործիքների անհատականացված ակնարկ-ռեպլիկներով: Կարծես փոխակերպվող էներգետիկայով մի ամբողջ տիեզերք է, որտեղ առանձնանում են մեղեդային փոքր լուսատուների հակիրճ արտացոլումները: Ընդհանուր առմամբ՝ ընդլայնված տոնայնական մտածողության սահմաններում անընդմեջ տեմբրային հագեցումներով ընթացող երաժշտական տարերքին հակադրվում է դաշնամուրի քնարական նվագը՝ լուսավոր երանգներ հաղորդելով մռայլ տրամադրությանը: Հնչյունային ամորֆ շերտի վրա դաշնամուրի հատուկ հնչյունները վերածվելով լեյտոմոտիվի, պարբերաբար հնչում են նվագախմբային հյուսվածքի տարբեր հատվածներում՝ ստեղծելով բազմաչափ կառույց: Լարված դինամիկ մթնոլորտում մերթընդմերթ առկայծում են Ռուբեն Սարգսյանի ձեռագրին բնորոշ քնարական ինտոնացիաները՝ ճանաչելի նրա տարբեր գործերում (դաշնամուրային տրիո, Սոնատ թավջութակի և դաշնամուրի համար և այլն):

Կրկնվող դարձվածքների ֆոնին պարբերաբար հնչող քնարական մոտիվը իմաստային խորհրդանիշ է ընկալվում՝ հակադրվելով ընդհանուր առմամբ համասեռ հնչյունային շերտին, որտեղ այդ ռիթմահինտոնա-

թյունների և սիմվոլիկ կառուցվածքային պարտադրանքների մասին տես E. Drott. The End(s) of Genre. – Journal of Music Theory 57: 1, Spring 2019, Yale University, p. 7–9:

⁷⁸ Նույն տեղում, էջ 2:

ցիան նաև խաչատրյանական երանգներ է ստանում: Դաշնամուրի կամ գլանային զանգերի դիսկրետ ու ազդեցիկ հնչյունները օստինատոների համադրությամբ փոխակերպվում և երկի ավարտին, ասես, վանկարկում են քնարական թեմայի հնչյունները: Նկատելի է, անշուշտ, ձևի որոշակի ձգձգվածություն: Միևնույն ժամանակ, անընդմեջ լարվածության պայմաններում՝ տարբեր մոտիվային մուտքերով, ազգային երանգներով լեյտինտոնացիայի գործիքային-տեմբրային հիշեցումներով տեսողական վառ պատկերներ են ուրվագծվում՝ բեմական միզանսցենների տրամաբանությամբ: Երաժշտության վառ կերպարայնությունն ու հարուստ նվագախմբային հնչողությունը սքողում են ձևի ընդհատությունը, ի վերջո, հանգելով տպավորիչ ավարտին՝ երկարատև ռիթմական օստինատոների և զանգերի մարող հնչյուններով:

ՄԻՄՏՈՆԻԱ № 1
Նվագախմբի և դաշնամուրի համար

The musical score is presented in three systems. The first system features a 2nd Clarinet (2 Cl.) part with a melodic line and a Piano (Pno.) part with a rhythmic accompaniment of eighth notes. The second system continues the piano accompaniment and includes a melodic line for the piano. The third system concludes the piece with a final melodic phrase and piano accompaniment. The score is written in 3/4 time and includes various musical notations such as dynamics (p), articulation (accents), and phrasing slurs.

Աշխատանքում տեղ գտած թեմատիկ և դրվագային շեղումների ընթացքում բազմիցս նշվել է, որ բազմառոժությունը, փոխառություններն ու հղումները XX դ. նոր ուղղություններին բնորոշ ամենակիրառելի և բազմաֆունկցիոնալ միջոցներից են: Կոմպոզիտոր Ալֆրեդ Շնիտկեի հանրահայտ հողվածը, որին հղում են երաժշտագիտական տարբեր հրապարակումներում և որտեղ ներկայացված են դարաշրջանի բնութագրական միտումները՝ զանազան ստեղծագործությունների օրինակներով, ըստ էության, խթանել է խնդրի քննարկումը նոր՝ բազմավեկտոր երաժշտական գիտակցության համատեքստում⁷⁹:

Ակնարկների, մեջբերումների և հատկապես կոլաժի տեխնիկայի եզակի ինքնատիպ օրինակներից է Ջորջ Ռուկերգի «Contra Mortem et Tempus» («Մահվան և ժամանակի դեմ», 1965) ծայրահեղ ավանգարդիստական կվարտետը՝ ջութակի, ֆլեյտայի, կլարնետի և դաշնամուրի համար, որտեղ հեղինակն օգտագործելով 6 կոմպոզիտորի գործերը, հյուսել է ռճապես միասնական մի կտավ՝ հիմնարար նմանությունների նպատակամետ ցուցադրումներով: Կոմպոզիտորն ընտրել է Ա. Բերգի, Լ. Բերիոյի, Պ. Բուլեզի, Չ. Այվզի, Է. Վարեզի, Ա. Վեբեռնի հայտնի գործերից քաղված և իր՝ «Dialogues» ստեղծագործության տարբեր հատվածներ⁸⁰, որոնք ավարտվում են հատու հնչյունների ներքո շշուկով արտաբերված խորագրի բառերով՝ «Contra Mortem et Tempus», ասես, «մողեռնի» իմաստաբանական հիմքով խորհրդանշելով մարդկային կորստի, ժամանակի ու հավերժության գաղափարները: Ստեղծագործությունը գրվել է կոմպոզիտորի 20-ամյա որդու մահվանից մեկ տարի անց: Հետագայում կոմպոզիտորը հիասթափվել և դուրս է եկել մաքուր սերիալիզմի սահմանափակ շրջանակներից, որը նրան հոգեկան անդորր չի բերել և շրջվել է դեպի նեոռոմանտիկական էսթետիկան՝ երաժշտության ապագայի հանդեպ ունեցած մտահոգություններով ու դրա արտահայտչական մարդկային որակների վերանորացման նպատակով⁸¹:

Ստեղծագործական կոնկրետ զուգահեռում չակնկալող այս օրինակը թույլ է տալիս հիշեցնել Ռուբեն Սարգսյանին նույնքան մտահոգող խնդիրների՝ երաժշտության ապագայի, արտահայտչական ուժի, ինչ-

⁷⁹ А. Шнитке. Полистилистические тенденции в современной музыке. – Холопова В., Чигарева Е. Альфред Шнитке. М., 1990, с. 327–331.

⁸⁰ Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Ե. Дубинец. Made in USA: Музыка – это все, что звучит вокруг. М., 2006, с. 40–41.

⁸¹ Sŕu American Masters: George Rochberg, String Quartet № 1, Contra Mortem et Tempus, Second Symphony (CD 768, George Rochberg, Vol. One, 1997, NY).

պես նաև մտքի ու զգացմունքի հավասարակշռության նշանակությունը ժամանակակից ակադեմիական երաժշտարվեստում:

Կոմպոզիտորի կամերային և սիմֆոնիկ գործերում հնչող մեջբերումներն ու ծանոթ ակնարկները ներդաշնակ են նրա երաժշտական տեքստերին: Նա դիմում է դրանց՝ իր ասելիքն էլ ավելի շեշտելու և համընդհանուր ճանաչում վայելող արվեստագետների ձայնով լուսավորելու նպատակով:

Հավերժ արժեքները պահպանելու մտահոգությունները, տիրող բարքերի և մոլորությունների հանդեպ ունեցած ներքին խռովքն ու հեգնանքը հատկապես շեշտված են Ռ. Սարգսյանի «Ironica» վերնազրված №2 Սիմֆոնիայում (1989):

Նման փրիստփայությունն որդեգրած կոմպոզիտորները հաճախ ընկղմվում են «օտարի» գեղեցկության և լեզվաոճի տիրույթներում՝ յուրովի ոգեկոչելով իրենց ժամանակին խորթ զգացմունքներն ու գաղափարները: Այս առումով Սարգսյանի երաժշտությունն իր նեոկլասիկական հակումներում Շնիտկեի ուրվագծած ժամանակակից երաժշտարվեստի անսահման բազմաոճ ներկայանակի ինքնատիպ դրսևորումներից կարելի է համարել՝ ազգային ու դասական երաժշտարվեստի հավերժ արժեքները նոր ժամանակներում կարևորելու ու իմաստավորելու տեսանկյունից:

Պատմական օպտիմիզմի ոչ շոշափելի զգացողության մթնոլորտում, ողբերգական, դրամատիկ իրադարձություններով լի իրականության ծանր պայմաններում՝ Սպիտակի երկրաշարժ, Ղարաբաղյան շարժում, պետական անկախության տրամադրություններով հազեցած ժամանակափուլում կոմպոզիտորն իր զգացմունքների ու մտքերի արտահայտման եղանակը հեզնական է անվանել: «Ironica» սիմֆոնիայի իմաստային-գաղափարական լիցքերը տարամիտված են. դրանք մի կողմից ժողովրդի կենսունակության և ազգային ոգու խորհրդանիշներն են՝ մարմնավորված ժողովրդական լեզվամտածողության ելևէջներում, մյուս կողմից՝ նոր իրողությունների նկատմամբ ձևավորվող հակասական մտքերի, հեզնանքի ու անհանգստության արտացոլումները՝ դիսունանս հնչյունների, պոլիռիթմիկ, պոլիլադային, սերիային հյուսվածքների փոքր-ինչ քառտիկ միակցություններում: Ընդհանուր առմամբ երկատված հոգեբանական-հուզական մթնոլորտում հաղթական տրամադրությունների առկայծումները վարպետորեն կերտված հեզնանքի դրսևորումներ են ընկալվում՝ առանց զգացմունքների հստակ սահմանազատման և որոշակիորեն մտազուգորդվում են Մալերի սիմֆոնիա-

ՄԻՍՖՈՆԻԱ №2 «IRONICA»

The musical score is arranged in a standard orchestral format. The instruments and their parts are as follows:

- Picc.** (Piccolo): Treble clef, playing a melodic line with *ff* dynamics.
- Fl.** (Flute): Treble clef, playing a rhythmic accompaniment with *ff* dynamics.
- Ob.** (Oboe): Treble clef, playing a rhythmic accompaniment with *ff* dynamics.
- Cl.** (Clarinet): Treble clef, playing a rhythmic accompaniment with *ff* dynamics.
- Fg.** (Bassoon): Bass clef, playing a rhythmic accompaniment with *ff* dynamics.
- Cr-ni** (Cornets): Four staves (1-4), Treble clef, playing a rhythmic accompaniment with *ff* dynamics.
- Tr-be** (Trumpet): Treble clef, playing a rhythmic accompaniment with *ff* dynamics. Includes a *Isolo* section.
- Tbn.** (Trombone): Bass clef, playing a rhythmic accompaniment with *ff* dynamics.
- Tuba**: Bass clef, playing a rhythmic accompaniment with *ff* dynamics.
- Timp.** (Timpani): Bass clef, playing a rhythmic accompaniment with *ff* dynamics.
- Pno.** (Piano): Grand staff (treble and bass clefs), playing a complex rhythmic accompaniment with *ff* dynamics.
- Vln. I** (Violin I): Treble clef, playing a melodic line with *ff* dynamics.
- Vln. II** (Violin II): Treble clef, playing a melodic line with *ff* dynamics.
- Vlc.** (Viola): Bass clef, playing a melodic line with *ff* dynamics.
- Vc.** (Violoncello): Bass clef, playing a melodic line with *ff* dynamics.
- Cb.** (Contrabass): Bass clef, playing a melodic line with *ff* dynamics.

This musical score is for a symphony orchestra, spanning 12 staves. The instruments and parts are as follows:

- Picc.** Piccolo flute
- Fl.** Flute
- Ob.** Oboe
- Cl.** Clarinet
- Fg.** Bassoon
- Cr-ni** 1, 2, 3, 4 Cornets in A
- Tr-be** Trumpet in B-flat
- Tbn.** Trombone
- Tuba** Tuba
- Timp.** Timpani
- Pno.** Piano
- Vln. I** Violin I
- Vln. II** Violin II
- Vle.** Viola
- Vc.** Violoncello
- Ch.** Contrabass

The score is written in a key signature of one sharp (F#) and a 2/4 time signature. The woodwinds and strings play a rhythmic pattern of eighth notes, while the brass instruments play a more complex, syncopated rhythm. The piano part is marked with a forte (*ff*) dynamic and features a prominent eighth-note pattern starting at measure 6. The score is divided into three measures, with a key signature change to one sharp (F#) at the beginning of the third measure.

ների երկիմաստ տրամադրություններին՝ հեգնական-կենսահաստատի և ահարկու-մտախոհի միահյուսումով: Ռիթմական օստինատոների, վիբրատոների ֆոնին հնչող թեմատիկ տպավորիչ մոտիվները՝ պղնձյա տարբեր փողայինների ֆանֆարային ելևէջների ուղեկցությամբ, խորհրդանշական իմաստ են ձեռք բերում սիմֆոնիկ կառույցի ծավալման հանգուցային կետերում: Այդ մոտիվները լիցքավորված են և միջնադարյան մոնոդիայից սերող տարրերով, և ժողովրդական երաժշտարվեստից քաղված մեջբերումներով: Այս բազմաշերտ համատեքստում առանձնահատուկ խորհուրդ ունի ժողովրդապարային տարերքը մարմնավորող թեմատիկ նյութը, որի բազմահնար փոխարկումների և տեմբրային հարստացումների հոսքը հասնում է իր իմաստային-գաղափարական գագաթնակետին՝ նվագախմբային լիահունչ հնչողությամբ և զանգերի ղողանջներով, ասես, ազդարարելով ազգային ոգու հավերժությունը՝ ժողովրդական երգի ցայտուն ելևէջներով⁸²:

Հնչյունային ընդհանուր մթնոլորտում թեմատիկ-մոտիվային կամուրջներ ստեղծելով, տարբեր ոճական մարմնավորումներով տարրալուծվելով երաժշտական հյուսվածքում, ազգային ելևէջային իմաստակիր այդ դարձվածքները ցանկալի ապագա են ավետում: Ազգային ինքնության էթոսը, ժամանակի և իրականության դաժան դիմագծերը երաժշտական հնչյուններով կերտելու և ապագայում դրանք հարթված տեսնելու շնորհը նույնպես անհատական-արվեստագիտական հայտ է, նաև՝ ժամանակին դիմակայելու գիտակցություն:

Սիմֆոնիա № 3 «Քրոնիկոն» («Chronicle», 2003). դրամատիկ դրվագներ պարունակող, ռիթմական, տեմբրային հարուստ համադրումներով հագեցած նվագախմբային այս բազմաշերտ կառույցում կոմպոզիտորի մտքերն ու խոհերը համամարդկային են: Հիմնված իր իսկ ստեղծագործություններում մշակված հակադիր տրամադրությունների, տեմբրային-իմաստային փոխարկումների դրամատուրգիական տրամաբանության վրա՝ այս սիմֆոնիայում ավելի ակնհայտ է դասական ձևակառուցվածքային սկզբունքների խախտման միտումը: Չկան թեմատիկ հետևողական զարգացումներ, դրանց աստիճանական բարդացում և հանգուցալուծում, սակայն զգալի է երաժշտական մտահղացման ժամանակային ընթացքը, որի շարունակությունն ան-

⁸² Երաժշտագետ Ժ.Ջուրաբյանը նշում է, որ մեջբերված պարային թեման ազգային մոնոդիայի հանրահայտ նմուշներից է և «Տղա Ջավեն» անունով հանդիպում է Թ. Ալթունյանի մշակումներում, թեև չխորանալով մեջբերման ակունքներում՝ այն օգտագործում է որպես ժողովրդական, տե՛ս Ժ.Ջուրաբյան, նշվ. աշխ., էջ 232:

կանխատեսելի է: Սկզբնական թեմատիկ-մոտիվային դարձվածքի պարբերական անցկացումները, ասես, կամրջում են ժամանակի ընդհատ հատվածները և կազմավորում կառույցը: Երաժշտական լեզվաոճի առումով «Քրոնիկոնի» մարմնավորումը՝ լիտավրների, վալտհորների հնչյունային թանձր հյուսվածքներով, պարային հախուռն տարերքով՝ ազգային է իր խորքային շերտերում: Ալեատորիկ դրվագում ներմուծված շեփորների «դիվային» և հեզնախառն հնչողությունները որոշակիորեն մտազուգորդվում են Տերտերյանի № 3 Սիմֆոնիայի ֆինալում վալտհորների մուտքին, ինչպես նաև եկեղեցական զանգերի խորհրդանշական կիրառություններին:

Կոմպոզիտորի սիմֆոնիկ կտալներում տեղ գտած որոշ երևույթների համեմատությունը նշանավոր արվեստագետների կիրառած նմանատիպ հնարների հետ վկայում է տեխնիկական-ոճական սկզբունքների ասոցիատիվ կապերի և գեղարվեստական ազդեցությունների յուրօրինակ ավանդույթի ձևավորումը նաև ազգային մոդեռնի շրջանակներում: Վերհիշելով Սարգսյանի խոսքերը ոճական պիտակավորումների մասին, այսուհանդերձ, պետք է խոստովանել, որ հնարավոր չէ լիովին խուսափել երաժշտալսողական ընկալումների և դրանց գեղարվեստական զուգահեռումների մասնագիտական պահանջից:

Նկատված գեղարվեստական երևույթները՝ քողարկված ու բացահայտ մեջբերումներն ու ակնարկները, անկասկած, ժամանակի ոգով միջնորդավորված արտահայտություններ են, որ դարձել են կոմպոզիտորի երաժշտական խոսքի կարևոր մասնիկները՝ երբեմն «մելիզմների», երբեմն մեղեդային-թեմատիկ մոտիվի, երբեմն էլ՝ հնչյունային-գործիքային տարերքի «նշանային» իմաստավորման կշռով: Սակայն դրանց լուսաբանումը չի կարող սահմանափակվել հղումների կամ մեջբերումների ներկայության արձանագրումով. դրանք նաև պատմական, հոգեբանական ու սոցիալական որոշակի ենթատեքստ են ենթադրում⁸³: Հետևաբար, ոճական նմանակումների և ակնարկների

⁸³ Մեջբերումները և դրանց մշակութային իմաստն ու նշանակությունը XX դ. երաժշտարվեստում արժանացել են բազմաթիվ հետազոտողների ուշադրությանը (տե՛ս, մասնավորապես, D. Metzger. Quotation and Cultural Meaning in Twentieth-Century Music: 12 (New Perspectives in Music History and Criticism, Series Number 12), 2003. Cambridge University Press, UK): Հեղինակը երևույթը լուսաբանում է տարբեր ոճերի՝ դասական, էքսպերիմենտալ, ջազ ու արվեստի այլ տեսակների ընդգրկումով և փոխառությունների ու կոլաժի բազմաթիվ կատեգորիաների քննական վերլուծությամբ: Նա հետամուտ է իր թեզի՝ բոլոր ժամանակներում արդիական անցյալի ու ներկայի փոխկապակցվածության և փոխառության՝ որպես «մշակութային գործակալի» անփոփոխ դերի ապացուցմանը: Առավել խորհրդանշական բնութագիր է տվել Ի. Բարսովան

ՍԻՖՈՆԵԿԱ N°3 «ՔՐՈՆԻԿՈՆ»

Picc.

Fl.

Ob.

Cl.

Fg.

Corni I, III

II, IV

Trp.

Trb.

Tb.

Tam. mil

Piatti

V-ni I

V-ni II

V-le

Celli

C-bassi

մեկնաբանությունները, թեև տարարժեք, նպաստում են ստեղծագործության խորհրդանշական հիմքի բացահայտմանը: Դրանք վկաներն են որոշակի դարաշրջանի գեղագիտական, գեղարվեստական ըմբռնումներով ձևավորված երաժշտական լեզվաոճի և խոսում են իրենց ժամանակի անունից:

ժամանակակից կոմպոզիտորների, մասնավորապես, Է. Դենիսովի ստեղծագործություններում բազմաոճության դրսևորումների անհատականացման խնդիրներին՝ երևույթն իր ամբողջության մեջ դիտելով, որպես «Պանթեոնի ձեռքբերում»՝ էթիկական, գեղագիտական և պրոֆեսիոնալ հենարանի առումով (տես **И. Барсова**. Вариации на тему «Вокруг Моцарта» (Эдисон Денисов). – «Научный вестник Московской консерватории», 2011, № 1, с. 66–87):

♩ = 70

This musical score is for a full orchestra and percussion ensemble. It consists of 24 staves, each representing a different instrument or section. The score is written in 4/4 time and begins with a tempo marking of ♩ = 70. The instruments listed are:

- Piccolo
- 2 Flauti
- Whistle
- 2 Oboe
- 2 Clarinetti in B
- 2 Fagotti
- 4 Corni in F
- 3 Trombe in B
- 3 Tromboni
- Tuba
- Timpani
- Gran Cassa
- Tamburo militare
- Piatti
- Wood block
- Xylophone
- Campana
- Arpa
- Violini I
- Violini II
- Viola
- Celli
- C-bassi

The score shows the first four measures of the piece. The Whistle part has a melodic line with slurs and accents. The percussion parts (Gran Cassa, Tamburo militare, Piatti, Wood block) have rhythmic patterns indicated by vertical lines. The string parts (Violini I, Violini II, Viola, Celli, C-bassi) are mostly silent in the first four measures.

W-tle

W-tle 10 *pp* *p*

W-tle *p*

W-tle 20 *morendo*

W-tle *mf* *mf*

W-tle 3

W-tle 30 *p* 6

W-tle *p* = 60 *espressivo*

C-ne *mf* *p*

V-ni I *f* *div.*

V-ni II *div.*

ՈՒՐԵՆ ՍԱՐԳՍԵԱՆԻ ԱՇԽԱՏՈՒՄ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԸ

«Chronicle»-ը վիզուալ պատկերներ ստեղծող երաժշտական նարատիվ է, երաժշտական էպիկա: Այն, ասես, սկսվում է սրինգի (whistle) մենախոսությամբ, ասես, ներկայացված պատմիչի խոսքով՝ ընդմիջարկված դրամատիկ իրադարձություններով լի անցյալի, պատերազմական իրավիճակների սիմվոլիկ արտացոլումներով:

Միևնույն ժամանակ, իր ուրիշական հեքով ու պատկերավորությամբ ստեղծագործությունն օժտված է բալետային երաժշտության ներուճակ հատկանիշներով: Այս ինքնատիպ «տարեգրության» կառույցում առանձնանում են հարաբերականորեն ավարտուն երկու բաժին, որոնք սկսվում են հեղինակային խոսուն դարձվածքով, ասես, ավետելով ժամանակի թեման՝ ժամացույցի ընթացքի նմանակումով: «Chronicle»-ի մոայլ ավարտին, այնուամենայնիվ, լուսավոր ու քնարական մեղեդի է ծնվում և նույնքան անսպասելի անէանում: Ստեղծագործական կանխատեսում է, թե՛ պատմական ընթացքի տրամաբանությունից բխող հետևություն⁸⁴:

Դարերի շրջադարձին գրված գործերում արդեն հստակ արտացոլված են ժանր-ձև-գաղափար միասնության հեղինակային հակիրճ մեկնաբանության սկզբունքները: Ավանգարդի հրապուրանքներից, մոդեռնիզմի հետ ունեցած անմիջական շփումներից հետո Ռուբեն Սարգսյանը հակվում է հարաբերականորեն պահպանողական կամ չափավոր մոդեռն ոճին, մեղեդային առավել արտահայտիչ հյուսվածքներով հագեցած մտածողությանը՝ խուսափելով նաև ուղիղ մեջբերումների սկզբունքից: Տեխնիկական հարուստ զինանոցն ու գիտելիքը թույլ են տալիս ակադեմիական երաժշտական հարուստ շտեմարանից ստանալ հոգևոր ու հուզական ազդակներ, դիմել ինքնահղումների՝ վերախմաստավորելով դրանք որպես խորհրդանիշներ ստեղծագործական կոնկրետ գաղափարների մարմնավորման համար:

Մտածողական այս տեսակը՝ անկախ Նոր երաժշտության մեջ գերակայող «ժանր» հասկացության փլուզման, վերախմաստավորման կամ քայքայման իրողությունից, հատուկ է արվեստագետի երաժշտական էությանը: Այս սիմֆոնիկ երկերում խտացված գաղափարներն ու արտահայտչամիջոցները հետագայում ամբողջացել և մարմնավորվել են կոմպոզիտորի տարբեր մտահղացումներում, մասնավորապես, «Իմ ժամանակակցին» շարքի առանձին երկերում:

⁸⁴ «Քրոնիկոն» սիմֆոնիայում դիտելի դրվագային կոնցեպցիայի իմաստային մեկնությանն է նվիրված Ս.Անդրեասյանի «Симфония «Хроникон» Рубена Саргсяна» վերնագրով հոդվածը (տե՛ս «Երաժշտական Հայաստան», 2015, № 1, էջ 53-55):

ԳԼՈՒԽ V

«ԻՄ ԺԱՄԱՆԱԿԱԿՑԻՆ»

XXI դարասկզբին Ռուբեն Սարգսյանը, ասես, ի մի է բերում ինքնարտահայտումների հարացույցը՝ քնարական և ռոմանտիկական տրամադրությունները, երգիծական ու կենսահաստատ զգացողությունները, անորոշ ապագային և արվեստագիտական ինքնակեցությանն ուղղված երաժշտական մտորումները:

Փոքր ծավալի սիմֆոնիկ և կամերային ժանրերում էքսպրեսիոնիստական, նեոկլասիկական արտահայտչամիջոցներով ու կառուցվածքային սկզբունքներով կոմպոզիտորը ստեղծել է ինքնատիպ գործեր՝ իրենց իմաստային, հուզական տարողությամբ համարժեք մեծածավալ կտաձևերին: Նշված ոլորտներում հեղինակի ստեղծագործական մնահղացումները՝ հազեցած ազգային երաժշտամտածողությանը բնորոշ ելևէջներով, հաճախ հատում են ազգայինի սահմանները և հարաբերվում համամարդկայինին: Այդպիսիք են «Իմ ժամանակակցին» խորագրով միավորված չորս ստեղծագործությունները, որոնց համար 2007 թ. կոմպոզիտորն արժանացել է Հայաստանի Հանրապետության պետական մրցանակի:

Մի առիթով Ռ. Սարգսյանն ասել է, որ դժվար է դարաշրջանին համահունչ լինել, այդ արվեստին Շոստակովիչն է տիրապետել⁸⁵: Այս իրավացի խոսքերը, անկասկած, առաջնային ազդակների դեր են կատարել կողմնորոշվելու համաշխարհային երաժշտարվեստի երևակայական զուգահեռականներում: Այդ արվեստի խոր իմացության արդյունքում է նա առանձնացրել ու կարևորել ժամանակի շունչն ու ոգին մարմնավորող և անկրկնելի արտացոլող փարոսներին՝ Մալերին, Շյոնբերգին, Շոստակովիչին, ինչպես նաև իր վերաբերմունքն արտահայտել նրանց ստեղծագործական էությանը բնորոշ խորհրդանիշներ-

⁸⁵ М. Берко. На рубежах творческой зрелости. – «Литературная Армения», 1982, № 8, с. 75–77.

րի նպատակամետ հիշեցումներով: Դրանք առկայծում են Ա հեղինակային նվիրումներում (օրինակ՝ Շոստակովիչին նվիրված № 1 Տրիոյում), Ա մալերյան հնչերանգներ պարունակող կամերային գործերում և «Իմ ժամանակակցին» ստեղծագործական շարքում:

Կոմպոզիտորի երաժշտական խոսքն ուղղված իր ժամանակակցին՝ արդեն իսկ ժամանակի և արվեստագետի բարդ փոխհարաբերության արտացոլումներից է՝ կենտրոնացած ինքնության ու իրականության, ազգայինի ու վերազգայինի խրթին հարցերի վրա: Եվ այդ ուղերձը՝ իր հոգևոր նորոգման կոչով և խորհրդով դուրս է գալիս կոմպոզիտորին մտահոգող «Ձայն բարբառոյ յանապատի» աստվածաշնչյան ասույթի բացասական հարասացության սահմաններից:

Ինչ է նախորդել «Իմ ժամանակակցին» շարքին և ինչ է հաջորդել դրան: Այս պայմանական բաժանումը նախևառաջ թույլ է տալիս հետադարձ հայացքով ընդգրկել կոմպոզիտորի ոճական կողմնորոշումների, երաժշտալեզվական մոդելների ու ձևակառուցվածքային սկզբունքների այն համակարգը, որը բնորոշ է Սարգսյանի երաժշտությանը, և որին անդրադարձել եմ կամերային-գործիքային առանձին երկերի լուսաբանումներում: Դա հստակ պատկերացում է տալիս հեղինակի երաժշտական մտածողության ձևավորման հիմքերի՝ նեոկլասիցիզմի, նեոռոմանտիզմի, էքսպրեսիոնիզմի նշանակության և ընդգրկումների մասին: Ի վերջո, այդ հարաբերական սահմանազատումը հնարավոր է դարձնում ըմբռնել կոմպոզիտորի «ռետրոսպեկտիվ հակումների» իմաստը Ա ժամանակակից երաժշտության, Ա իր ստեղծագործության հասուն շրջանի համատեքստում: Հետևելով նրա ստեղծագործական տարեգրությանը՝ տեսնում ենք, որ նշանակալի ձեռքբերումներ և պրոֆեսիոնալ հեղինակություն ունեցող արվեստագետը՝ հետամուտ իր առաքելությանը, ձգտում է գաղափարական-գեղարվեստական ընդհանրացման նոր ուժով ձևակերպել իր ասելիքը XX-XXI դարերի շրջադարձին:

Այս նկատառումներով կփորձեմ քննել Ռուբեն Սարգսյանի երաժշտական ժառանգության այս նշանակալի պատումի՝ «Իմ ժամանակակցին» շարքի գաղափարական-իմաստային հենքն ու կառուցվածքային-ոճական սկզբունքները:

Այն, իրավամբ, կարելի է համարել կոմպոզիտորի հուզական-հոգեբանական կուտակումների մի բարձունք, որից հնչում և մեզ են փոխանցվում նրա միտքը զբաղեցնող խնդիրներն ու իրողությունները. ազգային ողբերգությունը՝ «Դեր-Ձոր», իրականության գիտակցումը՝ «Ինչ-

որ մնաց», վերադարձը սկզբնակետին նոր պտույտի ակնկալիքով՝ «Ի շրջանս յուր» և անցյալի ուրվականի դեռևս չլուծված դրաման՝ «Պատարագ ուրվականի համար», անորոշ ու մռայլ զգացումներով:

Կամերային նվագախմբի համար գրված «Իմ ժամանակակցին» խորագրով միավորված այս չորս ստեղծագործությունները գրվել, կատարվել ու ձայնագրվել են որպես ինքնուրույն երկեր 2005–2006 թթ., սակայն միասնական շարքի համատեքստում ակներև են դառնում նաև դրանց երաժշտափմաստային կապերն ու տրամադրությունները: Անցյալն անվերադարձ է և այն, ինչ մնացել է սոսկ հնարավորություն է անցյալի հետ հոգեբանորեն ու գեղարվեստորեն հարաբերվելու: Այդ անցյալը ներկայանում է տարաբնույթ շերտերի ազգային և դասական ավանդույթի միջամտություններով: Դրանք երբեմն ընկալվում են որպես գերակշռորեն տոնայնական, երբեմն մեղեդիական տարբեր գծերի կամ հնչյունների կոնտրաստային շարադրանք՝ մոդալ հյուսվածքներում: Տեղին է մեջբերել գերմանացի երաժշտագետ, կոմպոզիտոր Դիտեր Շնեբելի դիտարկումը Շյոնբերգի ու զործերի տոնայնական գրելաճի կապակցությամբ, համաձայն որի՝ պատմության առաջընթացի վեկտորը միշտ չէ առաջ ուղղված; այն կարող է նաև հետ ուղղված լինել⁸⁶:

Ժամանակակից երաժշտության մեջ հետադարձ հայացքներն անցյալին էական տեղ են զբաղեցնում՝ դառնալով գեղարվեստական մտածողության և գեղագիտական նոր կանոնի վճռորոշ բաղադրիչներից: Ամեն մի արվեստագետ այդ անցյալում ձգտում է գտնել իր երաժշտական տարածքը՝ միջնադարյան կառույցներից մինչև XXI դարի տեխնոլոգիական համալիրը:

Բուլեզն իր քննադատական ու տեսական հոդվածներում առանձնացրել է ինտելեկտուալ և ոչ ինտելեկտուալ արվեստագետներին. վերջինների թվում են Շոպենը, Դեբյուսին, Բեռլիոզը, բնավ չնսեմացնելով նրանց երաժշտության արժեքը, այլ հակադրելով ռադիկալ տեխնոլոգիական խնդիրներով տարված նոր երաժշտական մեթոդներ և կանոններ ստեղծող արվեստագետներին: Մնացած չափանիշներն ու հատկանիշները նա ստորադասում է ստեղծագործության գիտակցված տրամաբանական կազմակերպմանը: Ինտելեկտուալ երաժշտության հնչյունների փոխակերպումների հիմքերը փնտրելով տիեզերքի թվաբանական և երկրաչափական կազմավորման սկզբունքներում՝ Բուլեզը դրանք առնչում է իր սերիալ, ռացիոնալ շրջանի երաժշտու-

⁸⁶ Տես J. Covach. Նշվ. աշխ., էջ 29:

թյանը: Ռ. Դեկարտին նա հղում է երաժշտության գիտական, փիլիսոփայական բնույթի, մտածողության ռացիոնալ ձևի դատողություններում, իսկ Ժ. Ռամոնին հատկացնում է տոնայնական համակարգի տեսական ուղիները հարթողի դերը⁸⁷: Բուլեզն իր տարածքն ու նորարարական մտածողության դրույթները բնականաբար շաղկապում է ֆրանսիական ավանդույթին: Ռ. Սարգսյանի, ինչպես նաև նրա սերնդակից հայ կոմպոզիտորներից շատերի նորարարական բազմաթիվ մտահղացումների «ռետրոսպեկտիվ» դասականության հիմքերում հայկական միջնադարյան մոնոդիկ մշակութային տարածքն է:

Փոփոխական զգացումներով ու մտքերով է առանձնանում լարայինների և կլավեսինի (կամ դաշնամուրի) համար գրված «Ինչ-որ մնաց» երկը, որտեղ կոմպոզիտորը դիրիժորին է վերապահել նաև դաշնամուրի նվագամասի կատարումը⁸⁸: Ինչպես բազմաթիվ այլ գործերում, Սարգսյանն այստեղ ևս իր խոսքը սկսում է առանց նախաբանի: Դրամատիկ ներկայից հետադարձ հայացք անցյալին և «եղած-մնացածի» գնահատում. այսպես կարելի է բնութագրել ստեղծագործության սխեմատիկ հենքը՝ երևակված երաժշտաարտահայտչական հակադիր ոլորտների համադրումներում: Օստինատ հիմքով մեղեդային գծերի, խորալային շարադրանքի, ռոմանտիկ վալսի իմաստային լիցքերով և չարագուշակ ռիթմական հարվածների ընդհատումներով է ստեղծվում կոնֆլիկտը, որի անիմանալի շարունակությունը բերում է կտրուկ ավարտի: Չպարպված դրամատիզմի, հոգեկան խռովքի անկայուն մթնոլորտում հնչող վալսը՝ նոստալգիկ հիշողությունների խորհուրդունի: Գրավիչ, մեղեդիաստեղծ ներուժ պարունակող հեղինակային մոտիվը հնչում է նվագախմբի գրաֆիկական պարզ հյուսվածքում հաստատուն տեղ զբաղեցնող դարձվածքի և դիսոնանս համահնչյունների ուղեկցությամբ՝ որպես երաժշտական գաղափարի սիմվոլիկ համարժեք:

Հնչյունային շերտերի տեղաշարժերը «Իմ ժամանակակցին» շարքի անհատական բնութագիր ունեցող յուրաքանչյուր երկում որոշակիորեն փոխկապակցված են նաև ժամանակային տեղաշարժերին՝ երաժշտական լեզվաոճի կտրուկ փոխակերպումով: Այս ինքնատիպ մոտեցումով կոմպոզիտորը, ասես, փորձում է հարաբերել ժամանակ-

⁸⁷ Տե՛ս E. Mudler. Reflections Beyond Tradition; Pierre Boulez on his Musical Ancestry. 2020, p. 33–34.

⁸⁸ Վերլուծական դատողությունները հիմնված են Վահան Մարտիրոսյանի դեկավարությամբ իրականացված ծայնագրության վրա, որտեղ նա հաջողությամբ հանդես է գալիս որպես դիրիժոր և դաշնակահար:

ԻՆՁ ՈՐ ՄԱՍՑ
Հարային նվագախմբի և կլավեսինի համար

1
Vln. I *f*
Vln. II *f*
Vla. *f*
Vc. *f*
Cb. *f*
Cmb. *mf*

I
Vln. I
Vln. II
Vla.
Vc.
Cb.
Cmb. *f*

I
 Vin.
 II
 Vle.
 Ve.
 Cb.
 Cmb. *ff*

ների ոգին: Դաշնամուրի քառտիկ, դիսոնանս կլաստերներով հագեցած մուտքերին հետևում են ունիսոն հնչողությունները, տոնայնական և ատոնալ հատվածներով ընդգծվում է ժամանակների տարբերության դրամատիզմը:

«Ինչ որ մնաց» երկը մեզ է փոխանցում ժամանակակից արվեստագետի նոստալգիկ զգացողություններն անցյալի արժեքների նկատմամբ՝ ազգային ելևէջներով, ռոմանտիկ ռճավորումներով, մալերյան երանգներով գրավիչ վալսի ռիթմի թեթև սահքով, որի մեկնությունը, ինչպես նաև ներմուծման տրամաբանությունն առնչվում են աշխատանքում բազմիցս շոշափված ստեղծագործական փոխառությունների երևույթին: Դաշնամուրի ինքնատիպ դերն ու արտահայտչամիջոցները, ընդհատ արձագանքներն ու ակորդները, որ սթափեցնող և նոր մտորումների ազդակներ են, նաև որոշակի գործառույթ ունեն. գլխանդունդին զուգահեռ դրանք ռիթմական բազմմաստ համատեքստ են նախապատրաստում վալսի նոր պտույտների համար:

Ժանրային նմանօրինակ ակնարկներն ու իմաստային կշիռ ունեցող հնարանքները Սարգսյանի կառուցվածքային լուծումների հիմնատարրերն են, որոնցով լարվածությունն անսպասելի ընդհատվում է, ասպարեզ հարթում նոր՝ քնարական դրվագների համար: Մոդեռնիստ

կոմպոզիտոր, ճարտարապետ Յ. Քսենակիսը հայտնաբերել է, որ ժամանակակից ճարտարապետության խնդիրները հարաբերելի են ժամանակակից երաժշտության խնդիրներին: Ճարտարապետական ձևը, բարձրության հզորությունը, մակերեսն ու չափաբաժինները նրան ուղղորդել են դեպի հնչյունային տարածքի շարժման գաղափարը, որը պարտիտուրում ներկայացրել է գլխասնդոնների շարժման մակերեսի գրաֆիկական պատկերներով⁸⁹: Ըստ էության, գլխասնդոնները, ասես, ժամանակային իրողություններն արագ և կտրուկ կամրջող միջոցներ են: Տեխնոլոգիական-կառուցվածքային անավարտության տպավորությունը, թե զգացողությունը, որ միայն տվյալ երկը չի առաջացնում, թերևս, պայմանավորված է նաև կամ թելադրված գաղափարական բարձրակետի անորոշ շարունակության տրամաբանությամբ: Ակնհայտ է, դասական ձևակառուցվածքային սկզբունքների խախտումը, որով առանձնանում են կոմպոզիտորի գրեթե բոլոր երկերը՝ միմյանց չկրկնող լուծումներով:

Քննարկվող շարքի ողբերգական էջն է «Դեր-Չորը վերապրածի խոստովանանքը» կամերային անսամբլի համար գրված երկը՝ կոմպոզիտորի խոնարհումի խոսքը հայ ժողովրդի եղեռնական անցյալին: Այն նվիրված է Մեծ Եղեռնի 90-ամյա տարելիցին: Ստեղծագործությունը որոշակիորեն հարաբերվում է նախորդ՝ «Ինչ որ մնաց» երկին, ընթանում նման հուզական-հնչյունային ոլորտներում: Դրամատիկ տրամադրություններն ընդմիջող լույսի առկայծումները չեն թուլացնում անսփոփ իրողության գիտակցումը. սա արվեստագիտական խորը վերապրում է իմաստային շերտի ընդհանրացման մեծ ուժով, մտքի և հույզի հավասարակշռության, ազգայինի ու մոդեռնի օրգանական միասնության դրսևորումով: Այդ դիխտոմիկ կապերն արտացոլող կարևոր միջոցներն են՝ պարային ռիթմն իր մռայլ կերպավորումով և գլխասնդոնները: Չափազանց հետաքրքիր է ազգային պարային ռիթմի նման մեկնաբանումը՝ շեշտված գլխասնդոնների գործառույթով, ողբերգական մթնոլորտի վերարտահայտման խնդրում: Ինչպես և բազմաթիվ այլ գործերում, կոմպոզիտորը դիմել է իր նախասիրած հակադիր համադրումների սկզբունքին՝ ողբերգականը դիտելով լուսավոր հիշողությունների համատեքստում: Խոստովանանք է, թե հիշողություն՝ կորույսյալ անցյալի և անորոշ ներկայի վավերագրական կադրերի սլացքով: Խառը և շփոթված հույզեր են, որոնք ժողովրդական մեղեդու վերասլաց դարձվածքներով, դրանց մոտիվային տրոհումներով ու բազմակի կրկնություններ

⁸⁹ Տե՛ս E. Christensen. The Musical Timespace, a Theory of Music Listening, Aalborg University Press, 1996, p. 25:

ԴԵՐ-ՉՈՐԸ ՎԵՐԱՊՐԱԾԻ ԽՈՍՏՈՎԱՆԱՆՔԸ
Ֆլեյտայի, լարայինների և հարվածայինների համար

$\text{♩} = 50$

Vni I
Vni II
Vcl.
Vc.
Cb.

Vni I
Vni II
Vcl.
Vc.
Cb.

րով հյուսում են կտավի կառուցվածքային-գաղափարական հենքը:

Ազգային երաժշտության ելևէջային այս մթնոլորտում՝ ողբերգականի և լուսավորի համադրումներով «խոստովանանքը» զուգահեռվում է էդվարդ Միրզոյանի հիշատակին նվիրված կվարտետին՝ գլխասնդոնների միևնույն արտահայտչական կիրառություններով: «Դեր-Ջորը վերապարծի խոստովանանքը» Ռուբեն Սարգսյանի լեզվաճի առանցքային արտացոլումներից է: Մեղեդային հարմոնիկ դարձվածքների, ժողովրդական ելևէջների տարածական բազմաշերտ հյուսվածքների համատեքստում մոտիվային օստինատոնների ֆոնին հնչող «Տէր Ողորմեան» խորքային և անձնական հոգևոր կանչ է խորհրդանշում:

«Ի շրջանս յուր» հին կտակարանային թևավոր դարձվածքով խորագրված կամերային երկը ծավալվում է դասական տոնայնական և ռոմանտիկական մեղեդային մտածողության շրջանակներում: Մենակատար ջութակի քնարական պարզ ու գեղեցիկ դրվագով է սկսվում այս հետաքրքիր ստեղծագործական մտահղացումը՝ արքիոմատիկ գաղափարի երաժշտական խորը մեկնաբանությամբ: Մոտիվային տարաբնույթ տարրերի բազմաշերտ անցկացումներն ընդհատվում են սկզբնական երաժշտական սիմվոլի՝ «գեղեցիկի» վերադարձով: Այս սկզբունքով է ծուլվում գաղափարական կառուցվածքային համատեքստը՝ հագեցած այդ փիլիսոփայական խորհրդանիշի պարբերական՝ մերթ կրճատված, մերթ ամբողջական հիշեցումներով: Ելևէջային ակնարկները և սեփական, և գեղարվեստական այլ աղբյուրներից որոշակի ներդաշնակության մեջ են՝ որպես ընդհատ արխիտեկտոնիկայի կառուցվածքային հենակետեր: Ստեղծագործության գագաթնակետին, ոսկե հատման կետի տիրույթում, մոայլ տրամադրություններին հաջորդող հատվածում լարայինների մեղեդային ֆոնին հնչում են եռանկյունու և ռազանելլայի ռիթմական հատու հարվածները, որոնցով ստեղծագործության վերջին սիմվոլիկ պտույտն է նախապատրաստվում՝ լարվածության աստիճանական մարումով: Սա յուրովի տուրք է գեղեցիկի գեղագիտությանը՝ լայնահուն մեղեդային մոտիվներով, հարմոնիկ մտածողությամբ, գործիքային անհատականացված կազմերի տեմբրային համադրումներով: Եվ այդ գեղագիտությամբ է պայմանավորված այս երկի ընդգծված ռոմանտիկական լեզվամտածողությունը:

Թեև խնդրո առարկա շարքի ամեն մի երկում կոմպոզիտորը կենտրոնացած է միմյանցից տարբեր գաղափարների գեղարվեստական մարմնավորման վրա, այնուհանդերձ, դրամատուրգիական մտածո-

դրության և երաժշտական լեզվաճի, ինչպես նաև մեղեդային ոլորտների հակիրճ երևակումների առումով դրանք որոշակի շփման եզրեր ունեն ռոմանտիկ արտահայտչականության անհատականացված դրսևորումներում:

Ի ՇՐՋԱՆՍ ՅՈՒՐ

♩ = 55

The musical score is arranged in a vertical staff system. It begins with a tempo marking of *♩ = 55*. The first staff, Violini I, contains a melodic line with a dynamic marking of *p* and a triplet of eighth notes. The second staff, Violini II, is mostly silent with a few notes. The third staff, Violo, is in alto clef and contains a few notes. The fourth and fifth staves, Violoncelli, are in bass clef and contain a few notes. The sixth staff, Contrabasso, is in bass clef and contains a few notes. The seventh staff, Clockenspiel, is in treble clef and contains a few notes. The eighth staff, Triangolo, is in bass clef and contains a few notes. The ninth staff, Ragabella, is in bass clef and contains a few notes. The tenth staff, Campana, is in treble clef and contains a few notes. The score is divided into measures by vertical bar lines, with time signatures of 6/4 and 2/4.

Allego

Vin.I
Vin.II
Vle.
Vc.
Cb.

Vin.I
Vin.II
Vle.
Vc.
Cb.

Vin.I
Vin.II
Vle.
Vc.
Cb.

Vln. I 1
 ord. *ff*
 Vln. I 2
 ord. *ff*
 Vln. I 3
 ord. *ff*
 Vln. II 1
 ord. *ff*
 Vln. II 2
 ord. *ff*
 Vln. II 3
 ord. *ff*
 Vle.
 ord. div. *ff*
 Vc.
 ord. *ff*
 Cb.
 Clock.
 ord. *ff*
 Trgl.
 ord. *ff*
 C-ne
 ord. *ff*

The musical score consists of ten staves. The first six staves are for string instruments: Violin I (three staves), Violin II (three staves), Viola, Violoncello, and Contrabass. The last four staves are for percussion: Clock, Triangle, and Cymbals. The notation is in 2/4 time and features a series of sixteenth-note patterns in the first two measures, followed by rests, and then a continuation of the pattern in the third measure. Dynamics are marked 'ff' throughout.

Մոտիվային շերտավորված կուտակումները՝ չստեղծվորվելով դասական ձևերում, ամեն անգամ հանգեցնում են նոր, հաճախ անավարտ կառուցվածքի, որպես ձևամտածողության նոր տեսակներ, հատկապես, եթե նկատի ունենանք դրանց մեղեդիական լիցքերի ազդեցությունը ոճապես անհամասեռ կամ ատոնալ միջավայրում: Իր սկզբունքներում կոմպոզիտորը, ասես, հետևում է Թ. Ադորնոյի ձևակերպած «իդիոմատիկ տարրերի շարունակական վերահաստատումներին»⁹⁰ պատմական տարբեր ժամանակներում և ստեղծագործության տարբեր հատվածներում, ձգտելով այդ տարրերի ներքին գեղագիտության իմաստավորմանը:

Տպավորիչ հայտով է սկսվում «Պատարագը ուրվականի համար»: Բազմախորհուրդ վերնագիր՝ անցյալի ու ներկայի, ժամանակի ու կոմպոզիտորի, արվեստի ու գեղեցիկի անանց արժեքների ակնարկներով, տրամագծորեն միմյանց հակառակ գեղագիտական, գեղարվեստական արտահայտչամիջոցների կիրառություններով: Այսպես, հենավոր ակնարկ-խորհուրդ են պարունակում «Պատարագին» ներհյուսված Բիթլզի երգերի, մասնավորապես Պոլ Մակկարտնիի «Yesterday» հանրահայտ, մեխանիզմոս բալլադի ոճավորված ելևէջները՝ կիթառի, թավջութակի կատարմամբ: Դրանք խզված հարաբերությունների պատճառած տխրության, երեկվա արժեքների նկատմամբ ունեցած նոստալգիկ զգացմունքների արտահայտություններ են, որ կոմպոզիտորն ընտրել է որպես իրականությունից ու կյանքից անջրպետված հոգևոր աշխարհի, իր սևեռուն մտքերի և ներքին խռովքի խորհրդանիշ:

Ռոմանտիկական շնչով և ժամանակակից արտահայտչաձևերով հագեցած տարբեր ստեղծագործություններ Ռուբեն Սարգսյանը երբեմն կերպավորում է այնքան պարզ ու անսպասելի աղբյուրների ներառումով, որ անակնկալի է բերում, երբեմն էլ՝ երկմտանք առաջացնում: Տվյալ դեպքում, կոմպոզիտորն այս գաղափարի իրականացման համար ոչ ակադեմիական ժանրի է դիմել՝ XX դարի մասսայական երաժշտության ամենաազդեցիկ սիմվոլին: Այդ խորհրդանիշը կարելի է մեկնաբանել նաև որպես ավանգարդին հակադրվելու հնար՝ pop art-ի ներմուծումով կոմպոզիտորական արվեստ. երևույթ, որն իր հիմքերն ու նախադրյալներն ունի հատկապես ամերիկյան մշակույթում, որտեղ, այսպես կոչված, «ալտերնատիվ» մշակույթը հայտնվում է դասա-

⁹⁰ Philosophy of New Music by Theodor Adorno; translated by Robert Hullot-Kentor, 2006, Tendency of the Material, University of Minnesota Press, Minneapolis, MN, p. 31-34.

ՊԱՏԱՐԱԳ ՈՒՐՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

The musical score is for a piece titled "Rationalizing Culture" by G. Born. It consists of ten staves: Gtr., Vln. I div., Vln. II div., Vle., Vc., Cb., Pno., and Glock. The score is in 4/4 time. The Gtr. part has a melodic line starting in the 7th measure. The Vln. I and II parts have sustained notes, with Vln. II having a dynamic marking of *ff* and a *sub. P* marking in the 7th measure. The Vle. part has a melodic line starting in the 7th measure with a *sub. P* marking. The Vc. and Cb. parts have sustained notes with a *ff* marking. The Pno. part has a melodic line starting in the 7th measure with a *sub. P* marking. The Glock. part has a rhythmic pattern starting in the 7th measure with a *sub. P* marking.

կան պրոֆեսիոնալի և մոդեռն նորարականի շփման հատույթում (Գերշվինի «Սիմֆոնիկ ջազի» համանմանությամբ)⁹¹:

«Պատարագ ուրվականի համար» ստեղծագործությունն առաջին անգամ մեծ հաջողությամբ հնչել է Երևանում 2007 թ.՝ դիրիժոր Մերուժան Սիմոնյանի ղեկավարած «Ալան Հովհաննես» կամերային նվագախմբի կատարմամբ: Հեղինակի մտահղացմամբ այն արտացոլում է ժամանակակից մշակույթում տիրող միտումները՝ քրիստոնեական հավատի ճգնաժամը, ազգային արժեքների անտեսումը: Այս ցավալի երևույթներին կոմպոզիտորը փորձում է հակադրել հոգևոր՝ «հրեշտակային» գեղեցիկ աշխարհը, քանիցս ցանկանալով, որ իրական աշխարհը հաղորդակից դառնա «հրեշտակայինին»: Սարգսյանը ոչ թե

⁹¹ G. Born. Rationalizing Culture: IRCAM, Boulez, and the Institutionalization of the Musical Avant-Garde, 1995, Esthetics of Pastiche.

հուսահատ դատապարտողի, այլ գեղեցիկն ու անանցը հիշեցնողի և դրանք ապագայում տեսնողի դիրքերում է: Այս առումով նա Շոստակովիչի մոայլ ընկալումներին հակառակ բևեռում է, որի 14-րդ հանրահայտ սիմֆոնիան «հուսահատության մանիֆեստ» է համարում⁹²:

Սակայն տաղանդավոր արվեստագետի երաժշտության անկեղծությունը սթափ տրամաբանության տիրույթում է ծավալվում և ազդեցիկ է իր էքսպրեսիվ դրսևորումներով: Այն հակադրվում է «Zero hour» («ժամանակ առանց անցյալի») հասկացության բազմանշան հարասացություններին, որոնց հիմքում հնարավոր բոլոր կապերի խզումն է անցյալի հետ. մտածողություն, որ, ինչպես արդեն նշվել է, ձևավորվել էր Դարմշտադտում՝ հետպատերազմյան Եվրոպայում տիրող հոռետեսական տրամադրությունների պայմաններում⁹³: Ռ. Սարգսյանի երկերում լսելի է անցյալը՝ իր ողջ բեռնվածությամբ, այն «վերապրողի» ազդեցիկ ինտոնացիաներով, իսկ գաղափարի մարմնավորման խնդիրներում ազատ է իր երաժշտաոճական ընտրություններում ու դրանց համատեղման սկզբունքներում: Եվ այս առումով էլ նրա դիրքորոշումը հակադրվում է իտալացի կոմպոզիտոր Լուչիանո Բերիոյի՝ երաժշտություն գրել առանց անձնական մասնակցության կամ վերապրումի⁹⁴:

Երաժշտական բևեռացումներով լի մերօրյա ժամանակաշրջանում ցանկացած ուղղության կամ հոսանքին հարող ստեղծագործող ձգտում է իր տեսական-գաղափարական և երաժշտաարտահայտչական սկզբունքներն իրականացնել որոշակի ալգորիթմով: Սարգսյանի երաժշտության մեջ նույնպես որոշարկվել է նրա դրամատուրգիական սկզբունքների համակարգը՝ դասական ժանրերի դյուրաթեք կառույցներում ներկայացնել գաղափարական խորհրդանիշներ՝ ժամանակների և իրողությունների բախման երևակայական տիրույթում:

«Իմ ժամանակակցին» շարքի ամեն մի երկում կոմպոզիտորն ընկղմված է անցյալի ու ներկայի համեմատությունների և ապագայի կանխազգացումների մտորումներում: Այս հիմքով են շաղկապված Ռուբեն Սարգսյանի հակիրճ և ազդեցիկ ուղերձներն իր ժամանակակցին՝ հակադիր ելևէջային ոճական ոլորտներով, մոտիվային կոնտրապունկտ-

⁹² Ն. Գոմցյանի հետ ունեցած հարցազրույցներն անչափ հետաքրքիր են Ռ. Սարգսյանի մարդկային և արվեստագիտական էությունն ըմբռնելու, նրան հուզող խնդիրներին ծանոթանալու տեսակետից, թեև դրանք բազմաթիվ անավարտ մտքեր ու դատողություններ են պարունակում, որոնք կոմպոզիտորը ոչ թե խոսքով է շարունակել, այլ իր խոսուն երաժշտությամբ:

⁹³ Տե՛ս R. Taruskin. Oxford History of Western Music vol. 5, Chapter 1. Starting from Scratch, Oxford University Press, New York, USA, 2010, p. 1-55.

⁹⁴ Նույն տեղում:

ների իմաստային փոխակերպումներով և անորոշ ավարտներով: Միևնույն ժամանակ երաժշտադրամատիկ այս էսսեներն ինքնուրույն կատարողական կյանք ունեցող գործեր են՝ խորիմաստ վերնագրերով, երաժշտանշանային ակնարկներով: Կոմպոզիտորի այս ուղերձը ժամանակակից դասական և ազգային երաժշտության ավանդույթներով է լուսավորված: Նրա համար նորարարությունն ինքնանպատակ չէ. սակայն իր ներաշխարհի հուզական ինտելեկտուալ էությանը և ստեղծագործական երևակայության դրսևորումներում նա «մերժված» մեղեդին յուրովի կարևորող նորարար ռոմանտիկ է: Այդ են վկայում ամեն մի երկում ամփոփված միտքն ու մեղեդային նյութը, որոնցով նրա ասելիքը տարբերվում է իր ժամանակակիցներից:

ԳԼՈՒԽ VI

ՄՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ «ՆՎԻՐՈՒՄՆԵՐ»

Ռուբեն Սարգսյանի երաժշտական աշխարհի ինքնատիպ լուսատուներից են «Նվիրումներ»-ը՝ նրա ստեղծագործական առօրյան իրենց ներկայությամբ ու երաժշտությամբ իմաստավորած անվանի արվեստագետներին ուղղված ձևերը: Դրանք հագեցած են խորհրդանիշ ակնարկներով, անմիջական ու անկեղծ զգացմունքներով և ասոցիատիվ կապերով:

Նվիրումի ավանդույթը խոր արմատներ ունի համաաշխարհային երաժշտության պատմության մեջ: Այս ընդգրկուն թեման նշանակալի տեղ է զբաղեցնում նաև XX դ. երաժշտական կանոնում, արտացոլելով արվեստի տարբեր տեսակների միջև եղած ռացիոնալ և զգայական կապերի խորքային շերտերը, փիլիսոփայական դրոյթների և ռադիկալ էքսպերիմենտների հիմքերը՝ դրսևորված հնչյունի, բառերի, գույնի, նյութի բյուրեղացման ոչ օրթոդոքս լուծումներով: Բազմաթիվ հետազոտություններ են նվիրվել, մասնավորապես, XX դ. ամենանշանավոր արվեստագետներից մեկի՝ իռլանդացի գրող, բանաստեղծ, երաժիշտ Ջեյմս Ջոյսի նորարարական տեխնիկայի ազդեցությանն ավանգարդի կոմպոզիտորների ստեղծագործության վրա, որ արտառոց ընդգրկում ունեցող երևույթ է: Այս ինքնատիպ մշակութային ավանդույթում երաժիշտ և մոդեռնիստ գրողի առանձնացումը կարելի է արդարացնել առնվազն նրա երկերում դիտված և հայտնաբերված հարյուրավոր երաժշտական տարրերի ու անունների գործառական, գեղագիտական առկայությամբ՝ ֆուգա, կոնտրապունկտ, լեյտմոտիվ, տոնայնություն, մադրիգալ, վարիացիա և այլն⁹⁵:

«Ամենաերաժշտական» մոդեռնիստ գրողի գործերում բյուր ակնարկներ, մեջբերումներ, հղումներ կան դասական, ռոմանտիկ, մոդեռնիստ

⁹⁵ Տե՛ս M. Byron. Musical Scores and Literary Form in Modernism, Phrase and Subject: Studies in Music and Literature, Oxford, Legenda, 2006, p. 88.

և հատկապես ավանգարդի հիմնադիր արվեստագետների երկերին ու նրանց անուններին՝ Մոցարտ, Դեբյուսի, Լիստ, Բարտոկ, Միյո, Ստրավինսկի, Շյոնբերգ, Բուզոնի, Սատի և այլք, որոնց Ջոյսը մեծարանքի ու հիացմունքի տուրք է մատուցել առեղծվածներով լեցուն իր քերթվածքներում⁹⁶: Իրենց հերթին կոմպոզիտորները նրան են ընծայել նվիրումներ՝ արժանին մատուցելով գրողին, որ ինքնատիպ վերաբերմունք ուներ պարտիտուրի, գրական տեքստի և նարատիվի հանդեպ՝ որպես համարժեք տեքստերի: Իր «Ուլիսիս» վեպի «Սիրեններ» էպիզոդում, որը նվիրված է երաժշտությանը, Ջոյսը հայտարարում է, որ սիմֆոնիա է գրել: Ձգտելով պատկերել երաժշտության արատրակտ զգացողություններն ու կոնկրետ տարրերը՝ միախառնելով առասպելը, երաժշտությունն ու գրականությունը, նա հնչյունային մոդեռն արվեստ է ներմուծել լեզվի և գրականության մեջ⁹⁷:

Այս հայանցիկ շոշափված համատեքստում անհնար է շրջանցել նաև Լուչիանո Բերիոյի «Thema»-ն (1958)՝ նվիրված Ջոյսին՝ «Omaggio a Joyce» ենթավերնագրով, որ musique concrete-ի գլուխգործոցներից է համարվում: «Thema»-ն էլեկտրաակուստիկ կոմպոզիացիա է՝ հիմնված Ջոյսի «Սիրեններ»-ի առաջին էջի ընթերցման վրա, որ կատարում է Բերիոյի կինը՝ XX դ. հռչակավոր սոպրանո Քեթի Բերբերյանը: Ըստ էության, կոմպոզիտորը Ջոյսի տեքստերը ներկայացնում է էլեկտրոնային միջավայրում՝ դիսոնանտ հնչյունարտաբերման և աղմուկի լայն դիսպազոնում, տարանջատված և վերամիավորված նյութի խորհրդանշական շեշտադրումներով՝ դրանց կտրտված հատվածների անվերջ փոխակերպումների հնչյունային մշուշապատ վերարտաբերումներով: Խախտված են խոսքի և աղմուկի, պոեզիայի ու երաժշտության սահմանները, և այդ բոլորը գեղարվեստական առումով չափազանց տպավորիչ ու անսովոր՝ անսահմանորեն ընդլայնում են հնչյունի ներքին հնարավորությունները: Ինքը՝ կոմպոզիտորը, գրել է, որ «Thema»-ում փորձել է ներկայացնել Ջոյսի տեքստի երաժշտական վերամեկնաբանումը՝ ֆոնետիկ և սեմանտիկ տարրերի ընտրությամբ ու փոխակերպումներով: «Սիրեններ»-ում առկա պոլիֆոնիկ ձևավորումն ու տեխնիկան Ջոյսը բնութագրել է «Fuga per canonem» («Ֆուգա ըստ կանոնի»)՝⁹⁸:

⁹⁶ J. McCreedy. James Joyce and the "Difficult Music": References to Modernist Classical Composers in Finnegans Wake, MA dissertation, University of Ulster, 2008, p. 88.

⁹⁷ Z. Bowen. Musical Allusions in the Works of James Joyce, State Iniversity of New York Press, 1974.

⁹⁸ Ջոյսի խոսքերով Բերիոն իրականացրել է 40 րոպե ընթացող յուրատեսակ

Անկասկած, տեխնոլոգիական սինկրետիզմը, որ ձևավորվել էր XX դ. մշակութային միջավայրում, իր տեղային դրսևորումներն ու արձագանքներն է ունեցել տարբեր ազգային կոմպոզիտորների ստեղծագործություններում՝ որպես գրելաոճի մոդել: Ամեն դեպքում, տեքստը՝ գրական, թե երաժշտական, իր սեմանտիկ և թեմատիկ ողջ հագեցվածությամբ, ամբողջանում է նախնական գաղափարի կամ մտահղացման անհատական-հեղինակային մեկնաբանությամբ:

Երաժշտական նվիրումները ամենատարբեր սկզբունքներով են մարմնավորվել XX դարի մշակութային միջավայրում ձևավորված նեոկլասիցիզմի, բազմաոճության և «տեխնոլոգիական սինկրետիզմ» հասկացության սահմաններում: Խորագրային նմանություններով, թեմատիկ, ժանրային, կառուցվածքային ու ոճական գիտակցված ակնարկներով ու մեջբերումներով դրանք «երկխոսող» հեղինակներին բազմաթիվ թելերով մերձեցնող խորհրդով են օժտված: «Նվիրումներ»-ը նաև երաժշտական ավանդույթների ժառանգորդությունը կարևորող ու վերակերտումը յուրովի խթանող ասպարեզ են տրամադրում:

Անդրադառնալով Ռուբեն Սարգսյանի երաժշտական ժառանգության անձնական-հոգեբանական այս շերտի քննությանը՝ հարկ է ընդգծել, որ դա նրա ստեղծագործական ինքնության կայացման յուրատիպ վկայականներից է: Իր ստեղծագործական կյանքի տարբեր շրջաններում, զանազան հետաքրքիր մտահղացումներին զուգահեռ, նա ստեղծել է արվեստագիտական ակնածանք և համակրանք նշանավորող կտավներ՝ ծոնված իր երաժշտական կենսագրության իրական ու հոգևոր մասնակիցներին, որոնումների ուղիները հատող և կողմնորոշող արվեստագետների լուսավոր կերպարներին՝ Կոմիտաս, Շոստակովիչ, Միրզոյան, Տերտերյան, Տիգրանովա, Սարյան:

Դրանք թույլ են տալիս թափանցելու կոմպոզիտորի երաժշտական աշխարհը, ըմբռնելու նրա մարդկային ապրումները, գնահատելու արվեստագիտական ներշնչանքների ստեղծագործական չափանիշները: «Նվիրումներ»-ի ընձեռած կերպարային-ասոցիատիվ լայն համատեքստում՝ ռոմանտիկականի, նեոկլասիկականի, հոգևոր միջնադարի ու

ռադիոֆոնիկ փոխանցումներ՝ հիմնված բնական ձայնարտաբերումների վրա, այն է՝ հնչյունների էլեկտրաակուստիկ մոնտաժ: Ջոյսի հեղափոխական գրելաոճին Քերիոն հիմնավորապես ծանոթացել էր իտալացի գրող, գիտնական, նշանագետ, փիլիսոփա Ումբերտո Էկոյի միջոցով, որն ուղղակիորեն նրան մղել էր դեպի էլեկտրոնային երաժշտություն, մագնիտաֆոնային մանիպուլյացիաների, էլեկտրաակուստիկ փոխակերպումների անսահման ոլորտները: Այս մասին մանրամասն տես «Oxford Studies of Composers: Berio», Oxford University Press, 1991.

Ժամանակակից դասական երաժշտության առանձին տարրերի սինթեզման արդյունքում շոշափելի են դառնում նաև այդ արվեստագետներին բնորոշ խորհրդանշական տարրերը:

«Նվիրումների» առաջին հայտերից է Դմիտրի Շոստակովիչի հիշատակին նվիրված №1 Տրիոն՝ ֆլեյտայի, ջութակի և մագնիտաֆոնային ժապավենի համար (1975), վերնագրված՝ «Музыка памяти Д. Шостаковича для флейты, виолончели и магнитофонной ленты»⁹⁹, որտեղ հիշեցումներ և ակնարկներ կան Շոստակովիչի երաժշտությունից, մասնավորապես, 14-րդ սիմֆոնիայից:

Ընդհանուր առմամբ, էքսպերիմենտալիզմը Ռ. Սարգսյանի երաժշտական խառնվածքի տարերքներից չէր, թեև որոշ գործերում առկա էլվելկտիկ տեխնիկական միջոցները թույլ են տալիս նաև այդ դիտակետից մեկնաբանել դրանց ձևավորումը: Այս Տրիոն՝ կոլաժի, 14-րդ Սիմֆոնիայից քաղված մեջբերումների, պոլիֆոն հյուսվածքների փոխակերպումների և մագնիտաֆոնային ձայնագրության կիրառություններով, ակնհայտորեն հարում է էքսպերիմենտալ պրակտիկային՝ ոճական տարաբնույթ տարրերի համադրման գեղագիտությամբ:

14-րդ սիմֆոնիան, երաժշտագետ Լ. Հակոբյանի խոսքերով, «կոմպոզիտորի (Շոստակովիչի – Լ. Ե.) ստեղծագործական ուղու վերջին գագաթնակետն է», որտեղ նա հառնում է որպես «հետստալինյան սովետական երաժշտական ավանգարդի ներկայացուցիչներից մեկը, ովքեր ազատորեն կիրառում էին Արևմուտքի տեխնիկայի միջոցները՝ դրանք հակադրելով պահպանողական երաժշտական գրեյտոճին, հակադրելով անհամատեղելի չափողականություններում գտնվող աշխարհներն ու իրողությունները»¹⁰⁰: Ոճակերպարային այս հակադրությունները կամ խաղերն ու հնարանքները միևնույն ստեղծագործության մեջ՝ որպես բազմաոճության դրսևորումներ կամ բազմաոճ դիս-

⁹⁹ «Նվիրումներ»-ի համատեքստում հետաքրքիր է մեջբերել Շոստակովիչի խոստովանությունը՝ իր վաղեմի ընկեր Իսահակ Գլիկմանին ուղղված նամակում: Մոայլ տրամադրություններով լի 8-րդ լարային կվարտետի կապակցությամբ, որը կրում է «Ֆաշիզմի և պատերազմի զոհերի հիշատակին» անվանումը (1960), նա գրել է. «Я размышлял о том, что если я когда-нибудь помру, то вряд ли кто напишет произведение, посвященное моей памяти. Поэтому я сам решил написать таковое. Можно было-бы на обложке так и написать: «Посвящается памяти автора этого квартета». Основная тема квартета ноты D. Es. C. H., т. е. мои инициалы (տե՛ս Письма к другу: Дмитрий Шостакович – Исааку Гликману. М–СПб., 1993, с. 159): Շոստակովիչն այս հարցում չի մարգարեացել. բազմաթիվ կոմպոզիտոր-հետևորդներ, նրա ստեղծագործական դասարանում ուսանած և նրա երաժշտությամբ ոգեշնչված երաժիշտներ նրան են նվիրել իրենց գործերը:

¹⁰⁰ Լ. Аюпян. Феномен Дмитрия Шостаковича, СПб., 2018, с. 614–615.

կուրս, բացի երկատված մտքի, երկատված ինքնության ցուցիչներ լինելուց, ըստ էության, նաև կառույցի դրամատուրգիական ինքնատիպությունն ապահովող հաստատուն ստեղծագործական մեթոդի նշանակություն են ձեռք բերել Սարգսյանի, ինչպես նաև հայ, ռուս, եվրոպացի կոմպոզիտորների երկերում¹⁰¹:

«Նվիրումի» յուրօրինակ դրսևորում կարելի է համարել նաև 2003 թ. կամերային նվագախմբի համար գրված «Ռեքվիեմ Սեպտեմբերին, 9.11» («Реквием для Сентября, 9.11») երկը՝ նվիրված ԱՄՆ-ում 2001 թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչական հարձակումների հետևանքով զոհված մարդկանց հիշատակին, որտեղ ինքնաթիռների շարժիչների ձայնն ընդօրինակող հնարներն իրականացված են նվագախմբային գործիքների աղմկային-հարվածային հնչողությամբ: Կոմպոզիտորն այստեղ չի դիմել մեքենայական կամ էլեկտրոնային միջոցների կիրառությանը:

1987 թ. կոմպոզիտորն իր ստեղծագործական տուրքն է մատուցում Կոմիտասին՝ նրան ձոնած դաշնամուրային սյուիտով: Այն մտահղացմամբ հարում է մյուս նվիրումներին: Միևնույն ժամանակ Կոմիտասի խորհուրդը ժամանակի տեխնոլոգիական և երաժշտալեզվական դաշտում իմաստավորելը, որպես հիշատակված միտումներն արտացոլող օրինակ, նաև այլ՝ հոգևոր-ինքնութենական դաշտ է ենթադրում: Կոմիտասի երաժշտությամբ ոգեշնչվելն ու վերակենդանացնելն առանձնահատուկ պատասխանատվություն և, հիրավի, մեծ փորձություն է ամեն մի հայ արվեստագետի համար: Դրանով էլ սյուիտը տարբերվում է մյուս նվիրումներից՝ վեր բարձրանալով անհատական զգացմունքների, ստեղծագործական համակրանքների ու հոգեհարազատ կոմպոզիտորների երաժշտության ազդակներից դեպի համազգայինն ու համամարդկայինը: «Կոմիտասին» դաշնամուրային շարքը Սարգսյանի ստեղծագործական ինքնարտահայտման մի ինքնատիպ կառույց է՝ կոմիտասյան սկզբունքների ժամանակակից վերամարմնավորումների բազմազան դրսևորումներով: Այդ կառույցի յոթ մասերով հեղինակն անցնում է Կոմիտասի «Կռունկ»-ի խորհրդանշանական ելևէջների ուղեկցությամբ: Հայ կոմպոզիտորներից շատերի ուղին է լուսավորված Վարդապետի հոգևոր փարոսով, նրա ստեղծած ու մշակված ազգային երաժշտական գանձարանի փայլուն նմուշներով: «Կռունկ», «Անտունի», «Գարուն ա», «Կաքավիկ» և երգային ու պարային այլ եղանակներ, Կոմիտասի լույսի ներքո և նրա ստեղծագործություններ-

¹⁰¹ Տե՛ս I. Medic. In the Orbit of Shostakovich: Vasilije Mokranjac's Symphonies, in Music and Society in Eastern Europe, 2013, vol. 8.

ՌԵԲԿԻՄ ԱՆՊՏԵՄԲԵՐԻՆՆ, 9.11

The musical score is arranged in a standard orchestral format with the following parts from top to bottom:

- Fl. (Flute)
- Ob. (Oboe)
- Cl. (Clarinet)
- Fg. (Bassoon)
- Tr-ba (Trumpet)
- Trb. (Trombone)
- T.mil. (Percussion)
- Glock (Glockenspiel)
- Arpa (Harp)
- Pno (Piano)
- Vln. I (Violin I)
- Vln. II (Violin II)
- Vla. (Viola)
- Vcl. (Violoncello)
- Cb. (Contrabass)

Key performance instructions include *gliss.* (glissando) for the strings and harp, and *cluster* for the piano.

Fl.
Ob.
Cl.
Fg.
Tr-ba
Tib.
T.mil.
Glock.
Arpa
Pno
Vin. I
Vin. II
Via.
Vcl.
Cb.

fp

ԿՈՄԻՏԱՍԻՆ
Դաշնամուրի համար

♩ = 58
accel.
rit.
a tempo
♩ = 56
mf
cresc.
poco a poco

րում բյուրեղացած ինքնատիպ լեզվաոճով ու ստեղծագործական սկզբունքներով դարձել են տարբեր անհատականություն և երաժշտական խառնվածք ունեցող հայ կոմպոզիտորների գեղարվեստական մտահորիզոնի կայուն առանցքներից¹⁰²:

¹⁰² Այս մասին մանրամասն տե՛ս Լ. Երնջակյան. Ռուբեն Սարգսյանի երաժշտական նվիրումները. – Կոմիտաս թանգարան-ինստիտուտի Տարեգիրք, «XXI դարի հայ երաժշտության հարցեր», հ. Ը, Երևան, 2023, էջ 116–137:

Մեծատաղանդ դաշնակահարուհի Սվետլանա Նավասարդյանը՝ Կոմիտասի երաժշտության զգայուն և անկրկնելի մեկնաբանը, իր խոսքում՝ նվիրված Ռուբեն Սարգսյանին, գրել է, որ «Նվիրում Կոմիտասին» շարքը գրական մի մարգարիտ է, որի միջոցով ընթերցվում է ողջ Կոմիտասը և կատարողին ի գորու դարձնում երկխոսել նրա հետ: «Նվիրումը այսօր ինձ օգնում է կիսել ժամանակի դժվարությունները... Որքան արտահայտիչ կարող է լինել երկու հնչյունը... Ինձ հայտնի քիչ ստեղծագործություններ կան, որտեղ այդքան խնամքով են աշխատել ինտոնացիայի հետ, այդքան օրգանական է կառուցված շարքը: Նվիրումը մի ամբողջ ներկայացում է մեկ դերասանի թատրոնում: Ասես մի փոքր, անշուք ֆլեշ-կրիչում հավաքված է ժողովրդի կենդանի և հուզիչ պատմությունը: Եվ ինչպես Կոմիտասի մոտ՝ հյուսվածքում չկան ավելորդ նոտաներ: Սա մասնավորի և ընդհանուրի հանճարեղ միահյուսվածք է: Երջանկություն է՝ այդպիսի ստեղծագործությունը վերապրել, երջանկություն է՝ ճանաչել հեղինակին, ով, ի դեպ, երբեք չէր խոսում իր կերտած երկերի մասին, այլ հավատարիվ դրանց՝ հանձնում էր մեզ որպես սրբություն, որպես հրաշալի խճանկարի մասնիկներ, որ պետք է հավաքվեն»¹⁰³:

Կոմիտասին նվիրված դաշնամուրային այս շարքում, ինչպես և ավելի վաղ գրված «Հայկական գրաֆիկա»-ում (1973)¹⁰⁴ Ռ. Սարգսյանը կիրառում է տեխնիկական բազմազան միջոցներ՝ սերիային, պուանտիլիստական, որոնք առաջին իսկ պիեսից որոշարկում են շարքի արտահատչականության հիմքերը՝ կոմիտասյան ելևէջումներից բյուրեղացած հնչյունաշարը: «Հայկական գրաֆիկա»-ին վերաբերող դատողություններում Ի. Զոլոտովան ընդգծում է ֆոկլորային ծագում ունեցող հիմնական մոտիվի ռեգիստրային-տեմբրային գունավորումների տեխնիկան, որ առնչվում է «հնչյուն – գույն մեղեդի» («Klangfarbenmelodie») տերմին հասկացությանը¹⁰⁵:

«Նվիրում»-ը ազգային երաժշտամտածողության գիտակցված արտահումն է ոչ ավանդական հնչյունային ոլորտ, դրա պրոյեկտումը դիսոնանս ակորդներով հագեցած տեխնոլոգիական նոր միջավայր: Միևնույն ժամանակ նյութի մատուցման սկզբունքներում դիտելի են և

¹⁰³ Ս. Նավասարդյանի իր խոսքը գրել և ինձ է տրամադրել այս մենագրության ստեղծման առիթով:

¹⁰⁴ «Հայկական գրաֆիկա»-ն ընդգրկված է հեղինակի կազմած «Հայ կոմպոզիտորների կամերային ստեղծագործությունները» ժողովածուի մեջ, 1982:

¹⁰⁵ И. Золотова. Пути развития пианизма в Армении (вторая половина XX века), Ереван, 2010, с. 170–171.

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱՖԻԿԱ

♩ = 60

Pno

The musical score is written for piano (Pno) and consists of three systems of staves. The first system starts with a tempo marking of ♩ = 60. The first staff has dynamics *ff*, *sub. pp*, and *mf*. The second system has dynamics *ppp*, *sub. f*, *s*, *sf*, *sf*, and *ff*. The third system has dynamics *ff* and *sfz*. There are various musical markings such as *senza*, *tr*, and *tr* throughout the score.

ԳՐԱԳԻՏՈՒՄ ԵՎ ՓՈՒԿՆԵՐ ԿՈՄՍՏԻՏՈՒՄ ԿՈՄՊՈԶԻՏՈՐ ԵՎ ՓՈՒԿՆԵՐ ԿՈՄՍՏԻՏՈՒՄ

Կոմիտասի հնչյունային, գունային իմպրեսիոնիստական ընդգծումները, և դրանց տարածական տրոհման ցուցադրումները, և ռիթմամեղեդային հյուսվածքի հարստացման ակորդային կիրառությունները՝ դրամատուրգիական կառուցյի հետևողական արտացոլումներում¹⁰⁶:

«Կոմիտասին» շարքի յոթ մանրանվագներում կոմպոզիտորն աստիճանաբար հասունացնում է իր «նվիրումը» խորհուրդը՝ կոմիտասյան հակիրճ ելևէջային բջիջով մարմնավորված ազգային ոգու կանչը ժամանակի պտույտներում: Կառուցվածքային առումով ամեն մի պիես, ասես, մի պտույտ է, որի ժամանակ հնչում, հարաբերվում և կերպափոխվում են ծանոթ ինտոնացիայի խորքային իմաստները ռիթմական և գրաֆիկական կալեյդոսկոպիկ պատկերներում:

Կոմիտաս վարդապետին ձոնված այս շարքն իր ոչ ավանդական լադատոնայնական և ավանգարդի տեխնիկային բնորոշ միջոցների օրգանական միասնությամբ 1980-ականների հայ դաշնամուրային ար-

¹⁰⁶ Ի. Զոլոտովան վերը նշված իր արժեքավոր մենագրության մեջ կոմիտասյան այս սյուիտում դաշնամուրի մեկնաբանման տարաբնույթ երեսակներ է առանձնացնում (տես նույն տեղում, էջ 289):

ԿՈՄԻՏԱՍԻՆ

Piano

վեստում ձևավորված ստեղծագործական միտումների փայլուն օրինակներից է: Այն յուրովի, ի շարս այլ հեղինակների տարբեր ժանրային նվիրումների, ընդլայնում է Կոմիտասի դաշնամուրային երկերում մշակված լեզվաոճական ու արտահայտչական առանձնահատկությունների սահմանները: Հայկական մոնոդիայի ներունակ հատկանիշների վերաարարումով, դամի նմանակումներով, դաշնամուրի ձայնաձավալի խորհրդանշական մեկնաբանումով (թափանցիկ ֆակտուրա, օկտավային արձագանքներ, ռեգիստրային կոնտրաստներ) վերջավորող դարձվածքների հատու կիրառություններով բնութագրվող այս շարքը նաև իմաստային-գեղագիտական կարևոր կնիք է կրում: Գերակշռորեն ստոնալ հնչյունային տարածքում՝ մոդալ հարմոնիայի առանձին դրսևորումներով, կոմիտասյան «Կոունկի» միկրոտևեշների

հետ երկխոսում է նաև Ռուբեն Սարգսյանն իրեն բնորոշ ռոմանտիկական մոտիվներով, որոնք լսելի են նրա բազմաթիվ գործերում: «Նվիրումի» վերջին մասում կոմպոզիտորը գրաֆիկական ուղղահայաց հյուսվածքում պատկերում և հավերժացնում է երկի կառուցվածքային հիմքի խորհրդանիշը՝ «Կոունկի» սկզբնական մոտիվի հնչյունները՝ զանգերի հանդիսավոր դրամատիկ տպավորություն թողնող ակորդային հարվածների ներքո: Կոմիտասյան դաշնամուրային երկերի վերապրումով և դրանց նշանային արտացոլումներով ու ոգեղեն լիցքերով ստեղծված այս գործը իր նշանակալի տեղն ունի հայ դաշնամուրային կատարողական արվեստում¹⁰⁷: Ըստ էության, այն կոմիտասյան սկզբունքների և գրելաոճի արտացոլումն է երաժշտա-լեզվագրական այլ դաշտում՝ ժամանակակից մեկնություններով ու խորքային շերտերի գիտակցումով, որ Կոմիտասին նվիրված տարբեր «Նվիրումներ»-ում նոր չափողական միավորներով է երևակվում:

Կոմիտասյան ինքնատիպ «ընթերցումներից» կարելի է համարել «И утренней стал звездой» (1983) երկը՝ հիմնված Պարույր Սևակի «Անլուռելի զանգակատան» տեքստերի վրա: Այն բաղկացած է վեց մասից, որոնք Կոմիտասի կյանքի և ստեղծագործության տարբեր՝ լուսավոր ու ողբերգական «դողանջների»՝ «Մանկության», «Եղեռնի», «Սև գարունի», «Զարթոնքի», «Ժողովրդական տոնախմբության» մանրապատումներն են, խորհրդանշական տեսիլքի՝ արվեստագետի անմահության լավատեսական մեկնաբանությամբ:

Ավետ Տերտերյանին ձոնված «Ի հիշատակ» («In Memory»)¹⁰⁸ ստեղծագործությունը՝ կամերային նվագախմբի, չելեստայի և հարվածայինների համար, կոմպոզիտորի հրաժեշտի խոսքն է մեծ արվեստագետին՝ գրված զգացմունքային, անձնական խոր վերապրումի պոռթկումներով: Զգալի են, անշուշտ, տերտերյանական նորարարական սիմֆոնիզմի տարերքի ակնարկները, հեթանոս ոգու այն ըմբռնումներն ու պատկերացումները, որ առկա են նրա սիմֆոնիաներում¹⁰⁹՝ մտազու-

¹⁰⁷ Շարքի ստեղծագործական-կատարողական քննությանը նվիրված վերլուծականում դաշնակահար-երաժշտագետ Լ. Արտեմյանն առանձնապես կարևորում է «մոդուների համակարգերի» ներգործուն կապերը՝ ստեղծագործության դրամատուրգիական ամբողջությունն ընկալելու դիտակետից (տես Լ. Արտեմյան, XX դարի նոր կոմպոզիցիոն տեխնոլոգիաներով գրված հայկական դաշնամուրային երաժշտության կատարողական խնդիրները, Երևան, 2015, էջ 152-164):

¹⁰⁸ Ստեղծագործությունն առաջին անգամ հնչել է 1995 թ., Ֆիլհարմոնիայի մեծ դահլիճում՝ դիրիժոր Ռուբեն Ասատրյանի ղեկավարությամբ: Այն հրատարակվել է 2001 թ. Երևանում:

¹⁰⁹ М. Рухкян. Авет Тетртерян. Творчество и жизнь. Ереван, 2002.

հ ՀԻՇԱՏԱԿ

Funebre ♩ = 72

Violini I div.

Violini II div.

Viole div. *pp*

Celli div. *pp*

Basso *pp*

Celesta

Timpani

Campane

Cassa $\frac{4}{4}$

Piatti $\frac{4}{4}$

Triangolo $\frac{4}{4}$

Detailed description: This is a page of a musical score for a symphony. The title at the top is 'հ ՀԻՇԱՏԱԿ' (h Hishatsak) and the movement is 'Funebre' with a tempo marking of ♩ = 72. The score is for a full orchestra. The instruments listed on the left are Violini I div., Violini II div., Viole div., Cello div., Bass, Celesta, Timpani, Campana, Cassa, Piatti, and Triangolo. The Viole, Cello, and Bass parts are marked with *pp* (pianissimo). The Cassa, Piatti, and Triangolo parts are marked with a 4/4 time signature. The score consists of 11 staves, each with four measures of music. The Violini I and II parts are mostly rests. The Viole part has a melodic line starting with a half note G4, followed by quarter notes. The Cello part has a similar melodic line. The Bass part has a melodic line starting with a half note G2, followed by quarter notes. The Celesta, Timpani, and Campana parts are mostly rests. The Cassa, Piatti, and Triangolo parts have a simple rhythmic pattern of quarter notes.

V-ni I div.

V-ni II div.

V-le div.

C-lli

C-b.

գորդված նախաքրիստոնեական արարողակարգային իրողություններին. սգո երթ, խորհրդանիշ գանգեր, ինչպես նաև անսպասելի, բայց խոսուն ավարտ, դեպի դրամատուրգիական գագաթնակետ տանող լարված հնչյունային հոսք: Ասես պատարագի սկիզբը խորհրդանշող շարականի հանդարտ չափավորված ընթացքով է սկսվում այս գործը՝ լարայինների մուտքով, աստիճանաբար հագնելով նոր գործիքային շերտերով, հարվածայինների՝ ծնծղանների, ափսեների, տիմպանների դիթմական հաստատուն հարվածներով:

Ներքին ալեկոծություններով զարգացող այդ երթը հասնում է իր դրամատիկ կուլմինացիային՝ սուր և դիսոնանս ակորդի: Դրամատուրգիական գաղափարն էլ ավելի նշանակալի դարձնելու նպատակով՝ Սարգսյանը երկրորդ անգամ այդ հզոր համազարկը հնչեցնում է երկկողմանի պաուզաներով տարանջատված տարածության մեջ, որպես Տերտերյանի հոգևոր ստեղծագործական ուժն ու հավերժ ներկայությունը մարմնավորող խորհրդանիշներ:

Սակայն առաջնային նշանակության հուզական ազդակներից վերաժշտության հավերժության, մարդկային հոգու և մտքի վրա ունե-

Ի ՀԻՇԱՏԱԿ

27

Musical score for measures 27-30 and the first four measures of the second system. The score includes staves for V-ni I, V-ni II, V-le, C-lli, and C-b. The key signature is one sharp (F#) and the time signature is 4/4. A first ending bracket with a repeat sign and a fermata above it spans measures 27-30. The dynamics are marked *fff* for measures 27-30. The C-lli staff has *div.* markings above measures 28 and 29. The C-b staff has *fff* markings below measures 27-30.

Musical score for measures 31-34 of the second system. The staves are V-ni I, V-ni II, V-le, C-lli, C-b, and C-ne. The key signature is one sharp (F#) and the time signature is 4/4. The dynamics are marked *ff* for measures 31-34. The C-ne staff has a fermata above measure 34.

ցած ազդեցության գաղափարներն են, որ ամեն մի երաժշտական նվիրումում կենտրոնանում ու մարմնավորվում են տվյալ անհատականությանը բնորոշ երաժշտական մոտիվների և մեջբերումների ուղեկցությամբ: Դրանք հրաժեշտի խոսքեր են հոգեհարազատ անձանց:

Հոգեբանական-զգացմունքային առանձնահատուկ կնիք ունի «Հրաժեշտ»-ը («Прощание») դաշնամուրի և կամերային անսամբլի համար (2011)¹¹⁰ նվիրված լուսավոր ու ինքնատիպ անձնավորության՝ երաժշտագետ Իրինա Տիգրանովային: Կոմպոզիտորին բնորոշ քնարական, մեղեդային խոսքն է իշխում Ավետ Տերտերյանի կնոջ մահվան կապակցությամբ ստեղծված, ներքին կոնտրաստներով և էքսպրեսիվ շերտերով լի դրամատիկ այս երկում: «Հրաժեշտ»-ի իմպրեսիոնիստական գունային-հնչյունային հատվածների ու մեղեդային վառ գծերին զուգահեռ կարևոր գործառույթով են օժտված ընդհատումները, խոսուն դադարների՝ լռության իմաստավորումով:

2002 թ. երաժշտական հանրությունը հրաժեշտ է տալիս հայ երաժշտարվեստի անվանի ներկայացուցիչներից մեկին՝ կոմպոզիտոր, պաշտելի մանկավարժ Ղազարոս Սարյանին, որի ստեղծագործական դասարանում էր ուսանել, ինչպես ասվել է, Ռուբեն Սարգսյանը: Իր նվիրումն ուսուցչին Ռուբենն անվանել է «Մտորում» («Cogitation»), որ թավջութակի և լարային նվագախմբի համար գրված մոայլ ու լուսավոր մտքերով պարուրված դրամատիկ ստեղծագործություն է: Այն ելևէջային հստակ կապեր ունի Սարգսյանի դաշնամուրային տրիոյի հետ (1984)¹¹⁰: Ընդհանրապես թավջութակի համար գրված գործերում կամ թավջութակի մենակատարային դրվագների մեկնաբանություններում հեղինակը, ասես, նույնանում է գործիքին և վերջինիս հնչողությամբ անկաշկանդ ինքնարտահայտվում իր հոգևոր ներաշխարհին բնորոշ մեղեդային դինամիկ պատկերավոր լեզվով:

Փոքր-ինչ շեղվելով նվիրումներից, նշեմ նաև, որ Ռ. Սարգսյանի գործիքային նախասիրությունների շրջանակում է նաև ֆլեյտան, որի մասնակցությամբ գրվել են մի շարք հետաքրքիր ստեղծագործություններ՝ «Ներսես Շնորհալի» պոեմը (ֆլեյտա և դաշնամուր), «Էլեգիա»-ն (ֆլեյտա և լարային նվագախումբ), «Կանչիր գարունը» (ֆլեյտա և կամերային նվագախումբ), սոնատը ֆլեյտայի և դաշնամուրի համար,

¹¹⁰ Առաջին անգամ այն հնչել է Կոմպոզիտորների միության կազմակերպած Ռուբեն Սարգսյանի հեղինակային համերգի ժամանակ՝ թավջութակահար Լևոն Առաքելյանի և լարային կվինտետի կատարմամբ: 2006 թ. «Մտորում»-ը կատարել են Արամ Թալալյանի ղեկավարած լարային նվագախումբն ու Լևոն Առաքելյանը:

ՄՏՈՐՈՒՄ
Ղազարոս Սարյանի հիշատակին

The image displays two systems of a musical score. The first system includes staves for Violin I (V-ni I), Violin II (V-ni II), Viola (V-le), Cello (C-lli), and Bass. The Violin I part begins with a melodic line, marked with a piano (*p*) dynamic, followed by a mezzo-forte (*mf*) section. The other instruments provide harmonic support. The second system continues the Violin I part with a more complex melodic line, marked with mezzo-forte (*mf*) and sforzando (*sf*) dynamics. The other instruments remain mostly silent or play simple accompaniment.

Շոտակոպիչին նվիրված Տրիոն (Ֆլեյտա, դաշնամուր, մագնիտաֆոնային ձայնագրություն) և այլն:

Ղազարոս Սարյանին ուղղված մտորումներում արձագանքներ կան նաև իր ուսուցչի ուսուցչին՝ Շոտակոպիչին, նրա մոայլ ու անհատականացված մոտիվային դարձվածքների զարգացման տրամաբանության, կլասիզիցմի և ռոմանտիզմի հանդեպ ունեցած համակրանքի, ինչպես նաև այլ կոմպոզիտորների ստեղծագործություններին բնորոշ տարրերի խորհրդանշական կիրառությունների իմաստով:

Հայտնի է, որ Շոստակովիչը լայնորեն օգտագործում էր ժողովրդական, դասական ու ռոմանտիկական երաժշտությունից քաղված տարրերը, և դրանց իմաստային ու ելևէջային ակնարկներով ստեղծում էր իր ինքնատիպ ու նորարարական մտահղացումները: Երևույթը հետևորդներ ու ընդօրինակողներ ուներ, ինչպես նշվել է, ոչ միայն նրա անմիջական աշակերտների, այլև օտարազգի երաժիշտների շրջանակներում, ինչպես նաև առիթ էր տալիս տարամետ մեկնությունների: Ռ. Տարուսկինը գտնում է, որ XX դարի ամենաշատ կատարվող կոմպոզիտորն այդպիսի ճանաչում ձեռք չէր բերի, եթե չօգտագործեր նմանօրինակ տարրեր, որոնք ծանոթ էին շատերին: Դավիդ Ֆանինգը՝ Շոստակովիչի երաժշտության հայտնի մասնագետ, X Սիմֆոնիայի տեքստում ակնարկների ու հղումների մի ամբողջ ցուցասրահ է ներկայացրել, որում տեղ են գտել Բրամսը, Լիստը, Մուսորգսկին, Չայկովսկին, Մալերը, Բեռլիոզը, Բիզեն և Մոցարտը. բնականաբար, ամեն մեկն իր հուզական-ֆունկցիոնալ նշանակությամբ կամ անմեկնելի պատճառահետևանքային կապերով¹¹¹:

Սարգսյանի «Մտորումը» կենտրոնացած է իր մեծ ուսուցիչ Ղազարոս Սարյանի՝ դասականից ավանգարդ ընդգրկող երաժշտական լայն մտահորիզոնին բնորոշ դինամիկ և տեմբրային հակադրությունների ինքնատիպ դրսևորումների վրա: Այն սկսվում է թավջութակի խոհափիլիսոփայական մեղեդային մենախոսությամբ, որի հանդարտ տոնայնությունը պարբերաբար խախտվում է հուսահատության, ցավի և բողոքի պոռթկումներով: Դրանցով է մոդելավորվում այս ինքնատիպ խոստովանանք-մենախոսության իմաստային հենքը՝ դասական երաժշտաոճի արտահայտչականության սահմաններում:

Այստեղ տրված չէ Սարյանի կերպարը մարմնավորող սիմվոլիկ և հատու վրձնահարվածը, ինչպես Տերտերյանին ճոնած նվիրումում, սակայն թավջութակի վերասլաց դարձվածքների հարցական բնույթը և դրանց անպատասխան կրկնությունները՝ վարընթաց մարող հնչյունների խորհրդանշական գործառույթով, յուրովի անհատականացված կերպարային ակնարկներ են:

«Կվարտետ-էպիլոգը» (2013)¹¹² նվիրված էդվարդ Միրզոյանի հիշատակին, կոմպոզիտորի վերջին գործն է: Ռ. Սարգսյանի հիշատակին նվիրված համերգ-երեկոյի ներածական խոսքում կոմպոզիտորի կինը՝ Իրինա Ջոլոտովան, երկմտում է՝ արդյո՞ք Ռուբենը կանխագագեղ է կյանքի

¹¹¹ D. Fanning. The Breath of the Symphonist: Shostakovich's Tenth, 1989, Appendix 2 (Thematic Allusion in the Tenth Symphony), Royal Musical Association. London, p. 79-80.

ԷՊԻԼՈԳ

ավարտը. «...սա ողբ է, ողբասացություն՝ լուսավոր ընդմիջարկումներով»: Խոր դրամատիզմով, երաժշտական ռեմինիսցենցիաներով, դասական, ժողովրդական ու հոգևոր շերտերի զուգորդումներով լի երաժշտական խոսքն իր հստակ մտքով ղեկավարում է Սարգսյանը:

Սարգսյանի երաժշտության կերպարային հուզականությունն այնքան տպավորիչ է, որ նրա անձի, թե ոգու ներկայությունը, ասես, շոշափելի են: Ակամայից դառնում ես այդ վերապրումի մասնակիցը: Ազգային երանգավորումով սինկոպային ռիթմական դարձվածքների տարբերակային կրկնությունները հոգևոր ողբերգական շերտի վրա են զարգանում: «Էպիլոգը» խոր հուզմունքներ է առաջացնում և գրավում դասական մտածողությունն ու սոնատային ձևը խախտող հետաքրքիր լուծումներով, մարող գլխանդների բազմանշանակ կիրառություններով: Պարբերաբար հնչող ցայտուն թեմատիկ մոտիվի հնչյունային-կերպարային փոխակերպումների գազաթնակետերում ակնարկներ

կան Էդվարդ Միրզոյանի Սիմֆոնիային, ազգային երաժշտության և կոմիտասյան ավանդույթների նրա լայնախոհ ու կենսահաստատ դասականության դրսևորումներին: Այստեղ և Կոմիտասի կերպարն է ծառանում, և Միրզոյանի: Եվ այս համատեքստում դարձյալ լռությունն ու մտքի դադարներն առանձնահատուկ խորհուրդ ունեն: Ստեղծագործության հիմքում ընկած են երկու թեմատիկ տրամադրություն՝ խոր վիշտ և հաստատուն կամք ու անպարտելիություն, որոնց փոխընդմիջվող պայքարում անէանում ու կրկին հառնում են մերթ մեկը, մեկ՝ մյուսը: Ողբի և հույսի, վշտի ու լույսի պարբերական ընդհատումները կոմպոզիտորի դրամատիկ մտածողության քանիցս նշված հատկանշական սկզբունքերից են, որ աստիճանական լարվածության ընթացքով չեն ապահովվում, այլ ձեռք են բերվում մտքի և տրամադրության հակադրումներով, միմյանց հաջորդող մոտիվային խտացումների փոխարկումներով, գործիքներին հատկացված անհատական հնչերանգներով ու դերերով: Թեմատիկ-էմոցիոնալ կոնտրաստները հոգեկան խռովքի տևական վիճակ են ստեղծում: «Էպիլոգի» սկզբնական մասում հնչած հակիրճ տերցիային դարձվածքների ևս մեկ խորհրդանշական հիշեցումով եզրափակվում է երկը՝ դառնալով նաև Ռուբեն Սարգսյանի երկրային կյանքի վերջին երաժշտական խոսքը:

ԳԼՈՒԽ VII

ԺԱՄԱՆԱԿԸ ԵՎ «ՍԵՎ ՊԱՐԱՀԱՆԴԵՍ»-Ը

Հետադարձ հայացք նետելով Ռուբեն Սարգսյանի կյանքի վերջին տարիներին գրված երկերին, կարելի է ասել, որ դրանցից շատերը կրում են ճակատագրական իրադարձությունների կանխազգացումների կնիքը: Կոմպոզիտորի հոգևոր հենարանների ու դասական արժեքների խախտված հիմքերը, ասես, խորացնում են նրա ներքին բողբոջ իրականության, գեղարվեստական-գեղագիտական անընդունելի չափանիշների հանդեպ: Թերևս, այս բարդ ու հակասական երևույթներին, արվեստագետի և ժամանակի իրականության միջև ծառայած պատնեշներին առնչվող մտքերն են պայմանավորել նրա «Սև պարահանդես» անվանված ստեղծագործության երաժշտական դրամատուրգիան ու լեզվաոճը:

«Սև պարահանդես»-ը (2010)՝ գրված Պանի ֆելետայի, զուռնայի և կամերային անսամբլի համար, կոմպոզիտորի չինչած ու չկատարված ստեղծագործությունների շարքին է պատկանում և, բնականաբար, որևէ անդրադարձ չի ստացել մամուլում: Այն ժամանակի և իրականության հնչյունային կերպավորումն է՝ հոռետեսական տրամադրություններով, սարկազմով և անորոշ ավարտով: Ժամանակակից գրելաոճով, հնչյունային քառտիկ ոլորտների բազմաշերտ հյուսվածքում, գլիսանդոների գործառույթի ընդարձակ տարածքում առանձնանում է զուռնայի մենանվագը՝ ռեպետիտիվ-սեկվենցիոն դարձվածքներով, ասես, ընդհանուր պոլիֆոնիկ դաշտում ցուցադրելով ժողովրդական նվագածուի կերպարը: Տարբեր գործիքային-տեմբրային ընդգծումներով, տոնայնական մտածողության սահմաններում միևնույն մեղեդային մոտիվը հնչում է բազմակի տարբերակումներով: Կոմպոզիտորը, կարծես, նայում է ժամանակի թատերաբեմին, ուղղորդում մենակատար-դերակատարների գործիքային մուտքերը՝ դասական ելևէջային մարմնավորումներով, պարահանդեսային վալսի պտույտներով՝ զուգորդված իրեն բնորոշ լեյտինտոնացիաներով, զավեշտի ենթատեքս-

P.P.
od Zurna

Dr.set

Vln. I

Vln. II

Vlc.

Vc.

P.P.
od Zurna

fff

Dr.set

Vln. I

Vln. II

Vlc.

Vc.

տով, զուռնա-նվագով, որոնց մեջընդմիջումները լարվածության և ահագնացող վտանգի մթնոլորտ են ստեղծում, մասնավորապես Funebre նշումով առանձնացող դրվագում: Մասսայական այս տեսարանի ավարտին հնչում են այդ զավեշտն ամփոփող պաշտոնական ծափահարությունների ընդօրինակումները, որոնց հաջորդում են ազգային օրհներգի աղճատված մոտիվային ակնարկները, կարծես, ավետելով Պարահանդեսի ավարտը:

Սակայն այն ունի էլ ավելի մռայլ շարունակություն՝ ամորֆ հնչյունային ոլորտում, որպես հեղինակի զգացողությունների և չկարգավորվող երևույթների արգասիք: Զուռնան՝ իբրև գաղափարական խորհրդա-

նիշ, հանդես է գալիս ազգային օրհներգի ձևափոխված ելևէջներին զուգահեռ: Մոտիվային տարրերի բազմահնար կոնտրապունկտային իմիտացիոն զարգացումների լարված ֆոնին բյուրեղանում են Քոչարիի կերպափոխված մոտիվներն ու ռիթմերը՝ կոմպոզիտորի ծանր լեյտինտոնացիաներին զուգահեռ:

non legato, declamazione

Այսօրինակ տարասեռ ու տարաճ միավորումները տարածականության պատրանք են ստեղծում, և նվագախումբը մեկնաբանվում է ոչ թե որպես բազմատարր հնչյունային-կերպարային աղբյուրների միասնական հարթակ, այլ յուրաքանչյուր գործիք կամ գործիքախումբ իրականացնում է իրեն հատկացված անկախ և անհատական գործառույթը: Պարահանդեսն ունի իր հստակ առանձնացված համատեքստերը և այդ հատվածային-տարածական ու ժամանակային բազմալանայնությունը, որ առկա է կոմպոզիտորի տարբեր երկերում, այստեղ առանձնապես վառ է արտահայտված: Տարածության մեջ կրկնվող մոտիվների սեկվելցիոն անցկացումները բազմաշերտ հյուսվածքում՝ նույնքան բնորոշ կոմպոզիտորի տեխնիկային, զերակշռորեն հարմունիկ-տոնայնական բնույթ ունեն: Ինչպես այլ գործերում, այստեղ ևս առկա է ֆրագմենտայնությունը՝ հատվածական համադրումների սկզբունքը: Տարածական այդ անջատվածության ու բազմաչափության պայմաններում է ընթանում Պարահանդեսը՝ իր անհատականացված երաժշտական բեմի վիզուալ պատկերավորությամբ:

P.P.
od. Zurna

Tr-ba pic.
in B

Vln. I
pizz.
p

Vln. II
p

Vcl.
div. I, II

Vc.
div. I, II

Cb.

Նման հետաքրքիր ստեղծագործական մտահղացման իմ այս մեկնաբանությունը, անշուշտ, խնդրահարույց կարող է թվալ. չկան ծրագրային հուշումներ, չկան առանձնացված մասեր, սակայն «Սև պարահանդես»-ի ենթատեսուղը և կիրառված ռոմանտիկ-անձնական, դասական, մոդերն լեզվաոճն ու ազգային ինտոնացիայի գաղափարական լիցքերը և տեխնիկական հնարների բազմազանությունը որոշակի մտազուգորդումների առիթ են տալիս: Մասնավորապես, Քոչարիի կրկնվող ռիթմական-մոտիվային դարձվածքները, որ սկսվում են զուռնայի ծակող տեմբրով, հարվածայինների ընդհանուր աղմուկի և լարայինների գլիսանդոնների ֆոնի վրա, ժողովրդական էջֆորիայի աղետալի վախճան են ակնարկում:

Vln. I

Vln. II

Vln. I

Vln. II

Glissando

Glissando

p

pp

pp

Ձուռնայի նվազամասի գործառույթը որոշակիորեն կապվում է նաև ծիսական պարային տեսարանի հետ: Անհանգիստ և լարված մթնոլորտում հնչող Քոչարիի ակնարկներն արտացոլում են իրականության այլ ընկալումը, որ պարբերաբար ընդհատվում է հեղինակային-նոմանտիկ ռեպիկներով, լուսավոր տրամադրություններով: Հախուռն բազմատարր միջավայրում էկլեկտիկ լեզվամթերքն ու բազմաոճ տարրերը՝ ստվերելով անձնական պոթելումները, միտված են բարդ իրողությունների ներկայացմանը: Ձուռնայի մենանվագը պարահանդեսային պերսոնաժ է կերպավորում: Օրգիաստիկ Պարահանդեսի ամեն մի կերպար օժտված է տեմբրային ինտոնացիոն անհատականությամբ. պտույտներն անվերջ են՝ նոր մուտքերով, ազգային ելևէջների բազմանշանակ կիրառություններով, տրոմբոնների և տուբայի չարագուշակ հնչողություններով:

«Սև պարահանդես»-ը, ավելի, քան մյուս՝ հոռետեսական տրամադրություններ և համապատասխան վերնագրեր կրող երկերը, ստիպում է խորհել կոմպոզիտորին մտահոգող երևույթների և ժամանակի երաժշտական համատեքստի մեկնաբանության շուրջ: Այս գրքի էջերում մեկ անգամ չէ, որ անդրադարձել եմ սարկազմն ու գրոտեսկը երաժշտաարտահայտչական միջոցներով վերարտադրելու Սարգսյանի վարպետությանը: Եվ երբ այդ սարկազմը նաև կոմպոզիտորի եսի, նրա ինքնադրսևորման ու խոսքի բնական-բնութագրական հատկանիշներից է, ապա «Սև պարահանդես»-ի այս մեկնությունը հնարավոր-հավանական տարբերակ կարող է դիտվել:

ՎԵՐՋԱԲԱՆ

Այս երաժշտագիտական «նվիրումը» Ռուբեն Սարգսյանի երաժշտական աշխարհի ռոմանտիկ և դրամատիկ, լուսավոր ու մռայլ էջերին ստեղծվել է կոմպոզիտորի ստեղծագործական ժառանգությունն արժևորելու, նրա գաղափարական ծրագրերում լսելի ժամանակի և արվեստագետի հարաբերությունների բարդ ենթատեքստը գեղագիտական ըմբռնումներով հիմնավորելու, ժամանակակից երաժշտարվեստի բազմաոճ գեղարվեստական հոսանքների հորձանուտում կոմպոզիտորի արվեստագիտական ինքնությունը ներկայացնելու ցանկությամբ:

Հետևել կոմպոզիտորի ինքնատիպ մտահղացումներում արտացոլված «Նոր երաժշտության» զանազան ուղղությունների, հաղորդակից գեղարվեստական երևույթների փոխներթափանցումների և արվեստագիտական համակրանքների դրսևորումներին՝ նշանակում է առնչվել երաժշտական ժամանակի ու քաղաքական, սոցիալ-մշակութային իրողությունների փոխհարաբերություններին: Եվ այդ համատեքստում ցանկացած դիտարկում, զուգահեռում կամ մտազուգորդում, որ միտված է ստեղծագործական գաղափարի խորքային շերտերի ըմբռնմանը, կարող է հարցեր առաջադրել, ժխտվել կամ ընդունվել՝ ելնելով անհատական տպավորությունների ու տեխնիկական հնարանքների, ոճական-կառուցվածքային, հնչյունային-տեմբրային գործառությունների անսահման բազմազանությունից ու դրանց զուգորդված կամ տարրալուծված կիրառություններից:

Ռուբեն Սարգսյանը XX դ. 70-ականներին ասպարեզ եկած կոմպոզիտորների աստղաբույլի վառ դեմքերից մեկն էր, որի ստեղծագործությունը հայ ժամանակակից երաժշտությունը հարստացրեց քնարական, խոհափիլիսոփայական նոր շերտերով, ժամանակի ոգին արտացոլող տրամադրություններով, ազգային ավանդույթի և արևմտյան երաժշտության նորարարական միտումների ներդաշնակ մարմնավորումներով: Ազգային ու համամարդկային արժեքների երկխոսության նոր վերելք նշանավորող այդ սերնդի ստեղծագործությունը հայկականության ինքնօրինակ չափանիշներ հաստատեց ազգային երաժշտարվեստում:

Ռուբեն Սարգսյանի ստեղծագործական երևակայությունը լիցքավորող ոլորտները բազմազան էին: Տիեզերքի, երաժշտության և գիտության անհիմանալի հարաբերությունները, իր խոստովանությամբ, ավելոծում էին նրա արվեստագիտական էությունը, մղում ինքնարտահայտումների անսովոր ձևերի ու երաժշտադրամատուրգիական լուծումների:

Սարգսյանի սիմֆոնիաները, կոնցերտները, նվիրումները, իր ժամանակակցին հասցեագրված երաժշտական ուղերձներն ու այլևայլ ինքնատիպ երկերը մնայուն արժեքներ են՝ նրա և ժամանակի փոխհարաբերության գեղարվեստական վերապրումների ասպարեզում:

Կոմպոզիտորի բազմանիստ խառնվածքի բնութագրական արտացոլումներից են դաշնամուրի և լարայինների համար գրված Ռապսոդիան՝ շեշտված վերադարձով դեպի ռոմանտիզմի արտահայտչամիջոցները, Տրիոն դաշնամուրի, ջութակի և թավջութակի համար՝ խորհրդանիշ-դարձվածքի դրամատիկ բացահայտումներով, «Լեգենդի մահը» դաշնամուրային պիեսը՝ Շալախո պարի թեմայով գրված ռոնդո վարիացիան, որ ստիպում է խորհել ազգային ոգու արտահայտչական ուժի, ինչպես նաև ազգային ավանդույթի օտարման երևույթի հեգնախառն մեկնության շուրջ: Հեգնանքը, որ կոմպոզիտորի խոսքի, մտքի և զգացմունքների տիպական ռճական արտահայտչամիջոցներից է, խորագրի աստիճանի է բարձրացվել «Ironica» սիմֆոնիայում:

Ռուբեն Սարգսյանն իր ոչ ավանդական, սակայն մեղեդիաստեղծ լիցքեր պարունակող մտածողությամբ, ակադեմիական «բարձր» էլիտար և «թեթև» մասսայական արվեստի ելևէջումների նպատակամետ զուգորդումներով ընդվզել է նաև տեխնոլոգիական նորամուծությունների ֆետիշացման՝ որպես «մշակութային ներփակ երևույթի» հիմնավորումների դեմ: Խոսուն վկայություններից է «Պատարագ ուրվականի համար» կամերային ստեղծագործության մեջ ոչ ակադեմիական, ավտերնատիվ մշակույթի սիմվոլներից մեկի՝ Բիթլզի «Yesterday» հանրահայտ երգի ներմուծումը, բազմանշան հարասացություններով:

Կոմպոզիտորի երաժշտաարտահայտչական սկզբունքների, գեղագիտական ընկալումների տպավորիչ դրսևորումները և ժամանակակից են, և տարբերվում են Արևմուտքի ժամանակակցության պատկերացումներից ու չափանիշներից: Դրանք հեռու են տեխնոլոգիական կոնցեպցիաների բացարձակացումից, նորարարություն նշանավորող երևույթներից ու փորձարարություններից, որպիսին է նրա ստեղծա-

գործական միտքը արգասավորած, ժամանակի երաժշտական ընթացքը բեկած և արվեստագիտական նոր ուղիներ հարթած ֆենոմենների՝ Մալերի, Շյոնբերգի, Շոստակովիչի, Բարտոկի երաժշտությունը:

Կոմպոզիտորը բնավ չի ձգտել իր հոգևոր-ստեղծագործական փարոսների նմանակմանը և չի հավակնել մեծություն երևալուն: Իր ստեղծած երաժշտական աշխարհում Սարգսյանը հեղինակային լեզվաոճ է ձևավորել, որը համահունչ է ժամանակի երաժշտական լեզվին: Այդ լեզվի առանձին նշույթներն առկա են նրա տարբեր գործերում՝ որպես ինքնահղումներ, թեև հստակ հնչյունային բանաձևում չեն ստացել: Դրանք առավելապես կոդավորված ելևէջային դարձվածքների հիշեցումներ են՝ առանց հետևողական զարգացման: Սակայն ամբողջական կառույցի մակարդակում նման դարձվածքներն իրենց առկայությամբ դրամատուրգիական մեթոդի նշանակություն են ձեռք բերում:

Ռուբեն Սարգսյանի ստեղծագործություններն ընկալվում և մեկնաբանվում են անցյալի ու ներկայի մշակութային ժառանգության տարբեր աղբյուրների հետ ունեցած շփումներում: Վաղ շրջանի նշանակալի երկերում՝ «Ներսես Շնորհալի» պոեմում, թավջութակի և դաշնամուրի Սոնատում, «Այդպես է եղել» կանտատում, այն է՝ միջնադարյան հոգևոր մոնոդիկ լեզվամտածողության տիրապետման և վերամեկնաբանման փուլում, կոմպոզիտորը հետամուտ էր շարականի ու ավանգարդի, միջնադարի և մոդեռնի հնչյունային ոլորտների բազմազան զուգորդումներին ու համադրումներին, «հոգևոր լույսի» գաղափարը՝ հոգևոր կոլաժը ներմուծելով սերիային, ավետարիկ տեխնիկական հնարներով հագեցած կտավներում:

Հայկական միջնադարյան մոնոդիան և Կոմիտասի երաժշտության ժողովրդական ու հոգևոր շերտերը՝ որպես ազգային մշակույթի վերածննդի հենարաններ, եղել են Սարգսյանի ստեղծագործական մտահղացումների կարևոր առանցքները՝ հավերժական արժեքների խորհրդով:

Ներսես Շնորհալու ստեղծագործությամբ միջնորդավորված մերձեցումը միջնադարյան երաժշտարվեստի հոգևոր գաղափարական ոլորտներին, մոդալ և կառուցվածքային օրինաչափությունների հիմքերին, որոշիչ դեր են խաղացել նաև կոմպոզիտորի մեղեդային դարձվածաբանության, տարածական ու տեմբրային դրամատուրգիայի առանձնահատկություններում:

Մի շարք երկերում կոմպոզիտորը փորձարկում է իր թատերական մտածողությունը՝ տեմբրային-գունային տեխնիկայի և դեկլամացիայի

զուգորդումներով («Ներսես Շնորհալի» պոեմը, «Մայակովսկու սերը» շարքը), ցուցադրելով «գործիքային թատրոնի» իր ըմբռնումները: Պատկերավոր-տեսողական վառ մտազուգորդումներ է առաջացնում, հատկապես, «Chronicle» №3 սիմֆոնիան, որի «էպիկական» կառույցում զգալի են Ավետ Տերտերյանի հարվածայինների նշանային արձագանքները՝ եկեղեցական զանգերի խորհրդանշական առկայության, ժամանակի թեմայի նմանակումների մթնոլորտում:

XXI դարասկզբի առաջին տասնամյակում գրված գործերում արդեն հստակ արտացոլված են ժանր-ձև-գաղափար միասնության հեղինակային հակիրճ մեկնաբանության սկզբունքները: Ավանգարդի հրապուրանքներից, մոդեռնիզմի հետ ունեցած անմիջական շփումներից հետո Ռուբեն Սարգսյանը հակվում է հարաբերականորեն պահպանողական կամ չափավոր մոդեռն ոճին, խուսափում նաև ուղիղ մեջբերումների սկզբունքից:

Կոմպոզիտորի ստեղծագործական ժառանգության քննության ժամանակ հիշատակված բոլոր «իզմերը»՝ նեոռոմանտիզմ, նեոկլասիցիզմ, էքսպրեսիոնիզմ, որոշակիորեն պայմանական բնույթ են կրում և չեն հանգեցնում որևէ ուղղության անվերապահ հետևորդ լինելուն: Այդ «իզմերին» բնորոշ սկզբունքներն ու բնութագրական տարրերը՝ արտահայտված տարբեր ժանրերում, նրա երաժշտական գաղափարների իրականացման նախընտրելի կոմպոզիցիոն են: Այսուհանդերձ, իր ներաշխարհի հուզական ինտելեկտուալ էությանը և ստեղծագործական երևակայության բազմապիսի դրսևորումներում նա «մերժված» մեղեդին յուրովի արժևորող նեոռոմանտիկ է: Այդ են վկայում ամեն մի երկում ամփոփված միտքն ու մեղեդային նյութը, որոնցով նրա ասելիքը տարբերվում է իր ժամանակակիցների գործերից:

Սարգսյանի երկերից շատերը բազմախորհուրդ վերնագրեր ունեն՝ իրենց ներքին ծրագրային մեկնակերպով: Այդպիսիք են «Իմ ժամանակակցին» խորագիրը կրող շարքում միավորված չորս երաժշտադրամատիկ էսեսները՝ «Դեր-Չորը վերապրածի խոստովանանքը», «Ինչ որ մնաց», «Ի շրջանս յուր», «Պատարագ ուրվականի համար»: Այս տարողունակ ուղերձն իր ժամանակակցին արդեն իսկ ժամանակի և արվեստագետի բարդ փոխհարաբերությունների արտացոլմաներից է, որ Սարգսյանը դարերի շրջադարձին գեղարվեստական ընդհանրացման նոր ուժով, հուզական-հոգեբանական կուտակումների նոր բարձունքից է իրականացրել:

Հնչյունային շերտերի տեղաշարժերը՝ որպես դրամատուրգիական սկզբունքներ, «Իմ ժամանակակցին» շարքի ամեն մի երկում փոխկապակցված են ժամանակային տեղաշարժերին՝ երաժշտական լեզվաոճի կտրուկ փոխակերպումներով: Դիսոնանս կլաստերներին հակադրվում են ունիսոն հնչողությունները, տոնայնական և ատոնալ հատվածներով ընդգծվում է ժամանակների տարբերության դրամատիզմը, և գլիսանդոնները, ասես, իրականացնում են ժամանակային իրողությունները միմյանց կամրջելու գործառույթը:

Այս «իդիոմատիկ տարրերի» իմաստային արտահայտչական ներուժը բազմաբնույթ շեշտադրումներով բացահայտված է Ռուբեն Սարգսյանի «Նվիրումներում»՝ արվեստագիտական ակնածանք և համակրանք նշանավորող երաժշտական կտավներում, ծոնված իր որոնումների ուղիները հատող արվեստագետների լուսավոր կերպարներին՝ Կոմիտաս, Շոստակովիչ, Տերտրյան, Սարյան, Միրզոյան ...

«Նվիրումներ»-ի ընձեռած կերպարային, ոճական լայն ասոցիատիվ համատեքստում՝ հոգեբանական-հուզական առաջնային ազդակներից վեր երաժշտության հավերժության գաղափարներն են, լսելի արվեստագետների ներկայությունը խորհրդանշող ակնարկներում կամ լեզվաոճի նրբերանգներում:

Կոմիտասին նվիրված դաշնամուրային յոթ պիեսների շարքում, Սարգսյանը կիրառելով տեխնիկական բազմազան միջոցներ՝ սերիային, պուանտիլիստական, նաև գեղագիտական ինքնատիպ խնդիր է լուծել. ընդհանուր ատոնալ հնչյունային տարածքում կոմիտասյան «Կոունկի» կերպափոխված միկրոտելեչների հետ երկխոսում է նաև կոմպոզիտորը՝ իրեն բնորոշ ռոմանտիկական մոտիվներով: Կոմիտասյան դաշնամուրային երկերի վերապրումով և դրանց նշանային արտացոլումների ոգեղեն լիցքերով ստեղծված այս «Նվիրում»-ն իր հաստատուն տեղն է գրավել հայ դաշնամուրային կատարողական արվեստում:

Ակնարկների, մեջբերումների, փոխառնված երաժշտաոճական տարրերի «վերծանությունը» Ռուբեն Սարգսյանի ստեղծագործություններում երևակում է նրա հոգևոր ստեղծագործական համերաշխությունը Շոստակովիչի դրամատուրգիական սկզբունքներին՝ տարաբնույթ մեկնությունների տեղիք տվող մեջբերումների, խորհրդանիշ-դարձվածքների և ինքնահղումների կիրառություններում: Զութակի առաջին կոնցերտում՝ Բիզեի «Կարմեն» օպերայից քաղված մեղեդային մոտիվի և «Ծիրանի ծառ»-ի ելևէջային համադրումներն են, կամերային

անսամբլի համար գրված «Ինտերմեցցո»-ի սեմանտիկ մեկնության առանցքը «Հաբրբան»-ի և Պատարագի «Սուրբ, Սուրբ» հատվածի հյուսվածքներն են, թավջութակի Կոնցերտ-սիմֆոնիայում՝ կոլաժի տեխնիկայով և սոնորիստական տարրերով հագեցած մթնոլորտում հնչում է Բախի սի-մինոր Մեսսայի խորալը՝ որպես փիլիսոփայական հանդարտության խորհրդանիշ: 3-րդ ջութակի կոնցերտում՝ հայ ավանդական մշակույթում ծիսական խոր արմատներ ունեցող «Լորիկ» պարերգի ելևէջային նմանակումները որոշակիորեն մտազուգորդվում են Արամ Խաչատրյանի Ջութակի կոնցերտի ժանրային, դրամատուրգիական և տեխնիկական լուծումներին: Շարքը կարելի է շարունակել նաև մշակութային տարաբնույթ աղբյուրներից՝ ջազից, ռոքից, գիտաֆանտաստիկ ժանրից ստացած ազդակներով ստեղծված ինքնատիպ երկերով, որպիսին է Հերբերտ Ուելսի «The Invisible Man» վեպի հիման վրա գրված համանուն ռոք-բալետը՝ ժանրի առաջին հայտը հայ պրոֆեսիոնալ երաժշտարվեստում:

Կոմպոզիտորի երաժշտաարտահայտչական բառապաշարը՝ հագեցած տարած գեղարվեստական ակնարկներով, իր խտացված մարմնավորումն է ստացել «Սև պարահանդես» կամերային-գործիքային ստեղծագործության հերմենևտիկ հարացույցում՝ ազգային օրհներգի, պարահանդեսային վալսի, ժողովրդական էյֆորիկ տոնախմբության՝ զուռնա նվագի, Քոչարիի մոտիվների և պաշտոնական ծափահարությունների գրոտեսկային նմանակումների հնչյունային բեմական տարածքում:

Կոմպոզիտորի բազմաոճ և բազմաժանր բեղմնավոր գրիչը, որ երբեմն առիթ է տվել զարմանքի և տարակուսանքի, ուներ իր հեղինակային պատասխանը. «Չէ որ երաժշտություն ստեղծելն իմ կյանքի միակ գործն է...»:

Ռուբեն Սարգսյանի կյանքն ընդհատվեց 2013 թվականի ապրիլի 6-ին՝ անավարտ թողնելով նրա ստեղծագործական ծրագրերի իրականացման երևակայական ուղին: Դժվար է խորքային կապ փնտրել կոմպոզիտորի մոայլ վերնագրեր կրող ստեղծագործությունների («Սև պարահանդես», «Լեզենդի մահը», «Պատարագ ուրվականի համար») և մտքի ուղղվածության միջև, առավել ևս՝ ենթադրել կամ կռահել նույնահուն շարունակություն նաև ապագայում: Ի վերջո, այդ ստեղծագործությունները նախևառաջ որոշակի կառուցվածքներում ամփոփված, ժանրային, ոճական և գործիքային նախապատվություններով իրականացված երաժշտական մտքեր են՝ իր լսողությանն ու հոգու

ծայնին, ժամանակի ոգուն ներդաշնակ լեզվով արտահայտված: Միևնույն կամ տարբեր ստեղծագործություններում կոմպոզիտորը մենախոսում է հակադիր իրականություններում, հարաբերում է իրողություններ, որոնց մեկնաբանությունը՝ սուբյեկտիվ, թե օբյեկտիվ, ժամանակի համատեքստում արվեստագիտական դիրքորոշում է ենթադրում:

Հավերժ հնչող աքսիոմատիկ դրույթը՝ «Երաժշտությունը դուրս է ժամանակից», ևս մեկ անգամ հուշում է, որ կոմպոզիտորի ստեղծագործությունը ոչ միայն իր սերնդի ընկալումներում է իմաստավորվում ու արժևորվում, այլև անցյալի ներկայության և ապագայի երևակայական հատույթներում:

ЛИЛИТ ЕРНДЖАКЯН

МИР РУБЕНА САРГСЯНА:
КОМПОЗИТОР И ВРЕМЯ

РЕЗЮМЕ

Мое исследование – это своего рода музыковедческое «посвящение» Рубену Саргсяну, светлым и мрачным страницам его романтического и вместе с тем драматического музыкального мира. Родилось оно под впечатлением репрезентативного «избранного» музыкального наследия композитора и было обусловлено желанием его эстетического обоснования, «расшифровки» сложного подтекста отношений «музыкант и время», нашедших отражение в его идейных программах; а также стремлением раскрыть музыкальную идентичность Р. Саргсяна в водвороте стилевой полифонии художественных течений.

Проследить многообразные стилевые направления «новой музыки», отраженные в самобытных замыслах композитора, его сопричастность художественным явлениям, а также его музыкальные пристрастия означает постичь взаимосвязь времени и политических и социально-культурных реалий. И в этом контексте любые наблюдения, параллели, сопоставления, сопряженные с пониманием глубинных идейных пластов, могут породить множество вопросов, быть отвергнуты либо приняты, исходя из технического потенциала, безграничного многообразия стилистических, композиционных, звуковых тембровых функциональных преобразований – либо с их применением, либо с их неприятием.

Рубен Саргсян – одна из ярких личностей в созвездии композиторов, заявивших о себе в 70-е годы XX века. Современной армянской музыке он придал неповторимую тональность. Творческие замыслы талантливого композитора находили воплощение в единстве минувшей и настоящей музыкальной культуры – под знаком постижения нового и кредо прошлого. Произведения этого поколения ознаменовали новый

этап в диалоге национальных и мировых ценностей, привнеся в национальное музыкальное искусство самобытные критерии армянского музыкального мышления.

Эстетико-технологическая парадигма новейшей армянской музыки обогатилась примечательными и актуальными для разных национальных композиторских традиций характерными элементами «локального авангарда», постмодернизма или «новой простоты», а также переключаясь с экспериментальным воплощением концепции организации музыкально-звукового пространства. Это та реальность, которая выдвигает необходимость освещения творчества Рубена Саргсяна и композиторов его поколения в рамках как особенностей культурно-идеологической поляризации самого времени, так и преемственности и художественной трактовки национальной музыки.

Творческую фантазию Саргсяна подпитывали самые разнообразные источники. Вселенная-искусство-наука – это, пожалуй, то святое триединство, недостижимая взаимосвязь которого будоражила его музыкальную сущность, заставляя прибегать к использованию необычных форм самовыражения и музыкально-драматических решений.

Композитор творил в разных жанрах: симфонии, концерты, многочисленные камерно-инструментальные произведения, вокальные, фортепианные циклы, детский альбом, рок-балет – все с красноречивыми названиями и являющие собой индивидуальное воплощение духовных идей и тем. Р. Саргсян был и автором музыкальных посвящений, а также адресованных «Моему современнику» посланий и многих других самобытных сочинений.

Характерная многогранная творческая природа композитора нашла отражение в «Рапсодии» (2011) для фортепиано и струнных с подчеркнутым возвращением к романтическим выразительным средствам; в Трио для фортепиано, скрипки и виолончели (1984), в котором идейно-эмоциональная насыщенность драматичной по характеру музыкальной лейттемы ассоциируется с познавательным символом с бесконечно раскрывающимися свойствами; в пьесе для фортепиано «Смерть легенды» (2012) – своеобразной рондо-вариации на тему народного танца «Шалахо», которая наводит на раздумья о выразительной силе национального духа в иронической интерпретации печального явления отчуждения от национальных традиций.

Ирония как типичная грань слова, мысли и эмоций композитора, как выразительное средство стиля и восприятия реальности, нашла яркое воплощение в многозначном контексте Симфонии № 2 «Ironica» (1989).

Нетрадиционное, однако вобравшее в себя мелодические импульсы мышление Р. Саргсяна, с целенаправленными сочетаниями интонаций академического «высокого» элитарного и «легкого» массового искусства, противостояло также фетишизации технологических нововведений как обоснования «замкнутого культурного феномена». Красноречивым свидетельством тому служит введение в камерное произведение «Месса для призрака» всемирно известной песни Битлз «Yesterday» с многозначными коннотациями, в частности в связи с ностальгией по прошлому и неприятием ограничения авангарда.

Яркие музыкально-выразительные принципы и эстетическое мировоззрение Р. Саргсяна, проникнутые современным духом, отличаются от представлений и критериев современности на Западе. Они далеки от абсолютизации технологических концепций и эпатажных изысков-экспериментов. В этом усматривается творческий диалог-перекличка с музыкой знаковой плеяды композиторов-феноменов, тех, кто озарил творческую мысль армянского композитора и сыграл неоценимую роль в процессе формирования его самобытности. Это, несомненно, Малер, Шёнберг, Барток, Шостакович, которые коренным образом изменили музыкальный процесс времени, проложив новые пути в искусстве.

Композитор отнюдь не стремился подражать своим духовно-творческим маякам и не претендовал на подобный высокий статус. В своем музыкальном мире Р. Саргсян выработал, выстрадал свой авторский стиль, который перекликается с музыкальным языком времени. Отдельные элементы этого языка встречаются в разных его произведениях как авторские ссылки, хотя не обрели точной звуковой формулировки. Это преимущественно закодированные дискретные упоминания интонационных фраз без дальнейшего их развития. Однако на уровне всей структуры в целом такого рода фразы приобретают значение драматургического метода.

Произведения Рубена Саргсяна воспринимаются и интерпретируются на фоне разных источников культурного наследия прошлого и настоящего, к которым он обращается. Уже в значительных произведениях раннего периода – в поэме «Нерсес Шнорали» (1975), в Сонате для виолончели и фортепиано (1977), в кантате «Было так» (1975), – на стадии овладения и переосмысления средневекового духовного монодического мышления, композитор, придерживаясь принципа различных сопоставлений в звуковых сферах средневековья и авангарда, вводит идею «духовного света» – духовного коллажа в сочинения, насыщенные серийным, алеаторическим инструментарием.

Средневековая армянская монодия и народная и духовная ипостась музыки Комитаса, как краеугольный камень национального культурного возрождения, являлись основополагающей составляющей творческих замыслов Саргсяна в ракурсе вечных ценностей. Вместе с тем композитор, отступая от традиционных устоев языкового стиля, со своим индивидуальным почерком предстает в многогранном звуковом контексте времени. Он внедряет интонационно-ритмические элементы и тематические фразы духовных или народных образцов, полагаясь на художественный результат их эстетико-смысловых импульсов и тем самым утверждая свое духовно-эмоциональное мировоззрение посредством этих познавательных образов и цитат, символизирующих силу традиций.

На восприятие композитором средневековой музыки оказало влияние творчество Католикоса-реформатора, поэта, музыканта XII века Нерсеса Шнорали. Приобщение к духовно-идейному миру средневекового музыкального искусства, к основам модально-структурных закономерностей сыграло решающую роль в специфике мелодической фразеологии и в пространственно-тембровой драматургии композитора.

В отдельных произведениях Р. Саргсян экспериментирует в плане своего театрального мышления: цветная тембровая техника и декламационные параллели в поэме «Нерсес Шнорали», в цикле «Любовь Маяковского», где он демонстрирует свое видение «инструментального театра». Яркие визуально-образительные ассоциации вызывает, в частности, симфония № 3 «Chronicle» (2003), в «эпической» композиции которой ощутимы знаковые отголоски ударных Авета Тертеряна при имитации времени и символическом звоне церковных колоколов.

В сочинениях, написанных в первом десятилетии XXI века, уже четко отражены авторские принципы интерпретации единства жанра-формы-идеи. После увлечения авангардом, непосредственного общения с модернизмом Рубен Саргсян склоняется к относительно консервативному или умеренно модернистскому стилю, избегая также использования прямых цитат.

Автор прибегает к разнотипным элементам: мотив и остинато, каноническая и алеаторическая фактура, гетерофонное развитие инструментально-тембровых звучаний. При этом он нарушает традиционные представления о жанре, предлагая свои решения расщепленных классических структур.

При рассмотрении творческого наследия Рубена Саргсяна все упомянутые «измы»: неоромантизм, неоклассицизм, экспрессионизм – име-

ют в некотором роде условное значение и не сводятся к безоговорочной приверженности к какому-либо направлению. Свойственные этим «измам» принципы и характерные компоненты, отраженные в произведениях разных жанров, композитор предпочитает реализовывать в своих музыкальных идеях. По его словам, он не выбрал для себя ни одного направления, однако видит определенную связь с неоклассицизмом и экспрессионизмом, и время от времени они вырисовываются в его творчестве. Вместе с тем в силу своей эмоционально-интеллектуальной сущности, характера творческой фантазии Рубен Саргсян-неоромантик верит в возрождение «отверженной» мелодии. Об этом свидетельствует каждое его сочинение, проникнутое идеями и мелодическими интонациями, которые и отличают его от современников.

